ԴՐՈՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



№3(1588) ՕԳՈՍՏՈՍ 2007

ARMENIAN NATIONAL COMMITTEE
OF AMERICA

E.A.F.J.D.

Armenian
stone-crosses
are holy sites –
STOP
destroying
them
DIE TÜRKEI
TRITT DIE RECHTE
DER MINDERHEITEN
MIT DEN FÜßEN
Raffi Berberian
AP-PHOTOLURE

Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



Հարցազրույց

4 Դրօշակի հարցերին պատասխանում է Կիրօ Մանոյեանը

Միջազգային իրաւունք

9 Հայ-Թուրքական իրաւական (de jure) սահմանը

Հասարակութիւն

19 Քաղաքացիական հասարակութիւն

27 Գնոջ երջանկութեան բանաձեւը

Բնագիտական

29 Ինչպիսին է մեր ազգային բնաւորութեան հիւսուածքը

Տեսակէտներ

35 Հրէականութիւնը 21-րդ դարում

Դամոկլեսեան

39 Արշաւոյս Աստուածատրեան

Խմբագրի անկիւն

50 Կանխատեսում եւ կանխորոշում

Նոր գրքեր

51 Հ. Յ. Դաշնակցութեան քննական պատմութիւն
Դրօ

Դրօշակի պատկերասրահ

52 Ռուդոլֆ Խաչատրեան



"Դրօշակ" ամենամսեայ պաշտօնաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
Հիմնադիր՝ ՀՅԴ
Գլխաւոր խմբագիր՝ **Ռուբէն Յովսեփեան**
Խմբագիր՝ Կ.Խանլարեան
Համակարգչային շարուածքը՝ Ս.Խաչատրեանի
Ձեւաւորումը՝ Մ.Յովսեփեանի
Գրանցման վկայական՝ 897
Երեւան,375010,Միհր Մկրտչեան 12/ 1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@ arf.am
Տպագրութիւնը՝ «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ի

" **Droshak**" monthly, ARF dashnaktsoutiun publication
12/ 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@ arf.am
Editor-in-Chef: **Rouben Hovsepian**

Digitized by ARF PR Office

ՀՅ ԼՕՌ

ԲՈՎԱՆԴԱԿ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Որքան էլ ցաւալի լինի, բայց յատկապէս Հայաստանում շրջանառութեան մէջ է դրուել այն թիւր կարծիքը, թէ ՀՅ Դաշնակցութիւնը Հայ Դատի եւ Հայ ազգային ազատագրական պայքարի ուղղութեամբ միայն անելիք ունի:

Անտարակոյս Դաշնակցութիւնը հենց սկզբից նուիրուեց Հայ Ազգային Ազատամարտին: Սակայն նրա նուիրման պատճառները չէին սահմանափակւում նեղ ցանկութիւնների շրջանակներում: «Դաշնակցութիւնը մի քանի անձանց հայրենասիրական ձգտումների արհեստական պտուղը չէ,- գրում էր «Դրօշակը» դեռ 1891 թ.,- այլ ամբողջ ազգի հաստնացած ինքնաճանաչողութեան, կամքի ու վճռի արտայայտութիւն»: Այդ դրոյթից ելնելով՝ Դաշնակցութիւնը իր առջեւ խնդիր դրեց՝ եւ օրհասական կռիւ մղել ինքնապաշտպանութեան ու ազատագրութեան համար, եւ միաժամանակ պայքարել յանուն հայ ժողովրդի բարեկեցութեան եւ զարգացման: Շատերը փորձեցին, սահմանազատումներ մտցնելով «ազգայինի» ու «սոցիալականի» միջեւ, Դաշնակցութեանը մեղադրել մէկի կամ միւսի, կամ էլ երկուսի պարագայում սխալուելու եւ զլանալու մէջ:

Սակայն Դաշնակցութիւնը իր գործով եւ գաղափարախօսութեամբ ազգային ու սոցիալական ազատագրութիւնը, թուրքահայ ու ռուսահայ, արեւմտահայ ու արեւելահայ դատը համարեց եւ դարձրեց մէկ ու անբաժանելի հարց, զուգահեռ եւ անտարանջատելի պայքար: «Դրօշակը» 1892 թ. գրում էր. «Իբրեւ հիմք վերցնել ժամանակին ու տեղին յատուկ այն պայմանները, որոնք համապատասխանելով հասարակական բարօրութեան պահանջներին, նաեւ ընդհանուր կերպով որոշում են մօտիկ ապագան»: Հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի եւ Հայ աշխատաւոր ընդհանրութեան սոցիալական շարժման համատեղման Դաշնակցութեան մօտեցումը օրուայ քաղաքական ուժերի, յատկապէս մարքսեան էսդեկների եւ աջակողմեան «նացիոնալ-դեմոկրատների» կողմից համարուեց «անհասկանալի» եւ անհեթեթ:

Դաշնակցութեանը այսօր եւս չեն ուզում «հասկանալ» նորօրեայ որոշ քաղաքական ուժեր եւ շրջանակներ: Նրանք Դաշնակցութեան քաղաքական բնութագրման բաւականին լուրջ փորձեր են կատարում ներկայումս: Այսպէս՝ «բարի կամեցողութեամբ» ասում են, որ «Դաշնակցութիւնը միայն Հայ Դատի կուսակցութիւն է», «Դաշնակցութիւնը միայն Արցախեան

պայքարի կուսակցութիւն է», «եթէ պէտք լինի ազգային զոհողութեան, ապա նորից դաշնակցականներն են հիմնականում գալու...», ապա չար մտադրութեամբ եզրակացնում, որ «եթէ Դաշնակցութիւնը իշխանութեան գայ, պատերազմ է յայտարարելու Թուրքիային, նորից պատերազմ է հրահրելու Ղարաբաղում» եւ այլն, եւ այլն:

Ահա այն թերի, բայց ոմանց ձեռնտու դերը, որ փորձում են սահմանել ՀՅ Դաշնակցութեան համար:

Բայց իրո՞ք, եթէ Դաշնակցութիւնը պայքարում է Հայ Դատի լուծման ուղղութեամբ, եթէ նա հետամուտ է Արցախի հիմնահարցի հայանպաստ կարգաւորմանը, եթէ նա Միացեալ Հայաստանի նպատակ է հետապնդում, ուրեմն պիտի իշխանութեան չգայ:

Քաղաքական վիթխարի թիւրիմացութիւն կը լինի կարծել, թէ Միացեալ Հայաստանի նպատակն է այն հիմնական խնդիրը, «արատը», որով անհնար կամ էլ «անյարմար» կը լինի Դաշնակցութեան իշխանութեան գալը: Այս իմաստով նշենք մի յոյժ կարեւոր պատմաքաղաքական նախադէպ. գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը իր 1959 թ. ծրագրում (Գոդեսբերգի կուսակցաժողովի կողմից հաստատուած) որպէս «ազգային առաջադրանք» բարձրացնում էր «Միացեալ Գերմանիայի» պահանջը՝ ամրագրելով, որ՝ «Միայն <u>վերամիաւորուած</u> Գերմանիայում է հնարաւոր դառնում ողջ ժողովրդի ազատ ինքնորոշումը՝ պետութեան եւ հասարակութեան ձեւաւորման համար (ընդգծումը մերն է - խմբ.)»: Ինչպէս ազգային ինքնորոշման պահանջով, այնպէս էլ հողային, տարածքային պահանջատիրութեամբ հանդէս եկող գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը, մի ամբողջ երեսնամեայ ժամանակաշրջանում, մինչեւ բեռլինեան պատի փլուզումը (1989 թ.), մի քանի անգամ յաղթանակեց բունդեստագեան ընտրութիւններում ու մի քանի անգամ իշխանութեան գլուխ անցաւ Գերմանիայում, առանց «պատերազմ յայտարարելու» Խորհրդային Միութեանը, եւ միաժամանակ առանց նահանջելու իր պահանջատիրութեան մէջ...

Ուրեմն, որո՞նք են երեւոյթի հիմնական պատճառները:

Դաշնակցութիւնը ձգտում է Հայ ազգի ինտեգրալ ազատագրութեանը, ընդ որում՝ ինչպէս նրա ազգային իրաւունքների լիարժէք վերականգնմանը, այնպէս էլ սոցիալական արդարութեան հաստատմանը: Նա իր այս ձգտումները հիմնաւորելու համար մշակել է ուրոյն գաղափարական, քաղաքական եւ կազմակերպական համակարգ եւ առաջնորդում է դրանով: Համակարգ, որով ՀՅ Դաշնակցութիւնը ձգտում է ազատագրուած աշխատանքի վեհապետութիւն ստեղծելով, հզօր երկիր դարձնել Հայաստանը եւ միեւնոյն ժամանակ չհրաժարուելով Ամբողջական Հայաստանի գաղափարից, հետամուտ է Հայ Դատի արդար լուծմանը: Սոյն ճշմարտութիւնը մղձաւանջային վիճակի է մատնում ոմանց, ովքեր «նպաստաւոր դեր» են փորձում սահմանել Դաշնակցութեան համար, եւ իրենց քաղաքական անմիջական հաշիւներից մեկնած փչացման են ենթարկում մեր ժողովրդի, նոր սերունդների ազգային ռոմանտիզմը:

Շրջանառութեան մէջ դրուող ասոյթներն առերեւոյթ Դաշնակցութեան դէմ պարզ հակաքարոզչութեան ինչեղութիւն են գտնում այսօր, սակայն խորքում Հայաստանեան հանրային կարծիքին աստիճանաբար ներարկում են այն թիւր մտածելակերպը, ըստ որի պետական գործը ղեկավարելու, սոցիալական հիմնահարցերը կանոնակարգելու համար անհրաժեշտ նախապայման է ազգային իդէալներից ու պահանջատիրութիւնից հրաժարուելը:

Դաշնակցութիւնը նման «դերերի սահմանմամբ» չի դադարելու ոչ միայն Հայ Դատի պաշտպան, այլեւ Աշխատանքի Դատի պաշտպան լինելուց, քանզի նա որպէս ազգային, ընկերվարական, ժողովրդավարական եւ յեղափոխական կուսակցութիւն շարունակելու է պայքարը Հայ ազգի բովանդակ շահերի պաշտպանութեան համար :

"Դրօշակ" - ի հարցերին պատասխանում է ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի և քաղաքական հարցերի գրասենեակի պատասխանատու Կիրօ Մանոյեանը

"Դրօշակ"._ – Հայաստանում որոշ չափով տեղեակ են ՀՅԴ Հայ Դատի գրասենեակների գործունէութեան արդիւնքներին: Իսկ բուն գործունէութեանը քչերն են ծանօթ: Էլ չենք խօսում գրեթէ ամէնուր գործող Հայ Դատի յանձնաժողովների մասին: Համոզուած ենք, որ այս ասպարէզում կատարուած աշխատանքների լիարժէք տեղեկատուութիւնը օգտակար կը լինի թէ խնդրին առաւել խորամուխ լինելու եւ թէ Հայ Դատով զբաղուողների թիւը բազմապատկելու առումով:

Կ. Մանոյեան. Մինչեւ Հայ Դատի գրասենեակների եւ յանձնախմբերի գործունէութեանն անդրադառնալը, անհրաժեշտ եմ համարում նախ անդրադառնալ, թէ «Հայ Դատ» ասելով ի՞նչ է հասկանում Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որի հովանու տակ են գործում Հայ Դատի գրասենեակներն ու յանձնախմբերը: Այս բացատրութիւնն անհրաժեշտ եմ համարում նրա համար, որ երբեմն նկատւում է շփոթ. «Հայ Դատ» ասելով, երբեմն հասկացւում է միայն Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարց եւ կամ միայն Թուրքիային ուղղուած հայ ժողովրդի իրաւունքների խնդիր:

«Հայ Դատ» ասելով, Դաշնակցութիւնը, կարճ ասած, հասկանում է ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի կերտում, որտեղ պիտի համախմբուի համայն հայութիւնը: Այս բանաձեւումին Դաշնակցութիւնը հասել է ժամանակի ընթացքին, յատկապէս՝ 1919 թ. մայիսի 28-ից յետոյ, երբ Հայաստանի Հանրապետութիւնը կատարեց Հայաստանի միացման հռչակումը: Իր Ծրագրում Դաշնակցութիւնն այս նպատակը որդեգրել է 1924-ին գումարուած ՀՅԴ 10-րդ Ընդհանուր ժողովի կողմից: Այդ նպատակին հասնելու համար Դաշնակցութիւնը միշտ էլ կենսական է համարել Հայաստանի անկախ պետականութեան առկայութիւնը: Դաշնակցութիւնը գտնում էր եւ գտնում է, որ անկախ Հայաստանի Հանրապետութիւնն է այն վէմը, որի վրայ կարելի է կառուցել միացեալ Հայաստանը: Դաշնակցութիւնը նաեւ որոշել է, որ այդ նպատակին կարելի է հասնել հանգրուաններով, հաշուի առնելով բազմաթիւ ազդակներ՝ միջազգային եւ տարածաշրջանային քաղաքականութիւն, հայկական հողերի վրայ իրավիճակ, հայ ժողովրդի եւ պետութեան կարողականութիւն եւ կազմակերպուածութիւն, եւ այլն:

Այժմ՝ Հայ Դատի յանձնախմբերի եւ գրասենեակների եւ նրանց գործունէութեան մասին: Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացումից յետոյ, Դաշնակցութիւնը քաղաքական մի-

ջազգային շրջանակներում Հայաստանի սահմանների եւ հայ ժողովրդի իրաւունքների հարցերը բարձրացրել է Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան անունից: Այն պատուիրակութեան, որը 1918 թ. նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին նշանակուել էր Հայաստանի Հանրապետութեան խորհուրդի կողմից, Աւետիս Միարոնեանի նախագահութեամբ, եւ որը մասնակցելու էր Հաշտութեան վեհաժողովին, ինչպէս նաեւ այն բոլոր խորհրդաժողովներին ու համագումարներին, որոնք տեղի էին ունենալու Եւրոպայում եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Համաշխարհային երկրորդ պատերազմի աւարտին, Դաշնակցութիւնը միջազգային քաղաքական նոր իրադրութիւնը համարեց նպաստաւոր՝ միջազգային նոր ձեւաւորուող ատեաններում բարձրացնելու Թուրքիայի կողմից բռնագրաւուած հայկական հողերը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու հարցը: Դաշնակցութիւնը ցանկանում էր այս նպատակի շուրջ համախմբել Սփիւռքի բոլոր քաղաքական ուժերին, ինչը սակայն նրան այդ պահին չյաջողուեց: Իսկ այն դէպքում, երբ Խորհրդային Հայաստանը ինքը կը բարձրացնէր այդ հողերի վերադարձի խնդիրը՝ Հայ Դատի յանձնախումբը պէտք է աջակցէր նրան: Սհա այս նպատակով եւ այս պայմաններում, 1944 թ.-ին Դաշնակցութիւնը կազմեց Հայ Դատի յանձնախումբ, որը նաեւ 1945-ին ունեցաւ իր գրասենեակը Նիւ Եորքում, որը ի վերջոյ դառնալու էր Միացեալ Ազգերի կազմակերպութեան (ՄԱԿ) կենտրոնատեղին: Այդ ժամանակ էլ Հայ Դատի յանձնախմբի անգլերէն անուանումն էր Armenian National Committee:

1945 թ. մարտ-ապրիլ ամիսներին, Հայ Դատի յանձնախմբի կողմից յուշագրեր ներկայացուեցին Ամերիկայի Միացեալ Նահանգների, Միացեալ Թագաւորութեան եւ Խորհրդային Միութեան կառավարութիւններին: Յունիսին Հայ Դատի յանձնախումբը Միացեալ Ազգերի Սան Ֆրանցիսկոյի խորհրդաժողովին եւ մասնակից պատուիրակութիւններին ներկայացրեց յուշագիր: Մէկ ամիս անց Սան Ֆրանցիսկոյում նման նախաձեռնութեամբ հանդէս եկաւ նաեւ Ամերիկահայ Ազգային խորհուրդը՝ Ռամկավար-Ազատական, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան եւ Հայ բոլշեւիկեան կուսակցութիւնների միութիւնը: Ինչպէս գրում է Հայաստանի առաջին հանրապետութեան վերջին վարչապետ Սիմոն Վրացեանը՝ «Սան Ֆրանցիսկոյի խորհրդաժողովին ներկայացուած պահանջները հետզհետէ իւրացուեցին նաեւ այլ երկրներում ապրող հայկական զանգուածների կողմից: Հայաստանի ժողովուրդն ու կառավարութիւնը եւս իրենց ձայնը միացրին արտասահմանի հայութեան ձայնին: Էջմիածնի Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամաւորներն էլ հաստատեցին ազգային միահամուռ կամքը Հայ Դատի մասին: Վերջապէս, Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ երեք Մեծերին դիմելով, եւ Հայաստանի կոմունիստական կուսակցութեան քարտուղար Գ. Յարութիւնեանը՝ ճառով, նուիրագործեցին հայութեան պահանջների համազգային բնոյթը»:

Միջազգային քաղաքական կացութիւնը շուտով փոխուեց, սկսուեց Սառը պատերազմը: Խորհրդային Հայաստանն ու Սփիւռքի մէկ կարեւոր մասը յայտնուեցին տարբեր ճամբարներում. Սառը պատերազմի տրամաբանութեամբ պառակտում առաջացաւ հէնց Սփիւռքում: Անցաւ երկու տասնամեակ, Սառը պատերազմը մի քիչ մեղմացաւ, Դաշնակցութեան ղեկավարութիւնը ստանձնեցին Սփիւռքում ծնուած սերունդի ներկայացուցիչներ: Հասաւ Մեծ եղեռնի յիսնամեակը: Անհրաժեշտ էր աշխարհի հետ խօսել իրեն հասկանալի լեզուով: 10-15 տարի էր, որ ի զօրու էր դարձել ՄԱԿ-ի Ցեղասպանութեան կանխարգելման եւ պատժումի կոնվենցիան: Քաղաքականօրէն նպատակայարմար նկատուեց Թուրքիայից հայ ժողովրդի իրաւունքների եւ պահանջների հարցը ներկայացնել ցեղասպանութեան տեսանկիւնից: Երբ աշխարհը ճանաչէր Հայոց ցեղասպանութեան փաստը, այդ ճանաչման տրամաբանական շարունակութիւնը կը լինէր հայոց իրաւունքների հարցը: Այդ ժամանակից էլ սկսուեց Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը, որը սակայն ինքնանպատակ չէր: Երեւանի փողոցներում «մեր հողերը» պահանջող ժողովրդային զանգուածները միաժամանակ եւ արձագանք էին Սփիւռքի ճիգերին, եւ ներշնչման աղբիւր այդ նոյն Սփիւռքին:

Սփիւռքի բոլոր համայնքներում Դաշնակցութիւնը կազմեց Հայ Դատի յանձնախմբեր, որոնք գործում են առ այսօր: Մի շարք քաղաքներում գործում են նաեւ Դաշնակցութեան այդ շրջանների մարմիններին ենթակայ Հայ Դատի գրասենեակներ՝ Գլենդեյլ, Նիւ Եորք, Օտտաւա, Բուենոս Այրես, Թեհրան, Բէյրութ, Հալէպ եւ այլն:

Հայ Դատի Յանձնախմբի Օտտաւայի գրասենեակի բացում,2005թ.

ՀՅԴ Հայ Դատի յանձնախմբերի եւ գրասենեակների առաջադրանքներին մաս են կազմում ոչ միայն Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը, այլ նաեւ Հայաստանին եւ Արցախին վերաբերող խնդիրներ, Ջաւախքի հայութեան իրաւունքների պաշտպանութիւնը եւ այլն:

Վերջին տասնամեակներում, միջազգային քաղաքական կեանքի ամենակարեւոր մայրաքաղաքներում՝ Վաշինգտոն, Մոսկուա եւ Բրիւսել, Դաշնակցութիւնը հաստատել է Հայ Դատի գրասենեակներ, որոնց օտարալեզու անուանումը պատշաճուել է իրենց քաղաքական միջավայրին:

Այս գրասենեակներից առաջինը հաստատուեց 1984 թ., Վաշինգտոնում: Այն առաւելաբար հանդէս է գալիս եւ ճանաչում է որպէս ամերիկահայութեան քաղաքական առաջադրանքներն ու շահերը ամերիկեան քաղաքական շրջանակներում հետապնդող գլխաւոր կառոյց: Ամերիկայի Հայ Դատի յանձնախմբի ու Վաշինգտոնի գրասենեակի աշխատանքների մասին կարելի է շատ երկար խօսել. անհրաժեշտ է շեշտել մէկ կէտ. նրանք գործում են ԱՄՆ-ի բազմաթիւ քաղաքներում ներկայ Հայ Դատի տեղական յանձնախմբերով եւ ժողովրդային խոշոր ցանցով:

Մոսկուայի գրասենեակը հաստատուեց 1993 թ. եւ հիմնականում գործում է որպէս Դաշնակցութեան Բիւրոյի քաղաքական գրասենեակ: Այս գրասենեակի միջոցով նաեւ քաղաքական որոշ աշխատանքներ են տարուում ԱՊՀ անդամ հարեւան երկրներում: Բրիւսելի գրասենեակը հաստատուեց 2002 թ.: Նկատի ունենալով ընդհանրապէս աշխարհում ընթացող գործընթացները, յատկապէս՝ մեր տարածաշրջանի վրայ ազդեցութիւն ունեցող քաղաքական հոլովոյթներն ու նրանց մէջ Եւրոպայի դերակատարութիւնը, անհրաժեշտ էր զարկ տալ Եւրոպայում մեր քաղաքական աշխատանքներին: 1990-ականների կէսերին, գլխաւորաբար ՄԱԿ-ի եւ միջազգային այլ կազմակերպութիւններում Արցախի հարցի պաշտպանութեան նպատակով, ժնեւում հաստատուել էր Հայ Դատի գրասենեակ: Իսկ 2001 թ.-ին Եւրոպայի գրասենեակը ժամանակաւորապէս հաստատուեց Փարիզում, ապա Բրիւսելում, նկատի ունենալով, որ այդ քաղաքում են հաստատուած եւրոպական գլխաւոր կառոյցները: Գրասենեակը եւ Եւրոպայում ՀՅԴ կազմակերպական շրջանների մասնակցութեամբ կազմուած Եւրոպայի Հայ Դատի յանձնախումբը գործում են եւրոպական կառոյցների եւ Եւրոպայում գտնուող միջազգային կազմակերպութիւնների հետ:

2005 թ. օգոստոսի 1-ին Բէյրութում բացուեց Հայ Դատի Մերձաւոր Արեւելքի գրասենեակը: Այն ունի տարածաշրջանային առաքելութիւն, յատկապէս՝ արաբական եւ իսլամական երկրների քաղաքական եւ հասարակական շրջանակներում Հայաստանի, հայութեան եւ հայկական հարցերի նկատմամբ դրական կեցուածք ձեւաւորելու նպատակ:

Եւ վերջապէս, Երեւանում գործում է ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի եւ քաղաքական հարցերի գրասենեակը: Նման գրասենեակ անցեալում գործել է Աթէնքում, երբ քաղաքական արգելքների պատճառով Բիւրոյի նստավայրը տակաւին Երեւանում չէր հաստատուել: Այս գրասենեակի պարտականութիւնն է համադրել Բիւրոյի եւ շրջանների Հայ Դատի գրասենեակների ու յանձնախմբերի աշխատանքները, պահել Բիւրոյի միջազգային յարաբերութիւնները:

Հայ Դատի յանձնախմբի Միջին Արեւելեան գրասենեակի բացումը,2005թ.

Հայ Դատի Յանձնախմբի Եւրոպայի գրասենեակի նախաձեռնութեամբ եւրոպահայութեան առաջին համաժողովը, 2005թ.

"Դրօշակ"._ – Չէ՞ք կարծում, որ նկատելի անհամաչափութիւն գոյութիւն ունի Հայ Դատի ուղղութեամբ տարուող՝ Հայաստանեան եւ Սփիւռքեան աշխատանքներում: Երբեմն այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, թէ Հայ Դատով շահագրգիռ են առաւելապէս սփիւռքահայերը:

Կ. Մանոյեան. – Եթէ կայ այդպիսի տպաւորութիւն, ապա ճիշտ տպաւորութիւն չէ: Յաճախ, Թուրքիան փորձում է այդպիսի տպաւորութիւն ստեղծել: Արդէն ասացի, որ Հայ Դատը միայն Թուրքիայից մեր իրաւունքների պահանջատիրութիւնը չէ: Այս տեսանկիւնից, պարզ է, որ Հայաստանի Հանրապետութեան հզօրացումը, իսկ դա միայն ռազմական խնդիր չէ, եւ Արցախի ամ-

Թուրքիայի ԵՄ անդամակցութեան դէմ ցոյց Եւրոպայում,2005թ.

ռապնդումը Հայ Դատի բաղկացուցիչ մասերն են եւ այդ ուղղութեամբ գործունէութիւնը նոյնպէս Հայ Դատի համար պայքար է: Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչմանը եւ Թուրքիային, ապա այստեղ եւս Հայաստանի դերակատարութիւնն անուրանալի է, յատկապէս երբ 1998 թ.-ի իշխանափոխութիւնից յետոյ Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը Հայաստանի արտաքին քաղաքականութեան մաս կազմեց: Այն փաստը, որ Թուրքիան Հայաստանին է նախապայման ներկայացնում հրաժարուել հողային պահանջներից, Արցախից եւ Ցեղասպանութեան միջազգային ճանաչման խնդրից, վկայում է այն մասին, որ Հայաստանի դերն այս հարցերում առանցքային է:

"Դրօշակ"._ – Գոյութիւն ունի՞, եւ ի՞նչ չափով, համագործակցութիւն ՀՅ Դաշնակցութեան եւ հայկական այլ կազմակերպութիւնների միջեւ՝ Հայ Դատի աշխատանքներում:

Կ. Մանոյեան.– Հայ Դատի աշխատանքներում Դաշնակցութիւնը միշտ էլ ցանկացել է ստեղծել ազգային միասնականութիւն եւ այն պարբերաբար յաջողուել է նրան: Այսօր եւս նման համագործակցութիւն կայ հայկական այլ կազմակերպութիւնների հետ, նայած կոնկրետ խնդրին: Օրինակ, ԱՄՆ-ում, Ցեղասպանութեան բանաձեւի խնդրով, հայկական բոլոր կազմակերպութիւններն էլ համագործակցում են: Նման համագործակցութիւն կայ նաեւ Եւրոպայում՝ Թուրքիայի Եւրոմիութեանն անդամակցութեան գծով: Բայց, այն դէպքերում, երբ տարբեր կազմակերպութիւններ սկզբունքային այլ հարցերի նկատմամբ սխալ կեցուածք են որդեգրում, Դաշնակցութիւնը դէմ է հանդէս գալիս այդ նախաձեռնութիւններին: Օրինակ, երբ պարզ դարձաւ, որ Ամերիկայի Հայկական համագումարը այսպէս կոչուած Թուրք-Հայկական հաշտութեան յանձնախմբի աշխատանքներին մասնակից է, Դաշնակցութիւնը չվարանեց քննադատել այդ քայլը:

"Դրօշակ"._ – Վերջերս շատ է խօսւում Սեւրի դաշնագրի եւ Վիլսոնեան մանդատի շուրջ: Որքանո՞վ էք հնարաւոր համարում վերակենդանացնել թէ դաշնագրի 89րդ յօդուածը եւ թէ Վիլսոնի իրաւարար որոշումը:

Կ. Մանոյեան. – Կարծում եմ, խնդիրը այնքան Սեւրի դաշնագրի եւ նախագահ Վիլսոնի իրաւարար որոշումը վերակենդանացնելը չէ, որքան, միջազգային իրաւական փաստաթղթերի արծարծումով, հայկական իրաւունքների արծարծումը: Թուրքիայում խօսում են «Սեւրի սինդրոմի» մասին, այսինքն՝ թուրքական պետութեան այն վախի մասին, թէ օրերից մի օր վերակենդանացուելու է Սեւրի դաշնագիրը եւ Թուրքիան մասնատուելու է: Փաստը մնում է փաստ, որ Սեւրի դաշնագիրը եւ ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի իրաւարար որոշումը հանդիսանում են իրաւական այն փաստաթղթերը, որոնք միջազ-



Ադրբեջանի հակահայ քաղաքականութեան դէմ ցոյց Լոնդոնում,2006թ

Ապրիլեան ցոյց Բէյրութում, 2005թ

գային համայնքի, ներառեալ՝ Թուրքիայի եւ Հայաստանի կողմից ընդունուել են որպէս հայ-թուրքական կնճռի արդար լուծում: Հայկական կողմը չի կարող հրաժարուել այդ փաստաթղթերից, եւ ինչքան արծարծուեն այդ փաստաթղթերը՝ այնքան լաւ:

"Դրօշակ"._ – Աշխատանքները հայկական ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ, արդեօք, չե՞ն շեղում մեր ուշա-դրութիւնը Հայ Դատի բուն խնդրից:

Կ. Մանոյեան. – Եթէ Հայ Դատ ասելով այս դէպքում հասկանում ենք Թուրքիայից հողային պահանջներ, ապա Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ աշխատանքները ճիշտ սկզբունքներով չկատարելու դէպքում կարող են մեր ուշադրութիւնը շեղել: Դաշնակցութեան համար Ցեղասպանութեան ճանաչումն ինքնանպատակ չէ: Դաշնակցութիւնը գտնում է, որ Թուրքիայի Հանրապետութիւնը Ցեղասպանութեան խնդրում պատասխանատու է ոչ միայն որպէս Օսմանեան կայսրութեան ժառանգորդ, այլեւ՝ որպէս Ցեղասպանութիւնը իր լրումին հասցնող: Աթաթիւրքի՝ Թուրքիան թուրքերին գաղափարախօսութիւնը նոյն Երիտթուրքերի գաղափարախօսութիւնն է: Թուրքիայից մեր իրաւունքներն ու պահանջները չեն պայմանաւորուում Ցեղասպանու-թեամբ: Ինչպէս պիտի ասէր ողբացեալ Հրանտ Դինքը, եթէ նոյնիսկ ոսկեայ օդանաւերով մեզ տարագրէին, այսինքն՝ Հայաստանը հայաթափէին, մենք դարձեալ կը պահէինք մեր իրաւունքները:

"Դրօշակ"._ – Հայ Դատի եւ հայկական ցեղասպանութեան ճանաչման աշխատանքները դժուար է պատկերացնել առանց իրաւագիտական իմացութեան եւ քարոզչական հզօր մեքենայի: Ապագայ մարտահրաւէրների դէմ-յանդիման մենք ունե՞նք այդ իմացութիւնը եւ այդ մեքենան: Եւ որքանո՞վ է դերակատար Հայաստանի պետութիւնը այս հարցերի կարգաւորման գործում:

Կ. Մանոյեան.– Թուրքական ճակատի վրայ Հայ Դատի աշխատանքները հասել են այնպիսի հանգրուանի, որ արդէն պէտք է շեշտը դնել իրաւական խնդիրների վրայ: Այս ուղղութեամբ որոշ աշխատանքներ արդէն ձեռնարկել ենք եւ դրանք այս հանգրուանի մեր առաջնահերթութիւններն են: Քարոզչութեան բնագաւառում, կարելի է ասել, մեքենան ունենք, անհրաժեշտ է նոր շարժիչներ ապահովել: Քաղաքական պայքարում, այն էլ Թուրքիայի նման պետութեան դէմ, քարոզչութիւնն իսկապէս անփոխարինելի դեր ունի: Այն փաստը, որ այսօր Թուրքիայում որոշ շրջանակներ խօսում են Հայոց ցեղասպանութեան մասին, վկայում է մեր բոլորի աշխատանքների յաջողութեան մասին: Ներկայ հանգրուանին, առանց մոռանալու միջազգային շրջանակները, քարոզչութեան մէջ առաջնահերթութիւն պէտք է տալ թուրք հասարակութեանն ուղղուած քարոզչութեանը: Այս բոլորի մէջ կարեւոր դերակատարութիւն ունի նաեւ Հայաստանի պետութիւնը, որի հնարաւորութիւնները, սակայն, ամբողջութեամբ չեն օգտագործւում:

Ապրիլեան ցոյց Թեհրանում, 2006թ.

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՐԱՒԱԿԱՆ (DE JURE) ՍԱՀՄԱՆԸ.

ԱՆՑԵԱԼԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ՈՒ ԱՊԱԳԱՅ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԻ

Արա Պապեան

Ներկայումս Հայաստանի Հանրապետութիւնը կանգնած է բախտորոշ ճամփաբաժանի առաջ: Մեր յետագայ քայլերից է կախուած, թէ մեզ համար ինչպիսի՞ն կը լինեն առաջիկայ տարիները՝ կորուստների, թէ ձեռքբերումների: Մեր առջեւ ծառացել է առկայ մարտահրաւէրները չէզոքացնելու եւ դրանք դրականօրէն յեղաշրջելու հրամայականը:

Քանի որ Հայաստանի Հանրապետութեան, ինչպէս նաեւ հայ ժողովրդի հաւաքական ներուժը քաղաքական, տնտեսական կամ ռազմական ոլորտներում զիջում է, եւ մշտապէս էլ զիջելու է, Թուրքիայի ու Ադրբեջանի ընդհանուր ներուժին, ուստի անհրաժեշտ է պայքարի ու դիմակայութեան ողջ գործընթացը տեղափոխել այլ ոլորտ, ուր Հայաստանի Հանրապետութիւնը ոչ միայն չի զիջի նրանց, այլեւ կ'ունենայ շօշափելի առաւելութիւն:

Այսինքն, անհրաժեշտ է հայ-թուրքական յարաբերութիւնները տեղափոխել իրաւական դաշտ եւ այդ յարաբերութիւններում առկայ բոլոր խնդիրներին տալ իրաւական լուծումներ եւ ձեւակերպումներ:

Միեւնոյն ժամանակ, հայաստանաբնակ ժողովրդի մէջ հետեւողական աշխատանքով պէտք է հաստատել այն ըմբռնումը, որ Հայ Դատի նպատակները սերտօրէն եւ անմիջականօրէն վերաբերում են Հայաստանի Հանրապետութեան ոչ միայն ներկային, այլեւ ապագային: Անհրաժեշտ է համոզիչ փաստարկներով ցոյց տալ, որ մեր առջեւ ծառացած արտաքին մարտահրաւէրների մի զգալի մասը հնարաւոր կը լինի չէզոքացնել միայն մեր հարեւանների վրայ նոր եւ ազդեցիկ լծակների ձեռք բերումով: Ընդ որում, պէտք է հիմնաւորել, որ նման հնարաւորութիւն մեզ կարող է ընձեռել Հայ Դատի յաջող ելքը, այսինքն de jure Հայաստանի Հանրապետութեան մաս կազմող, սակայն այժմ թուրքական ռազմակալութեան տակ գտնուող տարածքների վրայ մեր իրաւունքների վերահաստատումը: Իսկ սա անելու համար կայ միանգամայն իրատեսական եւ իրագործելի ուղի: Ասածներս յստակ պատկերացնելու համար հարկ է միջազգային իրաւունքի տեսանկիւնից վերլուծել բոլոր այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են հայ-թուրքական սահմանին, յստակեցնել նրանց ներկայ կարգավիճակը, նախանշել մեր անելիքները: Նախ՝ սկսենք միջպետական պայմանագրերից:

Առաջին համաշխարհային պատերազմի աւարտին նախորդող ժամանակահատուածում եւ յաջորդող տարիներին կնքուել է վեց պայմանագիր, որոնք այս կամ այն չափով վերաբերել են հայ-թուրքական սահմանին: Նախ՝ ի՞նչ բան է միջազգային պայմանագիրը: Ըստ ՄԱԿ-ի պաշտօնական ուղեցոյց ձեռնարկի, «*միջազգային պայմանագրերը համաձայնութիւններ են միջազգային իրաւուն-*

քի սուբյեկտների միջեւ, որոնց միջոցով նրանք ստեղծում, փոփոխութեան են ենթարկում կամ դադարեցնում են փոխադարձ իրաւունքներն ու պարտաւորութիւնները»[1]: Այսինքն, պայմանագրի օրինականութեան համար անհրաժեշտ է, որ պայմանագիրը կնքող կողմերից իւրաքանչիւրը լինի միջազգային իրաւունքի սուբյեկտ, լինի միջազգայնօրէն ճանաչուած պետութեան օրինական կառավարութեան լիազօր ներկայացուցիչ: Այս տեսանկիւնից էլ, ժամանակագրական կարգով, անդրադառնանք հայ-թուրքական սահմանին վերաբերող պայմանագրերից իւրաքանչիւրին եւ որոշենք նրանց կարգավիճակն ըստ միջազգային իրաւունքի:

1. ժամանակագրական առումով առաջինը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն է և նրա յաւելուածը՝ կնքուած 1918 թ. մարտի 3-ին:

1917 թ.-ի հոկտեմբերին զինուած յեղաշրջման ճանապարհով գալով իշխանութեան, ռուսաստանցի բոլշեւիկները արդէն մի քանի ամիս յետոյ յայտնուել էին ծայրայեղ ծանր վիճակում: Նրանք 1918 թ.-ի մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում խայտառակ պարտուողական պայմանագիր կնքեցին, որով հսկայական տարածքային զիջումների գնացին Եւրոպայում: Միջին Արեւելքում բոլշեւիկները էական զիջումների գնացին պարտուող եւ կործանման եզրին կանգնած Օսմանեան կայսրութեանը: Մասնաւորապէս, Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ յօդուածի 2-րդ եւ 3-րդ պարբերութիւններով բոլշեւիկները պարտաւորուեցին թուրքերին վերադարձնել ոչ միայն պատերազմի ընթացքում գրաւուած Արեւմտեան Հայաստանի տարածքները (կամ «Արեւելեան Անատոլիայի նահանգները», ինչպէս գրուած է պայմանագրում), այլեւ 1878 թ.-ից Ռուսական կայսրութեան մաս հանդիսացող «Արդահանի, Կարսի եւ Բաթումի մարզերը»:

Համառօտակի քննութեան առնենք Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը միջազգային իրաւունքի տեսանկիւնից: Սոյն պայմանագիրն անօրինական է ու անվաւեր, ըստ այդմ որեւէ իրաւական հետեւանք չունի հայ-թուրքական սահմանի համար երկու պատճառով.

1. Բոլշեւիկները 1918 թ.-ին չէին հանդիսանում Ռուսաստանի օրինաւոր եւ ճանաչուած իշխանութիւններ, հետեւաբար իրաւասու չէին միջազգային յարաբերութիւնների մէջ մտնել, առաւել եւս պայմանագիր կնքել Ռուսաստանի անունից: (Այս հիմնադրոյթին աւելի հանգամանալից կ'անդրադառնանք Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերը քննելիս):

2. Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չեղեալ է յայտարարուել իրենց իսկ կնքողների կողմից (1918 թ. սեպտեմբերի 20-ին Ռուսաստանի կողմից, 1918 թ.-ի հոկտեմբերի 30-ին՝ Թուրքիայի կողմից (Մուդրոսի զինադադարի 11-րդ յօդուածով):

2. ժամանակագրական առումով յաջորդ պայմանագիրը Սեւրի պայմանագիրն է՝ կնքուած 1920 թ.-ի օգոստոսի 10-ին:

Սեւրի պայմանագիրն օրինական է, քանի որ կնքող բոլոր կողմերը իրենց երկրների օրինական եւ ճանաչուած իշխանութիւններն էին: Պայմանագրի շուրջ, ըստ կարգի, ընթացել են երկարատեւ բանակցութիւններ եւ Օսմանեան կայսրութեան անունից պայմանագիրը ստորագրել է լիազօր պատուիրակութիւնը: Սեւրի պայմանագիրը չի արժանացել լիակատար վաւերացման (հետեւաբար մնում է ոչ կատարեալ՝ unperfected), սակայն այն նաեւ երբեւէ չեղեալ չի յայտարարուել (հետեւաբար մնում է օրինական, բայց ուժի մէջ չմտած՝ valid but not in force):

Սխալ է տարածուած այն պատկերացումը, որ Սեւրի պայմանագիրն է որոշել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանը: Այդպէս չէ: Սեւրի պայմանագրի 89-րդ յօդուածով կողմերը համաձայնուել են Հայաստանի եւ Թուրքիայի սահմանը իրաւարար վճռով որոշելու խնդրանքով դիմել ԱՄՆ-ի նախագահին եւ այդ վճիռն ընդունել անմիջապէս: Նոյն պայմանագրի 90-րդ յօդուածով Թուրքիան վերահաստատել է իր դիրքորոշումը, ամրագրելով՝ «ըստ կամ իրաւարար որոշման օրից Թուրքիան հրաժարւում է /Հայաստանին/ փոխանցուելիք տարածքի նկատմամբ


Վուդրո Վիլսոն

իր բոլոր իրաւունքներից եւ տիտղոսից»: ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանի վերաբերեալ իրաւարար վճիռը ստորագրել եւ հաստատել է ԱՄՆ-ի պետական կնիքով 1920 թ.-ի նոյեմբերի 22-ին: Այսինքն, 1920 թ.-ի նոյեմբերի 22-ին իրաւարար վճիռը մտել է ուժի մէջ: Այդ օրուանից նախկինում Օսմանեան կայսրութեան մաս կազմող Վանի, Բիթլիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի նահանգների նկատմամբ (ընդհանուր առմամբ 103.599 քառ. կմ) չեղեալ են յայտարարուել թուրքական իրաւունքներն ու տիտղոսը եւ de jure ճանաչուել են Հայաստանի Հանրապետութեան իրաւունքներն ու տիտղոսը:

ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրաւարար վճռին, որպէս հայոց իրաւունքների ամենազօրեղ կռուանի, աւելի հանգամանալից մենք կ'անդրադառնանք ստորեւ:

3. Ժամանակագրական առումով յաջորդ պայմանագիրը Ալեքսանդրապոլի պայմանագիրն է՝ կնքուած 1920 թ.-ի դեկտեմբերի 3-ին:

Սա սովետահայ պատմագրութեան ամենասիրելի թեմաներից մէկն էր, քանի որ այն հնարաւորութիւն էր տալիս Դաշնակցութեանը մեղադրել դաւաճանութեան մէջ, իսկ բոլշեւիկներին ներկայացնել որպէս ազգի փրկիչների: Մեր խնդիրը չէ պատմական քննարկումներ կատարել: Մեր նպատակն է քննել Ալեքսանդրապոլի պայմանագիրը միջազգային իրաւունքի տեսանկիւնից:

Ալեքսանդրապոլի պայմանագիրն անօրինական է ու անվաւեր, նախ, այն պատճառով, որ կնքող կողմերից եւ ոչ մէկը չի ունեցել դրա իրաւասութիւնը: Պայմանագիրը հայկական կողմից կնքողներն արդէն իշխանութիւն չէին, իսկ Թուրքիայի կողմից կնքողները դեռեւս իշխանութիւն չէին: Երկու կողմերն էլ գործել են ultra vires[2], այսինքն ակնյայտօրէն գերազանցել են իրենց իրաւասութիւնները: Հանրայայտ փաստ է, որ Հայաստանի Հանրապետութեան վերջին օրինական կառավարութեան կողմից իշխանութեան յանձնումը տեղի է ունեցել 1920 թ.-ի դեկտեմբերի 2-ին՝ «ՌՍՖՍՀ լիազօր ներկայացուցչութեան եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան միջեւ» կնքուած համաձայնագրով[3]: Այս մասին տեղեակ էր նաեւ Քեազիմ Կարաբեքիրը, երբ դեկտեմբերի 3-ին (2-ի լոյս 3-ի գիշերը[4]) ստորագրում էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Ալեքսանդրապոլի պայմանագիրն անօրինական է նաեւ այն պատճառով, որ ստորագրուել է միջազգային իրաւունքի սկզբունքները ոտնահարող ուժի կիրառման բացայայտ սպառնալիքով[5]:

4. Ժամանակագրական առումով յաջորդ պայմանագիրը Մոսկուայի պայմանագիրն է՝ կնքուած 1921 թ.-ի մարտի 16-ին:

Ինչպէս գրուած է Մոսկուայի պայմանագրի նախաբանում, փաստաթուղթը կնքուել է «*Ռուսաստանի Սոցիալիս-*

տական Ֆեդերատիւ Սովետական Հանրապետութեան կառավարութեան եւ Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարութեան» միջեւ: Քանի որ ցանկացած պայմանագրի կարգավիճակ ածանցւում է ստորագրողների իրաւական կարգավիճակից, ուստի առաջին հերթին անհրաժեշտ է յստակեցնել նրանցից իւրաքանչիւրի կարգավիճակը 1921 թ.-ի մարտի 16-ի դրութեամբ:

ա. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Սովետական Հանրապետութեան (□□□□□) կարգավիճակը 1921 թ.-ին

Պայմանագիրը կնքելու պահին չկար *«Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Սովետական Հանրապետութիւն»* (□□□□□) ճանաչուած պետութիւն, հետեւաբար միջազգային իրաւունքի սուբյեկտ: Բնականաբար, նրա կառավարութիւնը չունէր որեւէ միջազգային պայմանագիր կնքելու իրաւասութիւն: ՌՍՖՍՀ-ի միջազգային օրինական ճանաչումը, արդէն ՍՍՀՄ տարազով եւ անւանումով, սկսել է միայն 1924 թ.-ի փետրուարի 1-ից՝ Մեծ Բրիտանիայի ճանաչումով[6]: Մինչեւ 1924 թ.-ը տեղի ունեցած, այսպէս կոչուած, ճանաչումները չեն առաջացրել որեւէ իրաւական հետեւանք, քանի որ իրենց հերթին բխել են չճանաչուած երկրներից կամ վարչախմբերից: Որպէսզի ճանաչումն օրինապէս համարուի այդպիսին, այն պէտք է կատարուի իր հերթին օրինականօրէն ճանաչուած միջազգային իրաւունքի սուբյեկտի կողմից[7]: Օրինակ, 1920 թ.-ին սովետական կառավարութիւնը ճանաչեց Բալթեան երկրները, սակայն այդ ճանաչումը չընդունուեց Դաշնակից ուժերի կողմից, որովհետեւ սովետական կառավարութիւնը իր հերթին օրինապէս[8] ճանաչուած չէր[9]: Նման մօտեցումը երկրորդուել է դատական վճիռներով: Այսպէս, ՌՍՖՍՀ-ն ընդդէմ Սիբրարիոյի (RSFSR v. Cibrario) դատական գործում (1923 թ.), ԱՄՆ-ի դատարանը մերժել է ընդունել սովետական կառավարութեան յայտը այն հիմնաւորմամբ, որ վերջինս ճանաչուած չէ[10]: Նմանատիպ վճիռ, նոյն հիմնաւորմամբ կայացրել է շուէդական Գերագոյն դատարանը՝ Սովետական կառավարութիւնն ընդդէմ Էրիկսոնի (*Soviet Government v. Ericsson*) դատական գործում (1921 թ.)[11]:

Վերոյիշեալ եւ տասնեակ այլ դատական վճիռներ եւ կառավարական որոշումներ վերահաստատում են միջազգային իրաւունքի այն սկզբունքը, որ առանց ճանաչման կառավարութիւններն իրաւական տեսանկիւնից գոյութիւն չունեն, հետեւաբար որեւէ իրաւական գործունէութիւն (պայմանագրերի կնքում, քաղաքացիութեան շնորհում կամ զրկում, մասնակցութիւն դատական գործընթացի եւ այլն) չեն կարող ծաւալել[12]:

բ. Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կարգավիճակը 1921 թ.-ին

Ըստ էութեան, սովետական իշխանութեան եւ կառավարութեան վերաբերեալ վերն ասուածը ամբողջովին վերաբերում է, այսպէս կոչուած, Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարութեանը, որի անունից թուրքական կողմը ստորագրել է Մոսկուայի պայմանագիրը: Յիշարժան է, որ անգամ քեմալականներն իրենք որեւէ յաւակնութիւն չունէին օրինական իշխանութիւնների առկայութեան դէպքում իրենց համարելու Թուրքիայի լիազօր ներկայացուցիչներ: Նրանք պայմանագրերը կնքում էին ոչ թէ Թուրքիայի կամ Թուրքիայի կառավարութեան անունից, այլ «Թուրքիայի Ազգային Մեծ ժողով» կոչուող կառոյցի «կառավարութեան» անունից: Թուրքիայի Ազգային Մեծ ժողովը իր կարգավիճակով հասարակական կազմակերպութիւն էր եւ նրա մէջ միաւորուած էին նախկին պատգամաւորներ, պաշտօնանկ զինուորականներ ու պաշտօնեաներ: Նախկին պաշտօնեաների միաւորող կազմակերպութիւններ եղել են ու կան աշխարհի զանազան երկրներում, այդ թւում նաեւ Հայաստանում, սակայն նրանցից եւ ոչ մէկը իրաւունք չունի միջպետական պայմանագիր կնքելու երկրի անունից: Մուստաֆա Քեմալի վարչախումբը որեւէ իրաւական հիմք չունէր միջազգային յարաբերութիւններում ներկայացնելու թուրքական պետութիւնը: Աներկբայօրէն, առնուազն մինչեւ 1922 թ.-ի նոյեմբերը, այսինքն սուլթան Մուհամմեդ VI-ի մեկնումը Թուրքիայից, վերջինիս կառավարութեանն էին վերապահուած միջազգային յարաբերութիւնների մէջ մտնելու լիազորութիւնները, միայն սուլթանը կարող էր լիազօրել որեւէ անձի՝ գոր-

ծելու երկրի անունից[13]:

Ընդհանրապէս քեմալականների շարժումը սկզբնաւորուել ու ընթացել է օսմանեան սահմանադրութեան ոտնահարումով եւ միջազգային իրաւունքի խախտումով, որ է երկրի օրինական իշխանութեան՝ սուլթան-խալիֆի դէմ ապստամբութիւնը եւ Մուդրոսի զինադադարի (30 հոկտեմբերի 1918 թ.) ոտնահարումը: Մուստաֆա Քեմալը 1921 թ.-ին պարզապէս փախուստի մէջ գտնուող քրէական յանցագործ էր: Այդ իսկ պատճառով դեռեւս 1920 թ.-ի ապրիլի 11-ին կայսրութեան բարձրագոյն կրօնաւորի՝ շէյխ-ուլ-իսլամի, ֆեթուայով (կոնդակով) Մուստաֆա Քեմալը մահուան էր դատապարտուել: Նրա նկատմամբ նոյն տարուայ մայիսի 11-ին մահապատժի վճիռ էր կայացրել նաեւ թուրքական ռազմական դատարանը: Այս դատավճիռը 1920 թ.-ի մայիսի 24-ին հաստատուել էր սուլթանի կողմից:

Ի լրումն սրա, Մոսկուայի պայմանագրի Հայաստանին վերաբերող մասը միջազգային իրաւունքի եւս մի խախտում է, քանի որ պայմանագրերը կարող են վերաբերել միայն պայմանագիրը ստորագրող կողմերին եւ որեւէ պարտաւորութիւն կամ իրաւունք չեն ստեղծում պայմանագրին մաս չկազմող երրորդ կողմի համար[14]:

5. Հայ-թուրքական սահմանին վերաբերող յաջորդ պայմանագիրը Կարսի պայմանագիրն է՝ կնքուած 1921 թ.-ի հոկտեմբերի 13-ին:

Միանշանակ է, որ Կարսի պայմանագիրն անօրինական է ու անվաւեր, քանի որ պայմանագիրը կնքած կողմերից եւ ոչ մէկը չի եղել միջազգային իրաւունքի սուբյեկտ: Ալեքսանդրապոլի եւ Մոսկուայի պայմանագրերին վերաբերող հատուածում քեմալականների մասին արդէն խօսուեց: Անդրադառնանք Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան կարգավիճակին, որն էլ հանդիսացել է քեմալականների հետ պայմանագիրը կնքած կողմերից մէկը:

Անվիճելի է, որ Սովետական Հայաստանը երբեք չի եղել միջազգային իրաւունքի սուբյեկտ, երբեք ճանաչուած չի եղել միջազգային իրաւունքի որեւէ այլ սուբյեկտի կողմից, երբեք չի ունեցել այլ երկրների հետ յարաբերութիւնների մէջ մտնելու կարողութիւն: Պարզ ասած, երբեք չի ունեցել դեսպանութիւններ եւ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան անունից երբեւէ ոչ մի դեսպան չի հաւատարմագրուել: Իսկ «*այլ պետութիւնների հետ յարաբերութիւնների մէջ մտնելու կարողութիւնը*» (capacity to enter into relations with the other states) հանդիսանում է պետականութեան չորս չափորոշիչներից մէկը, որն ամրագրուած է Մոնտեվիդէոյի՝ Պետութիւնների իրաւունքների եւ պարտականութիւնների մասին 1933 թ.-ի (*Convention on Rights and Duties of States, 1933*) կոնվենցիայի առաջին յօդուածի չորրորդ կէտում: Սովետական Միութեան կազմում պարզապէս եղել է «*Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւն*» վարչատարածքային միաւոր:

6. Ժամանակագրական առումով վերջին պայմանագիրը, որին հարկ ենք համարում անդրադառնալ Լոզանի պայմանագիրն է՝ կնքուած 1923 թ.-ի յուլիսի 24-ին:

Նախ մի շատ տարածուած մոլորութեան մասին. Լոզանի պայմանագրի կնքումով Սեւրի պայմանագիրը չեղեալ չի յայտարարուել: Որեւէ պայմանագիր կամ միջազգային պարտաւորութիւն նոր պայմանագիր կնքելու պարագային ինքնըստինքեան չեղեալ չի լինում: Պայմանագիրը չեղեալ է դառնում ոչ այլ կերպ, քան չեղեալ յայտարարումով: Ընդ որում, պայմանագիրը կարող է չեղեալ յայտարարուել միայն նախորդ պայմանագրի մաս հանդիսացող բոլոր, կրկնում եմ՝ բոլոր, կողմերի համաձայնութեամբ, դրա մասին յստակ յայտարարումով եւ այդ իրողութեան ամրագրումով յաջորդ պայմանագրի մէջ: Լոզանի պայմանագիրը չեղեալ չի յայտարարել Սեւրի պայմանագիրը: Լոզանի պայմանագրի մէջ ընդհանրապէս որեւէ յիշատակում չկայ Սեւրի պայմանագրի մասին: Այո, ըստ միջազգային իրաւունքի, պայմանագիրը կնքած երկրները իրաւասու են յաջորդ պայմանագրով վերատեսութեան ենթարկել նախորդ պայմանագրի դրոյթները:

Սակայն փոփոխուած կամ նորամուտ դրոյթները իրաւական ուժ ունեն միայն նոր պայմանագիրը ստորագրած երկրների համար, իսկ մնացածների համար շարունակում են ուժի մէջ մնալ նախորդ պայմանագրի դրոյթները: Սա յստակօրէն ամրագրուած է Վիեննայի՝ Պայմանագրերի իրաւունքի մասին կոնվենցիայի 39-րդ, 40-րդ եւ 41-րդ յօդուածներում: Սեւրի պայմանագիրը ստորագրել է 18 երկիր, իսկ Լոզանի պայմանագիրը՝ ընդամէնը 7: Այսինքն, Լոզանին չմասնակցած երկրների համար իրաւական է Սեւրի պայմանագիրը, իսկ Լոզանի պայմանագիրը ստորագրած երկրների համար իրաւական են Սեւրի պայմանագրի այն դրոյթները, որոնք չեն փոփոխուել Լոզանի պայմանագրում:

Աւելին, Լոզանը ոչ միայն չեղեալ չի յայտարարել հայոց իրաւունքները, այլեւ 16-րդ յօդուածով վերահաստատել է դրանք: Այսպէս, Լոզանի պայմանագիրն անդրադառնում է թուրք-բուլղարական, թուրք-յունական եւ թուրք-սիրիական սահմաններին, ըստ այդմ յստակեցնում Թուրքիային պատկանող տարածքները միայն երկրի այդ հատուածներում: Իսկ քանի որ Լոզանի պայմանագրի 16-րդ յօդուածը յայտարարում է, որ Թուրքիան հրաժարւում է բոլոր այն տարածքներից, որոնց վրայ Լոզանի պայմանագրով չի ճանաչուել Թուրքիայի ինքնիշխանութիւնը, իսկ Վիլսոնի իրաւարար վճռով Հայաստանին յատկացուած տարածքների վրայ Լոզանի պայմանագիրը չի ճանաչել թուրքական ինքնիշխանութիւնը, հետեւաբար Թուրքիան մէկ անգամ եւս հաստատել է վիլսոնեան Հայաստանից իր հրաժարումը:

Ամփոփենք մեր քննութեան արդիւնքները եւ անդրադառնանք բազմիցս յիշատակած եւ իմ համոզմամբ Հայ Դատի հիմնասիւնն ու նրա յաջողութեան գրաւականը հանդիսացող ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրաւարար վճռին:

Մինչ այդ, սակայն, յստակեցնենք հետեւեալը. ճիշտ է, որ Պայմանագրերի իրաւունքի մասին Վիեննայի կոնվենցիան ընդունուել է 1969 թ.-ին եւ յետադարձ ուժ չունի, ինչպէս յայտարարուած է կոնվենցիայի 4-րդ յօդուածում, սակայն յստակ է, որ բոլոր այն չափորոշիչային հիմնադրոյթները, որոնցով քննութեան առանք վերոնշեալ պայմանագրերը, միջազգային իրաւունքում առկայ են եղել եւ գործել են դարեր ի վեր, այսինքն լատիներէն ասած՝ եղել են jus cogens, այսինքն՝ բոլորի համար պարտադիր ու անբեկանելի: Դրանք ամրագրուել են Վիեննայի միջազգային կոնվենցիայի մէջ: Եւ ինչպէս հաստատում է նոյն Վիեննայի կոնվենցիայի 53-րդ յօդուածը, պայմանագիրն անվաւեր է, եթէ կնքելու պահին ոտնահարուել է միջազգային իրաւունքում ճանաչում գտած որեւէ անբեկանելի հիմնադրոյթ, այսինքն որեւէ jus cogens:

Հետեւաբար, վերը քննութեան առած վեց պայմանագրից չորսը անվաւեր են, քանի որ նրանցից իւրաքանչիւրը կնքուել է միանգամից մի քանի jus cogens-ների ոտնահարմամբ: Անվաւեր պայմանագրերն են՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, Ալեքսանդրապոլի պայմանագիրը, Մոսկուայի պայմանագիրը եւ Կարսի պայմանագիրը: Սեւրի պայմանագիրը օրինական է եւ վաւեր, սակայն այն ուժի մէջ չի մտել, քանի որ լիովին չի վաւերացուել: Իսկ Լոզանի պայմանագիրը, ինչպէս ասուեց, Հայաստանին վերաբերում է անուղղակիօրէն:

Այժմ անդրադառնանք, ինչպէս նշեցի, Հայ Դատի հիմնասիւնը եւ յաջողութեան գրաւական հանդիսացող ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրաւարար վճռին (Arbitral Award): Նախ մի փոքր պատմական ակնարկ.

1920 թ.-ի ապրիլի 25-26-ին Դաշնակից եւ ընթերակայ ուժերի Գերագոյն խորհուրդը (Supreme Council of Allied and Associated Powers), բաղկացած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի եւ Ճապոնիայի ներկայացուցիչներից, որոշում կայացրեց դիմել ԱՄՆ-ի նախագահին երկու խնդրանքով. ա) ստանձնել Հայաստանի մանդատը, բ) իրաւարար վճռով որոշել Հայաստանի եւ Թուրքիայի սահմանը[15]: Նոյն խնդրանքը, 89-րդ յօդուածի տեսքով, ներառուեց Սեւրի դաշնագրի մէջ եւ արդէն Հայաստանի ու Թուրքիայի, ինչպէս նաեւ դաշնագիրը ստորագրած գրեթէ քսան երկրի անունից յղուեց ԱՄՆ-ի նախագահին: ԱՄՆ-ի նախագահը, իրաւասու մարմինները (Պետքարտուղարութիւնը, Պաշտպանութեան նախարա-

րութիւնը եւ Նախագահի վարչակազմը) եւ համապատասխան աշխատանքային խումբը (պրոֆ. Վեստերմանի գլխաւորութեամբ) մանրակրկիտ ուսումնասիրեցին հայցը եւ կայացրին իրաւարար վճիռ: Վուդրո Վիլսոնը իրաւարար վճիռը ստորագրեց 1920 թ. նոյեմբերի 22-ին, որը դեկտեմբերի 6-ին պաշտօնապէս փոխանցուեց Փարիզ՝ Դաշնակից ուժերի Գերագոյն խորհրդին: Սոյն վճռի պաշտօնական եւ ամբողջական անուանումն է. «*Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դէպի ծով ելքի եւ հայկական սահմանին յարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերեալ», 22 նոյեմբերի 1920 թ.:*

Իրաւարար վճռի բովանդակութիւնը

Ըստ իրաւարար վճռի, Հայաստանի Հանրապետութեան տիտղոսն ու իրաւունքները ճանաչւում էին նախկին Օսմանեան կայսրութեան Վանի, Բիթլիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի նահանգների վրայ՝ ընդհանուր առմամբ 103,599 քառ. կմ: Դա կրկնակի քիչ էր այն տարածքից, որի վրայ Մուդրոսի զինադադարի 24-րդ յօդուածով ճանաչուել էր հայկական տիտղոսը: Նման էական կրճատումը պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ արդէն այդ ժամանակ ի յայտ էին եկել հայերի հսկայական մարդկային կորուստները:

Իրաւարար վճռի ներկայ կարգավիճակը

Իրաւարար վճիռը վերջնական է եւ պարտադիր կատարման համար[16]: Այն չունի ժամանակային սահմանափակում[17] եւ նրա կարգավիճակը կախում չունի վճռի յետագայ ճակատագրից: Միջազգային իրաւունքը, մասնաւորապէս Հաագայի կոնվենցիայի (1907 թ.) 81-րդ յօդուածը, որով ամփոփուել եւ ամրագրուել է իրաւարար վճիռների կարգավիճակը, ընդհանրապէս չի նախատեսում վճռի չեղեալ յայտարարում[18]: Ըստ միջազգային իրաւունքի, կողմերը համաձայնելով իրաւարար որոշմանը ներկայացնել իրենց վէճը, մէկընդմիշտ ընդունում են, որ իրենց կողմից կատարման համար պարտադիր կը լինի իրաւարարի ցանկացած վճիռ[19]: Կողմերից մէկի մերժումը ի կատար ածելու իրաւարարութիւնը, չի ազդում վճռի վաւերականութեան վրայ: Ըստ այդմ, քանի որ իրաւարարութեան հայցը ներկայացուել է ոչ միայն Հայաստանի եւ Թուրքիայի, այլեւ 18 այլ երկրների կողմից, ուստի վճիռը պարտադիր է բոլոր հայցուորների համար, որոնք ներկայումս հետեւեալ երկրներն են՝ Միացեալ Թագաւորութիւն, Կանադա, Աւստրալիա, Նոր Զելանդիա, Հարաւային Աֆրիկա, Հնդկաստան, Պակիստան, Բանգլադեշ, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Բելգիա, Յունաստան, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Չեխիա եւ Սլովակիա: Պարտադիր է նաեւ իրաւարարի՝ Միացեալ Նահանգների համար, քանի որ ԱՄՆ-ի նախագահի ցանկացած պաշտօնական դիրքորոշում հանդիսանում է երկրի դիրքորոշումը[20] եւ իրաւարարութիւնից բխող քայլերը պարտադիր են կատարման համար[21]:

Հիմա ամենակարեւորի մասին. որո՞նք պէտք է լինեն մեր յետագայ քայլերը:

Առաջին հերթին մենք ոչ միայն պիտի յայտարարենք, որ պետութիւն ունեցող ազգ ենք, այլեւ պիտի գործենք որպէս այդպիսին: Այսինքն պիտի օգտուենք միջազգային սուբյեկտի մեր կարգավիճակից:

Քանի որ միջազգային իրաւունքը եւ միջպետական բազմաթիւ փաստաթղթեր, ինչպէս օրինակ՝ Եւրոպայում անվտանգութեան եւ համագործակցութեան Հելսինկիի 1975 թ.-ի եզրափակիչ փաստաթուղթը (մաս 10-րդ, պարբերութիւն 1-ին), որի վրայ կայ նաեւ Թուրքիայի ստորագրութիւնը, յանձնառու երկրներից պահանջում է միջազգայնօրէն ստանձնած պարտաւորութիւնների «*բարեխիղճ կատարումը, լինեն դրանք ածանցուած միջազգային իրաւունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներից եւ կանոններից, թէ լինեն ածանցուած պայմանագրերից կամ այլ համաձայնագրերից, որոնց այդ երկրները մաս են կազմում համաձայն միջազգային օրէնքի*», ուստի Հայաստանի Հանրապետութիւնը կարող է եւ պարտաւոր է միջազգային իրաւունքի հիման վրայ պաշտպանել իր շահերը, այսինքն Անվտանգութեան

խորհրդի ուշադրութիւնը պիտի հրաւիրի այն հանգամանքի վրայ, որ Թուրքիան չի կատարում Վիլսոնի իրաւարար վճռով ստանձնած պարտաւորութիւնները, որի հետեւանքով առաջացել է միջազգային, այսինքն հայ-թուրքական դիմակայութիւն եւ վէճ: Հայաստանի Հանրապետութիւնը որպէս ՄԱԿ-ի անդամ երկիր, ՄԱԿ-ի կանոնակարգի 35-րդ յօդուածի 1-ին կէտի հիման վրայ, լիովին իրաւասու է *«Անվտանգութեան խորհրդի կամ Գլխաւոր համաժողովի ուշադրութեանը բերել ցանկացած վէճ կամ իրավիճակ, որն իր բնոյթով համապատասխանում է (սոյն կանոնակարգի) 34-րդ յօդուածում վկայակոչ- ւածին»*: Իսկ ՄԱԿ-ի կանոնակարգի 34-րդ յօդուածն արձանագրում է. *«Անվտանգութեան խորհուրդը կարող է քննութեան առնել ցանկացած վէճ կամ իրավիճակ, որը կարող է յանգեցնել միջազգային դիմակայութեան կամ առաջ բերել վէճ՝ որոշելու համար, թէ արդեօ՞ք տուեալ վէճի կամ իրավիճակի շարունակումը կարող է վտանգել միջազգային խաղաղութեան եւ անվտանգութեան պահպանումը»*: Ակնյայտ է, որ ներկայ իրավիճակը արդէն իսկ յանգեցրել է հայ-թուրքական դիմակայութեան եւ վիճահարոյց վիճակի, եւ այս ամբողջը հետեւանք է Թուրքիայի կողմից իր միջազգայնօրէն ստանձնած պարտաւորութիւնների չկատարման:



Միեւնոյն ժամանակ, Հայաստանը միջնորդի, օրինակ՝ ԱՄՆ-ի, կամ իրաւարար վճռի հայցը ստորագրած որեւէ երկրի, միջոցով կարող է դիմել Թուրքիային, որպէսզի միասնաբար դիմեն ՄԱԿ-ի միջազգային դատարան (Միջազգային դատարանի կանոնադրութեան 36-րդ յօդուածի 2-րդ կէտի ա/ եւ բ/ ենթակէտերի հիման վրայ) յստակեցնելու համար Վուդրօ Վիլսոնի իրաւարար վճռի ներկայ կարգավիճակը: Զուգահեռաբար Հայաստանը պիտի հայց ներկայացնի ՄԱԿ-ի Գլխաւոր համաժողովին կամ Անվտանգութեան խորհրդին, որպէսզի վերջինս, Միջազգային դատարանի կանոնադրութեան 65-րդ յօդուածի համաձայն, Վիլսոնի իրաւարար վճռի մասին պարզաբանական կարծիքի համար (advisory opinion) դիմի միջազգային դատարան:

Ուզում եմ ընդգծել, որ Հայաստանի Հանրապետութեան կողմից միջազգային կառոյցների ներգրաւմամբ հայ-թուրքական դիմակայութիւնը լուծելու ձգտումը չի կարող դիտարկուել յարաբերութիւնների սրման միտում, այլ, ընդհակառակն, կարող է գնահատուել որպէս հաստատակամ ու դրական քայլ առկայ խնդիրները միջազգային իրաւունքի հիման վրայ լուծելու ուղղութեամբ եւ արձագանք վերջին շրջանում յաճախացող հայ-թուրքական հաշտութեան կոչերի:

Սա Հայաստանի մասով: Սփիւռքը, մասնաւորապէս ԱՄՆ-ի հայ համայնքը, եւս կարող է դիմել գործնական քայլերի:

Ըստ ԱՄՆ-ի Սահմանադրութեան առաջին յօդուածի 8-րդ մասի 10-րդ կէտի, ԱՄՆ-ի Կոնգրեսը իրաւասու է որոշել միջազգային իրաւունքի խախտումները եւ պատժել խախտողներին. «The Congress shall have power to define and punish offenses against the law of nations». Առաւել եւս սա վերաբերում է այն դէպքերին, երբ միջազգային իրաւունքի հիման վրայ որոշումների կայացմանը մասնակցել է ԱՄՆ-ի բարձրագոյն պաշտօնեան, այս պարագայում երկրի նախագահ Վուդրօ Վիլսոնը: Ըստ այդմ, Կոնգրեսի որեւէ անդամ կամ անդամների խումբ Կոնգրեսի պալատներից իւրաքանչիւրում կարող է հանդէս գալ հետեւեալ հարցադրումով.

Արդեօ՞ք Թուրքիայի կողմից ԱՄՆ-ի նախագահ Վուդրօ Վիլսոնի հայ-թուրքական սահմանի վերաբերեալ իրաւարար վճռի (22 նոյեմբերի 1920 թ.) չկատարումը միջազգային իրաւունքի խախտում է: Եթէ այո, ապա ինչպիսի՞ քայլեր է ձեռնարկում ԱՄՆ-ի գործադիր իշխանութիւնը պատժելու համար միջազգային իրաւունքը խախտողին:

Կոնգրեսը դիւրութեամբ չի կարող հրաժարուել այս հարցի քննարկումից, քանի որ ըստ էութեան սա հարցի

վերաբննում է, իսկ Կոնգրեսը իրաւասու է ժամանակ առ ժամանակ անդրադառնալ իր արտայայտած դիրքորոշումների ու յանձնարարականների ճակատագրին:

Ուզում եմ յիշեցնել, որ դեռեւս 1927 թ.-ին Կոնգրեսը, աւելի ստոյգ՝ նրա մի պալատը՝ Սենատը, արդէն մի անգամ յստակօրէն արտայայտել է իր դիրքորոշումը Վիլսոնի իրաւարար վճռի վերաբերեալ: Այսպէս, 1927 թ.-ի յունուարի 18-ին ԱՄՆ-ի Սենատը, որի իրաւասութիւնների շրջանակում է միջազգային պայմանագրերի վաւերացումը, մերժել է վաւերացնել ամերիկա-թուրքական պայմանագիրը (կնքուած Լոզանում 1923 թ.-ի օգոստոսի 6-ին), հետեւաբար ճանաչել ներկայիս Թուրքիայի Հանրապետութիւնը[22]: Պայմանագիրը մերժելու համար եղել է երեք պատճառ, եւ դրանցից առաջինը եղել է ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի իրաւարար վճռով Հայաստանի նկատմամբ Թուրքիայի ստանձնած պարտաւորութիւնների չկատարումը. «failed to provide for the fulfillment of the Wilson award to Armenia»[23]:

Հաշուի առնելով, որ ներկայումս ԱՄՆ-ի Կոնգրեսի երկու պալատներում էլ դեմոկրատները մեծամասնութիւն են կազմում, կարելի է օգտագործել նաեւ կուսակցական գործօնը: ԱՄՆ-ի դեմոկրատական կուսակցութեան 1924 թ. եւ 1928թ.-ի ծրագրային հիմնադրոյթների մէջ միանշանակ շեշտուել է Թուրքիայի ստանձնած պարտաւորութիւնների կատարման անհրաժեշտութիւնը եւ Հայաստանի Հանրապետութեան իրաւունքը վիլսոնեան Հայաստանի նկատմամբ. Fulfillment of President Wilson's arbitral award respecting Armenia (1924 թ.-ի ծրագիր): Դեմոկրատական կուսակցութեան 1928 թ.-ի ծրագիրը ոչ միայն վերահաստատել է հայերի իրաւունքները, այլեւ իր զօրակցութիւնն է յայտնել ԱՄՆ-ի այն հետեւողական ջանքերին, որոնք նպատակամղուած կը լինեն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ եւ դրանից յետոյ ԱՄՆ-ի ու Դաշնակից ուժերի կողմից Հայաստանին եւ հայ ժողովրդին տուած խոստումների եւ պարտաւորութիւնների կենսագործմանը: «We favor the most earnest efforts on the part of the United States to secure the fulfillment of the promises and engagements made during and following the World War by the United States and the allied powers to Armenia and her people»:

Այսօր մեր ազգային գոյութիւնը թեւակոխել է նոր փուլ: Մենք վերանուաճել ենք մեր պետականութիւնը, նորից դարձել ենք պետութիւն ունեցող ազգերի ընտրեալ ընտանիքի լիիրաւ անդամ: Մենք իրաւացիօրէն հպարտանում ենք մեր ազգային պետականութեամբ, սակայն, ցաւօք սրտի, դեռեւս թերի ենք օգտագործում այդ պետականութեան ընձեռած հնարաւորութիւնները: Պետականութիւն նշանակում է միջազգային իրաւունքի կրող, այսինքն սուբյեկտ, որը կարող է իր շահերը պաշտպանել եւ իր նպատակներին հասնել միջազգային իրաւունքի հիման վրայ: Հայ Դատը, այսինքն հայոց արդար իրաւունքներին հասնելու հարցը, առաջին հերթին, Հայաստան եւ Թուրքիա պետութիւններին վերաբերող հարց է, հետեւաբար այն միջազգային, որ է միջպետական, իրաւունքի հարց է: Միջազգային իրաւունքն է, որ այսօր մեզ՝ հայերիս որպէս ազգ եւ Հայաստանի Հանրապետութեանը որպէս պետութիւն, տալիս է անսակարկելի իրաւունք՝ տէր կանգնելու մեր ժառանգութեանը:

Վերջին յիսուն տարում Հայ Դատը առաւելապէս եղել է Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչմանը նպատակամղուած աննկուն աշխատանք: Եւ դա միանգամայն հասկանալի է, քանի որ պարտադրուած է եղել մեր պետականազուրկ վիճակով: Միեւնոյն ժամանակ, կարծում եմ, որ այն եղել է աւելի շատ միջոց, քան նպատակ: Ներկայումս հասունացել է պահը աստիճանաբար ցեղասպանութեան ճանաչումից շեշտադրումը տեղափոխելու բուն պահանջատիրութեան վրայ: Ինչքան էլ անհաւատալի հնչի, պահանջատիրութեան դաշտում մեր դիրքերն աւելի ուժեղ են եւ մեր փաստարկներն աւելի զօրեղ, քան մինչեւիսկ Ցեղասպանութեան ճանաչման գործընթացում, քանի որ մեր տարածքային ու նիւթական փոխհատուցման իրաւունքները խարսխուած են միջպետական երկկողմ եւ բազմակողմ փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետութեան հանդէպ պետութիւնների ստանձնած անսակարկ պարտաւորութիւնների եւ, առաջին հերթին, Հայաստանի Հանրապետութեան եւ աշխար-

Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

հի ներկայիս ամենազօրեղ պետութիւնների առջեւ թուրքական պետութեան անբեկանելի պարտաւորութեամբ՝ ի կատար ածելու ԱՄՆ-ի նախագահ Վուդրօ Վիլսոնի իրաւարար վճիռը:

Աշխարհում գործընթացներն առաջ են գնում յարաճուն արագութեամբ եւ միշտ չէ, որ այդ գործընթացները մեր օգտին են: Մենք յապաղելու ժամանակ չունենք: Եկել է լուրջ որոշումներ ընդունելու եւ առաւել լուրջ քայլեր ձեռնարկելու ժամանակը:

---

1. Manual of Terminology of Public International Law, (by Isaac Paenson), United Nations, New York, 1983, p. 38.

2 . Luzius Wildhaber , Treaty Making Power and Constitution, Basel and Stuttgart, 1971, p. 150.

3 . Սիմոն Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 501-502:

4 . Այն, որ պայմանագիրը ստորագրուել է դեկտեմբերի 3-ին, վկայուած է նաեւ Քեմալ Աթաթուրքի կողմից (Musrafa Kemal Ataturk, A Speech delivered by Musrafa Kemal Ataturk 1927, Istanbul, 1963, p. 418):

5 . Vienna Convention on the Law of Treaties, 1969, United Nations, New York, Article 52.

6 . Survey of International Affairs 1924, (Comp. by Arnold J. Toynbee), London, 1926, p. 491.

7 . Moore J.B., Digest of International Law, Washington, 1906, vol. I, p. 73.

8 . Մինչեւ 1924 թ.-ի փետրուարի 1-ը տեղի ունեցած, այսպէս կոչուած, ճանաչումները չեն ստեղծում որեւէ իրաւական հետեւանք, քանի որ դրանք չճանաչուած երկրների կամ իշխանութիւնների կողմից էին. Էստոնիա՝ 02.02.1920, Լիտուա՝ 30.06.1920, Լատուիա՝ 11.08.1920, Լեհաստան՝ 12.10.1920, Ֆինլանդիա՝ 14.10.1920, Պարսկաստան՝ 26.02.1921, Աֆղանստան՝ 28.02.1921, Թուրքիա՝ 16.03.1921, Մոնղոլիա՝ 05.11.1921 (Frederick Lewis Schuman, American Policy toward Russia since 1917: A Study of Diplomatic History, International Law & Public Opinion., London, 1928, p. 351).

9. Papers Relating to the Foreign Relations of the United States, 1920, v. III, p. 462. (The Secretary of States /Colby/ to the Ambassador in Great Britain /Davis/, August 2, 1920, pp. 461-463).

10 . Hudson M.O., Annual Digest of Public International Law, Cambridge, 1931-1932, Case No. 28, p. 114. Ti-Chiang Chen, The International Law of Recognition, London, 1951, p. 137.

11 . Ti-Chiang Chen, The International Law of Recognition, London, 1951, p. 137. Annual Didest, 1919-1922, case No. 30.

12 . Ti-Chiang Chen, The International Law of Recognition, London, 1951, p. 138.

13 . O'Connell D. P., State Succession in Municipal Law and International Law, v. I, Cambridge, 1967, p. 211.

14 . Branimir M. Jankovic, Public International law, New York, 1984, p. 302.

15 . The Treaties of Peace, 1919-1923, vol. I, New York, 1924, p. xxxii.

16 . A Dictionary of Arbitration and its Terms, (Ed. by Katharine Seide0 New York, 1970. p. 32.

17 . Luzius Wildhaber, Treaty Making Power and Constitution, Basel and Stuttgart, 1971, p. 98.

18 . Manual of Public International Law, (ed. by Max Sorensen), St. Martin's Press, New York, 1968, p. 693-94.

19 . A Dictionary of Arbitratiion and its Terms, (Ed. by Katharine Seide0 New York, 1970, p. 27.

20 . Quincy Wright, The Control of American Foreign Relations, New York, 1922, p 38.

21 . John Collier, The Settlement of Disputes in International Law, Oxford, 1999, p. 265.

22. Unperfected Treaties of the United States of America, 1776-1976, edited and annotated by Christian L.Wiktor, Volume 6, 1919-1925, New York, 1984, p.421. Leland J. Gordon, Turkish-American Political Relations, The American Political Science Review, Vol. 22, No. 3 (Aug., 1928), p. 721.

23. Lausanne Treaty is Defeated, the Davenport Democrat, January 19, 1927, p. 1.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Կարէն Խանլարեան

«Ժողովրդավարութիւնը յատկանշւում է անհատի ազատ եւ հաւասար քուէի իրաւունքով եւ ազատ քաղաքացիների՝ օրէնքի առջեւ հաւասարութեամբ: Ժողովրդավարութիւնը ապահովում է ժողովրդի կամքի անկաշկանդ արտայայտութիւնը եւ հաստատութենական ու ներկայացուցչական հիմունքով, ժողովուրդի ամբողջական եւ լիարժէք մասնակցութիւնը քաղաքական, ընկերային, տնտեսական ու մշակութային կեանքին՝ այդպիսով արդիւնաւէտ հիմքերի վրայ դնելով ժողովրդի եւ պետութեան փոխյարաբերութիւնը» (ՀՅԴ Ծրագիր, 1998 թ., ընդգծումը մերն է,- Կ.Խ.):

Ներածութիւն

«Քաղաքացիական հասարակութիւն» հասկացութիւնը այսօր լուրջ եւ խորքային վիճարկումների նիւթ է դարձել քաղաքագիտութեան, քաղաքական փիլիսոփայութեան, իրաւաբանութեան, քաղաքական հասարակագիտութեան եւ զանազան այլ բնագաւառներում:

Այս հասկացութիւնը ոչ միայն զուտ ակադեմիական մակարդակի վերլուծութեան առարկայ է, այլ նաեւ խորապէս հետաքրքրում է մտաւորականութեան այն հատուածին, որ դէմ է տնտեսական տիրապետութեան հաստատմանը եւ ձգտում է հասարակական եւ մշակութային կեանքը վերակազմակերպել ժողովրդի ազատ կամքի լիակատար յարգման, նրա մասնակցութեան, քաղաքական ուժի ժողովրդականացման եւ ժողովրդավարականացման սկզբունքների հիման վրայ:

Եւ տակաւին շատ ստուար է մարդկութեան այս հատուածը: Ինչպէս բնորոշում է պարսիկ մտաւորական Աբդոլ Հոսէյն Ազարանգը. «*Աշխատավայրումս եւ հարեւանութեանս մէջ գտնուող մի քառասուն ամերիկացի կիրթ մասնագէտներից հարցրել եմ «քաղաքացիական հասարակութեան» մասին, սակայն մի երկուսից բացի, միւսները պատկերացում չունէին: Ի հարկէ իմաստը բացատրելուց յետոյ, ամէն մէկը ասելիք ունէր, որ շատ էլ անկապ չէին նիւթին, այդուհանդերձ ինձ թւում է, որ քա-*

ղաքացիական հասարակութիւնը դեռեւս համատարած հասկացութիւն չէ»:

«Քաղաքացիական հասարակութիւն» եզրոյթը, վերջին տասնամեակում, մեծ թափով քարոզւում էր մանաւանդ նորանկախ եւ զարգացող երկրներում: Օրինակ, Եգիպտոսում սկսեց հրատարակուել անգլիատառ պարբերաթերթ՝ «Civil Society» անունով, իսկ Իրանում՝ «Ջամէէ» («Հասարակութիւն»), որոնք իրենց բուն առաքելութիւնն էին համարում «քաղաքացիական հասարակութեան» մասին տեսական լուսաբանումները:

Պիտի ասել, որ «քաղաքացիական հասարակութիւն»-ը շատ հին հասկացութիւն է: Հին հռոմէացիների մօտ գոյութիւն է ունեցել լատիներէն Societas Civilis տերմինը, որը հիմնականում վերցուած է յունարէն Politike Koinonia բառակապակցութիւնից: Այլ խօսքով՝ յունարէն «քաղաքական հասարակութիւն»-ը փոխակերպուել է լատիներէն «քաղաքացիական հասարակութիւն» բառակապակցութեան: Արիստոտելի եւ ապա Ցիցերոնի երկերում եղած ակնարկներն ապացուցում են այդ հասկացութեան վաղեմիութիւնը:

18-րդ դարի կէսերին, որոշակիօրէն՝ Ամերիկեան Յեղափոխութիւնից (1775-1783 թթ.) եւ Ֆրանսիայի Մեծ Յեղափոխութիւնից (1789 թ.) շուրջ 30-40 տարի առաջ, քաղաքական միտքը նորից սկսեց բուռն հետաքրքրութիւն ցուցաբերել այդ հասկացութեան նկատմամբ:

Աւելի ուշ, գերմանացի փիլիսոփայ Հեգելը (1770-1831 թթ.), իր «Իրաւունքի փիլիսոփայութիւն» աշխատութեան մէջ (1821 թ.), նոր եղանակներով, բանավէճի առարկայ դարձրեց հարցը: Նրա մեկնաբանութեամբ «քաղաքացիական հասարակութիւնը» ընդարձակւում է մէկ կողմից մինչեւ իշխանութեան վերնախաւի, իսկ միւս կողմից մինչեւ ընտանիքի սահմանները: Հեգելը ինչպէս տնտեսական յարաբերութիւնները, այնպէս էլ բոլոր կազմակերպութիւնները եւ ինքնակառավարուող հաստատութիւնները ներառում էր «քաղաքացիական հասարակութիւն» հասկացութեան լայն շրջագծում:

Պետական գործիչ, գրող եւ քաղաքագէտ Ալէքսի Թոքուիլը(1805-1859 թթ.) փորձ կատարեց սահմանազատել քաղաքական եւ քաղաքացիական հաստատութիւնները: Նրա բնորոշմամբ տեղական իշխանութիւնները, կուսակցութիւնները եւ այլ խմբաւորումները քաղաքական զոնայում են գտնուում, իսկ եկեղեցիները, բարեգործական ընկերութիւնները եւ ժողովրդական այլ հաւաքականութիւնները մնում են «քաղաքացիական հասարակութեան» շրջագծի մէջ: Թոքուիլի

Միքայէլ Վարանդեան

Անտոնիո Գրամշի

այս սահմանազատումը, թէեւ շատ պարզ ու բնական է թւում, այնուամենայնիւ պատմագիտական առումով ունի յատկանշական կարեւորութիւն:

Գերմանացի փիլիսոփայ Մարքսը (1818-1883 թթ.), «քաղաքացիական հասարակութեան» բուն միտքը առնելով Հեգելից, մեծապէս սահմանափակեց դրա ընդհանուր սահմանումը: Ելնելով իր փիլիսոփայական հայեացքներից, նա «քաղաքացիական հասարակութիւնը» բնորոշում էր որպէս մասնաւոր սեփականատիրութեան եւ շուկայական յարաբերութիւնների հերթական դրսեւորում:

ՀՅ Դաշնակցութեան տեսաբան Միքայէլ Վարանդեանը, իր «Հոսանքներ» աշխատութեան մէջ, ուրուագծելով սոցիալիստական եւ սինդիկալիստական հայեացքների հիմնական տարակարծութիւնը լիարժէք, ինտեգրալ յեղափոխականութեան եւ մակերեսային արկածախնդրութեան ընկալումների հարթութեան վրայ, ակնարկում էր նախորդ դարասկզբում աշխատաւորական նուաճումները եւ օրէնքի միջոցով ձեռք բերուած կարելիութիւնները եւրոպական մի շարք երկրների մէջ, «*ուր աշխատաւոր զանգուածները, տիրող ազատ կարգերի շնոր-*

հիւ, հնարաւորութիւն ունեն ընդարձակօրէն մասնակցելու երկրի քաղաքական ու սոցիալական ղեկավարութեան մէջ, ուր ժողովուրդը, թէ իր ընտրեալ մարմիններով եւ թէ ուղղակի, զանգուածային միջամտութեամբ, կարող է բազմաթիւ հարցերի նկատմամբ իր սեփական կնիքը դնել օրէնսդրութեան վրայ» («Հոսանքներ», *էջ* 336):

Ընտրեալ մարմիններ ասելով, Մ. Վարանդեանը, թերեւս, ակնարկում է հէնց հասարակական հաստատութիւնների գոյութեան եւ դրանց ընձեռած լայն հնարաւորութեամբ աշխատաւորական դատը պաշտպանելու հարցը:

20-րդ դարի սկզբնական շրջաններում յատկանշական են իտալացի նշանաւոր մտաւորական եւ տեսաբան Անտոնիո Գրամշիի (1891-1937 թթ.) տեսութիւնները: Գրամշին իր «Բանտային գրառումներ» արժէքաւոր աշխատութեան մէջ (1929-1935 թթ.) միանգամայն նոր տեսանկիւն է պարզում «քաղաքացիական հասարակութիւն» հասկացութեան շուրջ: Նա, հաւատարիմ մարքսիստ լինելով հանդերձ, «քաղաքացիական հասարակութեան» մասին իր տեսանկիւնները հիմնում է ոչ թէ Մարքսի, այլ Հեգելի սահմանումների վրայ: «Քաղաքացիական հասարակութեան» սահմանները, նրա տեսակէտից, բաւական հեռու են տնտեսութեան բնագաւառից եւ հիմնականում ընդգրկում են գաղափարակցական յարաբերութիւնների, հասարակութեան հոգեմտաւոր եւ բարոյագիտական արժէքների եւ մշակութային քաղաքականութեան բովանդակ դաշտը:

Այսպիսով Գրամշին լուրջ եւ նշանակալից փորձեր է կատարել «քաղաքացիական հասարակութիւն» հասկացութիւնը մարքսեան մատերիալիստական բնաշխարհից փոխադրել «վերնաշէնքային» հարթութիւն, ինչը կարելի է համարել մեծ նուաճում սոցիալիստական մտածողութեան մէջ:

1960-ական եւ 70-ական թուականներին, առաւելաբար Գրամշիի տեսակէտների լոյսի տակ, մտաւորական նոր շարժումներ ձեւաւորուեցին, ձգտելով չէզոքացնել կամ մեղմացնել ե՛ւ կապիտալիստական, ե՛ւ ամբողջատիրական վարչակարգերի սանձարձակ եւ քմահաճ տիրապետութիւնը հասարակական կեանքում: Այս ժամանակահատուածի ազդեցիկ մտաւորականներից են հանդիսանում Միշնիկը եւ Վայդան՝ Արեւելեան Եւրոպայում, Նորբերտո Բոբիոն, Կոհէնը եւ Իւրգեն Հաբերմասը Արեւմտեան Եւրոպայում եւ Դանիէլ Բէլը ԱՄՆ-ում:

Յետխորհրդային ժողովրդավարացման համընդհանուր շարժման շնորհիւ, վերակենդանացաւ եւ աննախընթաց մասշտաբով շրջանառութեան մէջ դրուեց «քաղաքացիական հասարակութեան» *գաղափարը*: *«Ազատութեան փիլիսոփայութեան եւ ժողովրդավարութեան հիմունքները լայն ծաւալով տարածուեցին,-* ասում է Ազարանգը,- *այս անգամ անծանօթ կամ քիչ ծանօթ «քաղաքացիական հասարակութիւն» տերմինի ընդհանուր տանիքի ներքոյ...»:*

Սահմանում

Արդ, միջազգային նոր աշխարհակարգում ի՞նչ է նշանակում «քաղաքացիական հասարակութիւնը»: Նախ պիտի ասել, որ սոյն հասկացութեան համար անհնար է մի համապարփակ եւ տիեզերական սահմանում կամ բանաձեւում ներկայացնել: Ինչպէս միւս բոլոր նմանօրինակ գաղափարները, սա եւս, ըստ աշխարհագրական, պատմական նախապայմանների, քաղաքակրթութեան մակարդակի, հոգեմտաւոր եւ մշակութային իրավիճակի, հասարակական կացութեան եւ բազմաթիւ այլ սպեցիֆիկ գործօնների, ստանում է յարաբերական բնոյթ, ընդորում, խստորոշ կերպով, տիրական է ազգային դիմագիծը:

Այնուամենայնիւ, ինչպէս ժողովրդավարութեան, սոցիալիզմի, այնպէս էլ «քաղաքացիական հասարակութեան» գաղափարի համար հնարաւոր է գծել հասկացութեան համապարփակ շրջագիծ եւ բնորոշել դրա ընդհանուր իմաստը:

«Քաղաքացիական հասարակութեան» մէջ, տընտեսակարգի եւ պետական սարքի հետ միատեղ, օրէնքով պաշտպանւում եւ երաշխաւորւում է հաստատութենականութեան գոյութեան սկզբունքը, որով հաստատութիւնները միջանկեալ տեղ են զբաղեցնում պետութիւն-հասարակութիւն յարաբերութիւնների արանքում գտնուող զանազան բնագաւառներում: Էական նախապայման է, որ այս միջնորդական դերի մանրամասնութիւնները կանխորոշուած լինեն օրէնքով:

«Քաղաքացիական հասարակության» մէջ, նոյնպէս օրէնքով, ապահովւում են բազմակարծութիւնը, բազմակուսակցականութիւնը եւ սեփականատիրութեան բազմաձեւութիւնն ու դրանց միատեղ գոյութեան իրաւունքները:


Լեստեր Սալամօն

Այս համատեքստում, ըստ ժամանակակից հետազօտող մտաւորականների, «քաղաքացիական հասարակութիւնը» այնպիսի հասարակութիւն է, ուր.

- ուժը կենտրոնացուած չէ սահմանափակ անհատների կամ խմբերի մօտ (կամ չկայ օլիգարխիա),

- ոչ ոք օրէնքով գծուած սահմաններից դուրս գործելու արտօնութիւն չունի (կամ չկայ արտօնեալ հովանաւորչութեան երեւոյթ),

- հասարակական բոլոր բնագաւառների իրաւունքները կանխորոշուած են, հանրապարտադիր եւ անշրջանցելի,

- բարձր մակարդակի վրայ է գտնւում քաղաքացիական պատասխանատուութեան գիտակցութիւնը,

- հարցերի լուծման գործում առաջնային են գործող օրէնքները եւ ոչ թէ դրանցից դուրս առնուած որոշումները,

- տիրական է հանդուրժողականութեան մթնոլորտը,

- լիակատար կերպով յարգւում են խօսքի, մտքի եւ մամուլի ազատութիւնները,

- գոյութիւն ունի լայն համագործակցութեան եւ համախոհութեան տրամադրուածութիւն,

- միատեղ առգոյ են ե՛ւ մասնակցութեան, ե՛ւ մրցակցութեան երեւոյթները[1]:

Այսքանով կարելի է եզրակացնել, որ «քաղաքացիական հասարակութիւնը» ոչ այլ ինչ է, եթէ ոչ ժողովրդավարութեան կառոյցային եւ գործառութային պատկերացում հասարակական գետնի վրայ:

Հեղինակաւոր մտաւորականներից ոմանք «քաղաքացիական հասարակութիւնը» պոստմոդէռնիզմի արգասիքներից են համարում: Ըստ այս կարգի մտաւորականութեան, պոստմոդէռնիզմի շրջանում ուժի կենտրոնացման երեւոյթն աստիճանաբար նահանջում եւ տեղի է տալիս հասարակութեան դերակատարութեան, մասնակցութեան եւ կամքին:

Ամերիկացի տեսաբան, հետազօտող եւ քաղաքագէտ Լեստեր Սալամօնը «հաստատութենական յեղափոխութիւն» (Associational Revolution) երեւոյթն է տեսնում «քաղաքացիական հասարակութեան» հիմքում եւ եզրակացնում, որ սոյն յեղափոխութիւնը, համամարդկային իր տարողութեամբ, անխուսափելիօրէն տեղի է ունենում ժողովրդավարութեան իրականացման ցանկացած գործընթացում: Ըստ Սալամօնի, ներկայիս քաղաքական, տնտեսական եւ հասարակական վիթխարի փոփոխութիւնները, ուղղակի կամ անուղղակի կերպով, աղերս ունեն «քաղաքացիական հասարակութեան» եւ «հաստատութենական յեղափոխութիւն» գաղափարի հետ:

Ի միջի այլոց ընդգծենք, որ տնտեսութեան համաշխարհայնացման գործընթացին զուգահեռ, սակաւապետական «Think Tank»-ները վարպետօրէն նախագծում են այդ տնտեսակարգին համապատասխան ճակատամասը եւ, այդպիսով, ճամբայ հարթում «նոր աշխարհակարգի» հաստատման ուղղութեամբ: Այսպէս նէօ-լիբերալ հոսանքներն էլ, իրենց հերթին, «քաղաքացիական հասարակութեան» շուրջ դիւրահաղորդ, մակերեսային եւ շաբլոնացուած, «արդիական» բնորդների լայն քարոզչութեամբ, գաղափարական կուրս են նախաձեռնել չէզոքացնելու համար իրական ժողովրդավարութեան համատարած ալիքը, եւ կառավարելի դարձնելու համար հանրային կարծիքի մօտ առաջացած այդ դաշտը:

Բնական է, որ այդ գաղափարական կուրսի կոսմոպոլիտ կաղապարներում տեղաւորելի չեն ազգային խորք ունեցող հասարակական արդարութեան ու համերաշխութեան միտող մտածողութիւններն ու արժէքային համակարգերը:

Հակառակ բոլոր ոչ-խորքային մօտեցումների, ահա այս համատեքստում ճշմարիտ է սոցիալիզմի

նորօրեայ շուեդ տեսաբան Մայքել Վալցերի այն համոզումը, ըստ որի «քաղաքացիական հասարակութիւնը», առանց իրական ժողովրդավարութեան, ձեւական է դառնալու:


Մայքել Վալցեր

Վալցերի այս խորքային մօտեցման հիման վրայ, պարսիկ մտաւորական Մոհամմադ Ռեզա Նիքֆարը յայտնում է այն միտքը, ըստ որի «քաղաքացիական հասարակութիւնը» չի կարելի իդէալական հասարակութիւն համարել, քանզի դրանում չի բացառւում նոյնիսկ աղքատութեան, թշուառութեան կամ տգիտութեան գոյութիւնը: Սակայն, ըստ Նիքֆարի, էականն այն է, որ այդպիսի հասարակութեան մէջ սոցիալապէս անապահով խաւերը ի վիճակի են դառնում ազատօրէն միանալու, միատեղելու իրենց ձիգերը եւ պահանջատէր լինելու իրենց իրաւունքների համար: «Քաղաքացիական հասարակութիւնը», իր էութեամբ, չի կարող որեւէ քաղաքատնտեսական իդէալական համակարգի այլընտրանք հանդիսանալ: Դա պարզապէս բռնապետութեան այլընտրանքն է եւ օրէնքի գերակայութեան յարմարագոյն դրսեւորումը քաղաքակիրթ մարդկութեան համար:

Այսպիսով, «քաղաքացիական հասարակութեանը» դեռ չի կարելի համարել ժողովրդավարական լիարժէք հասարակութիւն, սակայն դրա կայացման պայմաններում է, որ հնարաւոր է դառնում, ամրագրելով ժողովրդավարութեան իրական մեխանիզմները, փոփոխութիւններ կատարել հասարակական, տնտեսական եւ քաղաքական կեանքում:

Հայրենի մտաւորական Հենրիկ Խաչատրեանը, մանրամասն բացատրելով «քաղաքացիական հասարակութեան» բաղադրամասերը, սխեմատիկ պատկերացումներ է տալիս պետական կառոյցների եւ քաղաքացիական ոլորտների փոխյարաբերութիւնների մասին: Քաղաքացիական հասարակութեան մէջ «*պետական մարմինների կառուցուածքում կառավարման համակարգը ուժեղացւում է «հորիզոնական» կապերով,*- յայտնում է Խաչատրեանը,*կարեւոր նշանակութիւն է ստանում բնակչութեան առանձին խաւերի, տարածքների, ձեռնարկութիւնների եւ նրանց կոլեկտիւների, հասարակական կազմակերպութիւնների շահերը ներկայացնելը: Շարունակւում է ուղղակի ժողովրդավարութեան ուղիների սահմանակարգումը: Որոշումների ընդունման ժողովրդավարական ընթացակարգերի ընդլայնումը ներառում է աւելի եւ աւելի մեծ թւով քաղաքացիների*»:

Արդիական տեսութիւնների համաձայն, «քաղաքացիական հասարակութեանը» բնորոշ է ինքնակառավարման զարգացումը: Ի հարկէ կարեւոր պայման է ինքնակառավարուող հաստատութիւնների ստեղծման գործում քաղաքացիների կամաւոր մասնակցութիւնը: Ինքնակառավարման հաստատութիւնների ամենայայտնի տեսակներից կարելի է թուել քաղաքական կուսակցութիւնները, հասարակական շարժումները, արհեստակցական միութիւնները (սինդիկատներ), զանգուածային լրատուամիջոցները եւ կանանց ոչպետական (NGO) միութիւնները:

Մի շարք մտաւորականներ ժամանակակից հասարակութիւնները դասակարգում են երկու գլխաւոր տեսակներում.

ա. *զանգուածային* հասարակութիւն, ուր քաղաքական վերնախաւային էլիտայի եւ զանգուածի միջեւ ձեւաւորուած չեն գործառութային եւ կառոյցային միջանկեալ օղակներ եւ կամրջող հաստատութիւններ,

բ. *քաղաքացիական* հասարակութիւն, ուր զանազան բնագաւառներում, էլիտայի եւ զանգուածի միջեւ փոխյարաբերութիւնները, հիմնականում, ընթանում են քաղաքացիական հաստատութիւնների միջնորդութեամբ:

Այս դասակարգման հիմամբ, վերլուծելի են դառնում քաղաքական եւ հասարակական խռովութիւնների կամ ընդհարումների հնարաւորութիւններն ու հա-

ւանականութիւնները: Այսպէս. քանի որ «զանգուածային հասարակութիւն»-ներում էլիտայի կամքից ու կարգադրութիւնից անկախ, բացառւում է զանգուածային մոբիլիզացիան, այդտեղ քաղաքական ցնցումների հաւանականութիւնը իջնում է նուազագոյնի:

Անգլիացի տեսաբան Գասֆիլդը «քաղաքացիական հասարակութիւն»-ներին եւս դասակարգում է երկու տեսակներում.

բ-1. միացուած (Linked), ուր քաղաքացիական հաստատութիւններին առաւելաբար անդամակցում են զանազան դասակարգային կամ շերտային որոշակի պատկանելութեամբ քաղաքացիներ,

բ-2. հատուածական (Segmentational), ուր քաղաքացիական հաստատութիւնները գերազանցապէս ունեն դասակարգային ընդգծուած բնոյթ եւ ձեւաւորուած են հասարակական ձեղքուածութեան ու բեւեռայնութեան հիման վրայ:

Ըստ Գասֆիլդի՝ «հատուածական» քաղաքացիական հասարակութիւնը ենթակայ է քաղաքական եւ հասարակական վերիվայրումների, տագնապների եւ ընդհարումների: Որպէս դասական օրինակ կարելի է նկատի առնել գերմանական հասարակութիւնը Վայմարի Հանրապետութեան ժամանակաշրջանում (1918-1933 թթ.): Այդ ժամանակ գերմանական հասարակութեան մէջ գոյութիւն ունէր դասակարգային խոր եւ բազմաշերտ կազմակերպուածութիւն: Պահպանողական կուսակցութիւնը յենւում էր իւնկերների եւ գիւղացիութեան վրայ, լիբերալ կուսակցութիւնը վայելում էր միջին դասակարգի հովանաւորութիւնը, իսկ սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը առաջնորդում էր քաղաքային աշխատաւորութեանը: Նրանք բոլորն էլ ունէին մշակութային, արհեստակցական եւ մինչեւ իսկ մարզական բնագաւառներում իրենց ոչ-պետական հաստատութիւնները, միութիւնները, ցանցերն ու թերթերը: Կազմակերպուած դասակարգային լարուածութեան եւ քաղաքացիական հակադրութեան այդպիսի իրավիճակում պայթեց նացիստական յեղաշրջումը եւ շատ կարճ ժամանակամիջոցում ոչնչացուեցին ժողովրդավարական, սահմանադրական եւ քաղաքացիական բոլոր հիմքերը, իրաւունքները եւ մեխանիզմները:

Վիճակագրական դիտանկիւն

«Քաղաքացիական հասարակութեան» մասին խօսելիս, անխուսափելիօրէն, հարկաւոր է ակնարկել նաեւ այն հետազօտութիւնները, որոնք կատարուել են մի շարք զարգացած երկրների քաղաքացիական հաստատութիւնների շուրջ: Որոշ տեսաբաններ «քաղաքացիական հասարակութեան» իրագործման յուսալի չափանիշ են համարում տուեալ երկրի հաստատութենականութեան կարելիութիւնները, ենթահողը եւ ունակութիւնը:

Ըստ Սալամօնի աշխատութեան, Շուեդիայում իւրաքանչիւր 100.000 բնակչի դիմաց գոյութիւն ունի 2.300 քաղաքացիական հաստատութիւն, եւ երկրի այս հաստատութիւնների քանակը գերազանցում է 200.000-ը: Այս տեսակէտից Շուեդիան առաջին տեղն է գրաւում աշխարհում: 1960-ականներին Ֆեդերատիւ Գերմանիայում իւրաքանչիւր 100.000 բնակչի դիմաց գոյութիւն է ունեցել միայն 160 քաղաքացիական հաստատութիւն: Իսկ 1990 թ., քաղաքացիական գիտակցութեան աճի հետեւանքով, այդ թիւը բարձրացել է 475-ի:

Հունգարիայում, համայնավարական կարգերի փլուզումից յետոյ, 13.000 քաղաքացիական հաստատութիւն է ակտիւացել: Վերջին շրջաններում Բրազիլիայում նմանօրինակ հաստատութիւնների թիւը անցել է 200.000-ից: Սալամօնը թոյլ զարգացած երկրներից ակնարկում է Եգիպտոսի՝ 20.000 եւ Թաիլանդի՝ 3.000 քաղաքացիական հաստատութիւնները:

Հայաստանում, մեզ յայտնի տուեալների համաձայն, 1995 թ. գործում էին շուրջ 50 հասարակական-քաղաքական կազմակերպութիւն, 336 լրատուամիջոց, 50 հեռուստածրագիր, 16 ռադիոծրագիր եւ 18 լրատուական գործակալութիւն, որոնց համընդհանուր գումարը կազմում է 470: Այլ խօսքով, նորանկախ Հայաստանում իւրաքանչիւր 100.000 բնակչի դիմաց գոյութիւն է ունեցել 15,7 քաղաքացիական հաստատութիւն (մօտաւորապէս Շուեդիայի 1/150-ի եւ Գերմանիայի 1/30-ի հետ հաւասար):

Հայաստանի պարագայում թուերի փոփոխութիւն է նկատւում այսօրուայ դրութեամբ: Հիմք ընդունելով «Հայաստանի դեղին էջեր» էլեկտրոնային կայքէջի (www.spyur.am) տուեալները, ներկայիս Հայաստանում

գործում է շուրջ 115 հասարակական, կրօնական եւ ոչ-առեւտրային (կարելի է ասել՝ ոչ-շահադիտական) կազմակերպութիւն, հիմնադրամ եւ ստեղծագործական միութիւն, աւելի քան 25 քաղաքական կուսակցութիւն, շուրջ 45 թերթ, ամսագիր եւ լրատուական գործակալութիւն, 20 հեռուստաընկերութիւն եւ 10 ռադիոընկերութիւն, որոնց համընդհանուր գումարը ստացւում է 200-ից աւելի: Մեզ չյաջողուեց ճշտել բազմաթիւ այլ ոչ-դասական քաղաքացիական հաստատութիւնների թուաքանակը: Այդպիսիներից կարելի է, որպէս օրինակ, այստեղ նշել «Ուրբաթ Ակումբ»-ի անունը: Այս տեսակի հաստատութիւնները, լինելով ոչ-պետական եւ չյայտարարելով քաղաքական որոշակի հակումներ, փաստօրէն նպաստում են քաղաքական, քաղաքացիական եւ հասարակական տարաբնոյթ հարցերի արծարծմանը եւ յաճախ բարենպաստ լուծմանը:

Վիճակագրական թուերը, անտարակոյս, խօսուն պատկերացումներ են տալիս տուեալ երկրում «քաղաքացիական հասարակութեան» իրականացման իրավիճակի մասին: Սակայն, ըստ էութեան, ի վիճակի չեն բնորոշելու մշակութային, հոգեմտաւոր, արժէքային եւ առհասարակ ենթակայական բարդ ու բազմամակարդակ պայմանների ամբողջութիւնը:

Վերջաբանի փոխարէն

Գաղափարական դաշտում շատ կարեւոր հրամայական են այսօր «քաղաքացիական հասարակութեան» մասին վիճարկումը, տեսական վերլուծումն ու ուսումնասիրութիւնը, նախ՝ «համաշխարհայնացման» կեղծ պիտակի տակ հրամցուող խարխափումների եւ մտագարութեան ոլորտներում չկլանուելու համար, ապա հասարակական ճշմարիտ ժողովրդավարութեան ազգային բնորդները որոնելու եւ դրանք ժողովուրդի մէջ տարածելու նպատակով:

Արդարեւ Հայաստանի իրականութեան մէջ յաջող քաղաքացիական հասարակութիւն ձեւաւորելու համար, յամենայն դէպս, անհրաժեշտ է միատեղ ու միաժամանակ առաջնորդուել եւ՛ ազգային գաղափարախօսութեամբ, տեսլականներով, եւ՛ համամարդկային մտածողութեամբ եւ փորձառութեան հիմամբ:

Հայաստանը, սահմանադրական հասկացութեամբ, պիտի լինի քաղաքացիական հասարակութիւն: Բերուած վերլուծութիւնները յանգեցնում են նրան, որ այդ դէպքում հայկական քաղաքացիական հասարակութիւնը բնոյթով պիտի լինի միացուած եւ ոչ հատուածական (Գասֆիլդի վերոնշեալ մեկնաբանութեամբ): Պարզաբանման կարգով ասենք, որ քաղաքացիական հաստատութիւնները, օրինակ՝ մարդկային իրաւունքների, բնապահպանական միութիւնները պիտի կազմակերպուեն ապադասակարգային հիմունքներով: Դա, ի հարկէ, չի խանգարում, որ տուեալ հաստատութիւնները ունենան քաղաքական յստակ դիրքորոշումներ: Նոյնիսկ քաղաքական կուսակցութիւնների եւ կուսակցապատկան կառոյցների պարագայում էլ, ապահատուածական բնորդները թերեւս աւելի արդիւնաւէտ են լինելու եւ առաւել կենսունակ: Այս մասին արժէ այստեղ նշել, որ գերմանական սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը 1959 թ. Գուդեսբերգի իր Գերագոյն ժողովի որոշումների հիման վրայ, պաշտօնապէս հրաժարուեց «բանուոր դասակարգի շահերի պաշտպան» իր վաղեմի առաքելութիւնից, իրեն յայտարարելով գերմանացի ժողովրդի համայն շահերի պաշտպան: Նման ապահատուածայնացման երեւոյթ եւս տեղի է ունեցել ՀՅ Դաշնակցութեան մէջ: Դեռ 1917 թ. ՀՅԴ ռայոնական ժողովում, Ռոստոմը մէջբերելով Սիմոն Զաւարեանի տեսակէտը, պնդում էր, որ Դաշնակցութիւնը պիտի հանդէս գայ որպէս «հայ ազգի բովանդակ շահերի պաշտպան»: Ի վերջոյ Դաշնակցութիւնը 1978 թ. վերա-



Ռոստոմ և Սիմոն Զաւարեան

մշակած իր ծրագրի նախագծով, հրաժարուեց «հայ աշխատաւոր դասակարգի պաշտպան» դիրքից, իրեն նոյնպէս յայտարարելով «հայ ազգի բովանդակ շահերի պաշտպան»: Այս մօտեցումը բխում է այն պարզ սկզբունքից, որ սոցիալական արդարութեան եւ համերաշխութեան սոցիալիստական համակարգը նախագծուած է համայն հասարակութեան եւ բովանդակ ազգի համար: Ուստի եւ այդ քաղաքական նպատակի ուղղութեամբ, ի շարս այլոց, քաղաքացիական գործունէութիւնը եւս պիտի լինի հնարաւոր չափերով անկաշկանդ եւ չսահմանափակուող եւ սոցիալական շերտերի համերաշխութեանը միտուած:

Եզրակացնենք ուրեմն, որ քաղաքացիական հաստատութիւնների հատուածայնացմամբ եւ դասակարգայնացմամբ, ընդամէնը նեղանում է քաղաքացիական դաշտը ու քաղաքացիական նախաձեռնութիւնը: Երեւոյթ, որ ամէն դէպքում չի նպաստելու նպատակայարմար քաղաքացիական հասարակութեան ստեղծմանը:

Օգտագործուած աղբիւրներ

2. Վարանդեան Մ., «Հոսանքներ», ժնեւ, 1910:

3. Բաշիրիէ Հ., «Յեղափոխութիւն եւ քաղաքական զօրաշարժ (մոբիլիզացիա)», Թեհրան, 1993:

4. Խաչատրեան Հ., «Քաղաքացիական հասարակութիւն եւ իրաւական պետութիւն», Երեւան, 1995:

5. Salamon L., The Civil Society Sector, *Society*, Jan-Feb 1997.

6. Ազարանգ Ա. Հ., «Ներածութիւն՝ քաղաքացիական հասարակութեան», *Նեգահէ* Նօ (պարսկերէն պարբերական), Թեհրան, 1998:

7. Նիքֆար Մ. Լ., «Քաղաքացիական հասարակութեան իրանական հասկացութեան ձեւաւորման փորձ», *Նեգահէ* Նօ (պարսկերէն պարբերաթերթ), Թեհրան, 1998:

8. Վանհանէն Ս., «Ժողովրդավարութեան դասիչը (Սահմանման եւ կիրառման փորձ), *Էթէլաաթ* Սիասի-էղթէսադի (պարսկերէն պարբերաթերթ), Թեհրան, 1998:

[1]«Մասնակցութեան» եւ «մրցակցութեան» միատեղ գոյութեան առնչութեամբ մի հետաքրքիր եւ շահեկան չափանիշ է առաջարկում «Ֆինլանդիայի քաղաքագիտութեան հաստատութեան» նախկին տնօրէն Տաու Վանհանէնը: Այս չափանիշը, որ կոչւում է «դեմոկրատիայի դասիչ» (Index of Democracy, ID), հարիւրերորդական արտադրեալն է «մասնակցութեան» եւ «մրցակցութեան» գործակիցների (այլ խօսքով՝ զոյգ գործակիցների բազմապատկումից եւ հարիւրի բաժանումից ստացւում է ID-ն): «Մասնակցութեան» գործակիցը, որով քանակաւորւում է հասարակութեան մասնակցութեան չափը քաղաքական կեանքում, հաւասար է նախագահական, խորհրդարանական կամ դրանց համարժէք որեւէ քուէարկութեան մասնակցողների տոկոսին՝ քուէարկութեան պայմաններ լրացնողների ընդհանուր թուաքանակի յարաբերութեամբ: «Մրցակցութեան գործակիցը, որով քանակաւորւում է տուեալ հասարակութեան քաղաքական կեանքում առգոյ մրցակցութեան չափը, հաւասար է հարիւրից հանած քուէարկութեան արդիւնքում շահած կուսակցութեան կամ ուժի քուէարկութեան տոկոսը: Այսպէս օրինակ, եթէ մի երկրի քուէարկութեանը մասնակցած լինի քուէարկութեան պայմաններ լրացնողների ընդհանուր թուի 70 տոկոսը եւ քուէարկութեան արդիւնքում յաղթած կուսակցութիւնը շահած լինի ձայների 40 տոկոսը, ապա տուեալ ընտրութիւնների ID-ն հաշուարկւում է հետեւեալ կերպով.

«մասնակցութեան» գործակիցը= 70 %

«մրցակցութեան» գործակիցը = 100 - 40 = 60 %

ID = (70 x 60) / 100 = 42 %

Ըստ Վանհանէնի՝ «մասնակցութեան» եւ «մրցակցութեան» գործակիցները միմեանցից միանգամայն անկախ արժէքներ են, իսկ 15 տոկոս մասնակցութիւնը եւ միաժամանակ 30 տոկոս մրցակցութիւնը (կամ՝ ID = 4,5%) կարելի է համարել «նուազագոյն սահմանաչափը ժողովրդավարութեան ձեռք բերման համար»:

ԿՆՈՋ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՐԱՎՃԵՐԸ

Աննա Առաքելեան

Հայ կնոջ համար դարեր ի վեր երջանկութիւնը կազմել են իր ընտանիքը եւ ընտանեկան բարեկեցութիւնը: Միեւնոյն ժամանակ, հայուհին պատմականօրէն մեծ դեր է խաղացել նաեւ հայ հասարակութեան քաղաքական կեանքում՝ ուս ուսի կանգնելով տղամարդկանց կողքին երկրի ճակատագիրը որոշելիս եւ քաղաքական ռազմավարական որոշումներ ընդունելիս: Հայ կնոջ քաղաքական ակտիւ դրսեւորումը յանգեցրեց այն փաստին, որ 20-րդ դարի սկզբին, երբ ստեղծուել էր առաջին անկախ Հայաստանի Հանրապետութիւնը, հայ կանայք դարձան աշխարհի պատմութեան մէջ առաջին կին-պատգամաւորները՝ ժողովրդավարական սկզբունքներով ընտրուելով Հայաստանի Խորհրդարան (առաջին Հայաստանի Հանրապետութեան ժամանակ կանայք ձեռք բերեցին քուէարկելու եւ ընտրութիւններին մասնակցելու հաւասար իրաւունքներ, իսկ Դիանա Աբգարը դարձաւ առաջին կին դեսպանը Ճապոնիայում): Այս փաստը նաեւ վկայում է, որ հայ հասարակութիւնը ի սկզբանէ գնահատել է կնոջ մասնակցութիւնը ոչ միայն ընտանեկան կեանքում, այլ նաեւ սոցիալ-տնտեսական եւ քաղաքական ասպարէզներում: Արդէն ԽՍՀՄ ռեժիմի օրօք Հայաստանի Հանրապետութեան ընտրովի մարմիններում իրենց մշտական ներկայութիւնը ունեցել են նաեւ կանայք: 1915 թ. եղեռնի արիւնաթաթախ ճանկերից փրկուած եւ աշխարհի տարբեր կողմերը սփռուած հայերը հիմնեցին հայկական Սփիւռքը, որի կանայք դարձան անվիճարկելի առաջնորդներ մէկ այլ սոցիալական երեւոյթի ասպարէզում եւս: Խօսքը գնում է հասարակական կազմակերպութիւնների (այսուհետ՝ ՀԿ-ներ), յատկապէս բարեգործական բնոյթ կրող ՀԿ-ների մասին, եւ այսօր թէ՛ Հայաստանում եւ թէ՛ Սփիւռքում գնալով աճում է հասարակական ոլորտներում ընդգրկուող կանանց թիւը[1]:

Աշխարհը փոխւում է, փոխւում ենք նաեւ մենք, կանայք: Այսօր ժամանակակից հայուհիներից իւրաքանչիւրին կարելի է դասել հետեւեալ երկու խմբերից մէկում՝ աւանդական եւ առաջադիմական: Աւանդական կանանց համար

յաջողութեան եւ կայացած կնոջ ինքնագնահատականը կապում է առաջին հերթին յաջողակ ամուսնութեան եւ ընտանիք ստեղծելու հետ (երիտասարդ կանանց մեծամասնութիւնը), իսկ առաջադիմական կանանց համար կեանքում առաջնահերթ նպատակը մասնագիտական եւ անհատական կայացումն է: Երկու խմբերն էլ ունեն իրենց դրական եւ բացասական կողմերը, բայց երկուսն էլ աչքի են ընկնում ծայրայեղութիւնների առկայութեամբ, որոնք չեն կարող նպաստել հասարակութեան մէջ կանանց եւ տղամարդկանց ներդաշնակ յարաբերութիւնների զարգացմանը: Այսպէս, առաջին խումբը, որին բնորոշ է կանանց եւ տղամարդկանց հասարակական, կամ, այլ կերպ ասած, գենդերային դերերի աւանդական բաշխումը, ինչը բերում է հասարակութեան մէջ կնոջ երկրորդական դերի ամրապնդմանը եւ երկրի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական գործընթացներում կանանց սահմանափակ մասնակցութեանը, աչքի է ընկնում վառ արտայայտուող կոմֆորմիզմով, շրջակայ միջավայրում տիրող կարծիքներին եւ կարծրատիպերին յարմարուելու հակումով: Այս կանայք չեն ձգտում ինքնազարգացման եւ չեն մասնակցում երկրի սոցիալ-քաղաքական գործընթացներին: Միեւնոյն ժամանակ, յայտնուելով ձգնաժամային իրավիճակներում, օրինակ՝ ընտանիքը պահող տղամարդու մահուան կամ ապահարզանի դէպքերում, նրանք անհամար բարդութիւնների են հանդիպում, երբ փորձում են մուտք գործել աշխատանքի շուկայ: Նաեւ պէտք է նշել, որ ընտանիք պահող գործազուրկ կանայք յաճախակի են հանդիպում խտրականութեան՝ նոր աշխատատեղ փնտրելիս: Ես անձամբ աւելի շատ համակրում եմ երկրորդ խմբի կանանց, որոնք նախընտրում են ինքնազարգացման եւ սեփական ընտրութեան անհատական իրաւունքը, որպէս եւ կանանց, եւ տղամարդկանց յաջողականութեան եւ նպատակների իրականացման հիմնական գրաւական: Միեւնոյն ժամանակ, այս դասի կանայք, ձգտելով անկախ սոցիալական կարգավիճակին եւ մասնագիտական կայացմանը, նախընտրում են կեանքում առաջնորդուել արեւմտեան գենդերային դերերով եւ իդէալներով, որոնք միշտ չէ, որ ընդունելի են: Ծայրայեղ ֆեմինիզմը կամ ընտանիքի դերի թերագնահատումը նման օրինակներից է: Ինչ-որ տեղ կարելի է հասկանալ այս ամազոնուհիներին, որոնք յայտնուելով սոցիալապէս անապահով եւ աշխատանքային շուկայում կանանց հանդէպ դեռեւս շարունակուող խտրականութեան պայմաններում, որոշ դէպքերում ստիպուած զոհաբերում են իրենց անձնական կեանքը եւ ընտանիք ստեղծելու հնարաւորութիւնը: Միաժամանակ, այս կանայք, համակրելով արեւմտեան արժէքներին, շատ դէպքերում երկրորդական են համարում ընտանիքը եւ երեխաների դաստիարակութիւնը: Ի վերջոյ, հասարակութիւնը մէկ կողմից զրկում է զարգացման գործընթացներին կանանց լիարժէք մասնակցութիւնից եւ մասնագիտական, մտաւոր ներուժից, իսկ միւս կողմից՝ ընտանիքը չի ստանում այն ջերմութիւնը եւ ուշադրութիւնը, որ անհրաժեշտ նախապայման են հանդիսանում առողջ ընտանիք կազմելու համար: Անշուշտ, այս ամէնը լուրջ մտածմունքների առիթ է դառնում...

Իմ կարծիքով, կնոջ երջանկութեան գաղտնիքը պէտք է փնտրել ոսկէ միջինում, մի այնպիսի հասարակութեան մէջ, որը կ'ապահովի կանանց եւ տղամարդկանց ինքնակայացման եւ ինքնազարգացման հաւասար հնարաւորութիւնները՝ պահպանելով առողջ ընտանիքի ինստիտուտը: Ի հարկէ, դրան պէտք է նպաստի պետականօրէն իրականացուող նպատակային քաղաքականութիւնը, որը կ'ապահովի կանանց շահերը եւ՛ որպէս մայրերի, եւ՛ որպէս մասնագէտների, միաժամանակ նպաստելով ընտանիքների ստեղծմանը եւ պաշտպանելով երկու ծնողների շահերը: Գուցէ հէնց կանանց եւ տղամարդկանց հաւասար հնարաւորութիւնների եւ հաւասար իրաւունքների ապահովումը կը նպաստի հասարակութեան ներդաշնակ զարգացմանը: Կարծում եմ, կանացի երջանկութեան բանաձեւը սա է. կնոջը պիտի սիրեն եւ ընդունեն այնպիսին, ինչպիսին որ կայ, պիտի գնահատեն եւ յարգեն թէ՛ որպէս մօր եւ թէ՛ որպէս մասնագէտի, եւ սէրն ու համերաշխութիւնը պիտի տիրեն ընտանիքում:

---

1 Միեւնոյն ժամանակ, զուգահեռ նուազում է կանանց ներկայացուածութիւնը քաղաքական եւ սոցիալ-տնտեսական ոլորտների որոշումներ կայացնող դիրքերում, որը կարող է վկայել այն մասին, որ կանայք, հնարաւորութիւն չունենալով անմիջապէս մասնակցելու որոշումներ կայացնելու մակարդակներում, սկսել են փնտրել հասարակական կամքի արտայայտման այլընտրանքային ուղիներ:

ԻՆՉՊԻՍԻՆ Է

ՄԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԻՒՍՈՒԱԾՔԸ

(Տեսական ակնարկ, համեմատութիւններ եւ զուգահեռներ)

Մանուէլ Մկրտչեան

Ազգային բնաւորութիւնը մէկն է այն հասկացութիւններից, որ ամենից շատ է շրջանառւում ու գործածւում հրապարակային ելոյթներում, մամուլում եւ նոյնիսկ կենցաղային խօսք ու զրոյցի մէջ: Մարդկանց ընկալումներում ազգային բնաւորութիւն ասուածը մի դէպքում խիստ որոշակի երեւոյթ է, ունի յստակ եզրեր, մէկ այլ դէպքում վերացական է: Աշխարհընկալման եւ շրջապատի հետ վերաբերմունքի այս բարդ ամբողջութիւնը, որը մէկ-երկու բառով անուանում ենք ազգային բնաւորութիւն կամ էլ, ինչպէս վերջերս, մենթալիտետ, շարունակաբար մարդկանց հետաքրքրող ու մտահոգող առարկաներից է: Ինչպիսի՞ն ենք «մենք», ինչպիսի՞ն են «նրանք» հարցադրումները եղել են եւ միշտ լինելու են բոլոր ազգերի մտորումների կիզակէտում:

Ճանաչուած էթնոհոգեբան Գ. Գաչեւը իր «Աշխարհի ազգային կերպարը» գրքում գրում է. «Ժողովրդի ազգային բնաւորութիւնը չափազանց խորամանկ ու դժուար որսալի նիւթ (մատերիա) է: Զգում ես, որ կայ այդպիսի բան, սակայն երբ փորձում ես ձեւակերպել ու բնորոշել, տեսնում ես, որ յանկարծ ցնդեց ու գոլորշիացաւ: Եւ մէկ էլ զգում ես, որ ասում ես պարզունակ ու մակերեսային բաներ, կամ էլ ազգային բնաւորութիւն բառերի տակ դիտարկում ես հասկացութիւններ, որոնք բնորոշ են ցանկացած ազգի, բոլոր ժողովուրդներին: Խուսափել այս վտանգից անհնար է, կարելի է միայն մշտապէս յիշել այդ մասին, կարելի է պայքարել դրա դէմ, բայց չյաղթել»:

Իր սկզբնական փուլում «ազգային բնաւորութիւն» հասկացութիւնը շրջանառուել է իբրեւ նկարագրական երեւոյթ: Հեղինակներից ոմանք «ազգային բնաւորութիւն» ասելով՝ հասկացել են տուեալ ազգի եռանդը, միւսները ուշադրութիւն են դարձրել բնաւորութեան առանձին գծերի վրայ, երրորդն էլ կարեւորել է արժէքային կողմնորոշումները, վերաբերմունքը իշխանութեան եւ աշխատանքի հանդէպ եւ այլն: Մշակութային մարդաբանները գործածութեան մէջ դրեցին նոր եզրեր (տերմիններ)՝ «մշակութային բազմաչափութիւն», «հիմնային անհատ» եւ այլն: Սակայն կրկին վերադարձան «ազգային բնաւորութիւն» առաւել ընդգրկուն հասկացութեանը, որում ոչ այնքան կարեւոր է բնաւորութեան առանձին գծերի գումարը, ամբողջութիւնը, որքան ազգի բնաւորութեան կառուցուածքը:

Բոլոր էթնոհոգեբանները համակարծիք են մի հարցում, որ ազգային բնաւորութեան միջուկը կայուն է, բայց կարող է որոշ փոփոխութիւնների ենթարկուել քաղաքական վարչակարգերի ու համակարգերի ազդեցութեան ներքոյ, յատկապէս տեւական ճգնաժամերի, ազգային պարտադրուած

բարդ հիմնախնդիրների լուծման ճանապարհին: Նման պահերին առաջին պլան են մղում ազգի բնաւորութեան այս կամ այն՝ դրական կամ բացասական գծերը: Ազգային բնաւորութեան բանական (ռացիոնալ) եւ յուզական (էմոցիոնալ) յատկութիւններն ամբողջութեամբ արտայայտւում են ազգային մշակոյթում, մարդկանց պատկերաւոր մտածողութեան եւ խորհրդանիշների մէջ: Այս տիրոյթում արդէն շրջանառւում է ազգային ոգի հասկացութիւնը, որը որոշիչ գործօն է եւ կանխորոշում է ազգային բնաւորութեան կառուցուածքը:


Նիկոլայ Բերդեաեւ

Ըստ ռուս մեծ մտածող Նիկոլայ Բերդեաեւի. «Այս «ոգին» մեզ համար անյայտ է, անմեկնելի, եւ փորձել դրան գիտական բնորոշումներ տալ, ուղղակի անիմաստ է»: Այն ոչ այնքան տեսավերլուծական կատեգորիա է, որքան նկարագրական: Ն. Բերդեաեւի այս տեսակէտը յետագայում պաշտպանեցին գերմանացի էթնոհոգեբաններից մի քանիսը: Մէկ այլ հետազօտող՝ Ս. Ֆրանկը, համարում է, որ ազգային բնաւորութիւնը ռացիոնալ դիրքերից վերլուծելը դատապարտուած է ձախողման, եւ այնտեղ կարելի է թափանցել միայն ինտուիցիայի միջոցով: Ու միշտ պէտք է յիշել, որ որեւէ ժողովրդի թերութիւնների եւ առաւելութիւնների գնահատումը ենթակայական (սուբյեկտիւ) երեւոյթ է, իսկ երբեմն էլ՝ ուղղակի կամայական: Բնութագրելով որեւէ ազգի բնաւորութիւնը, նկատի ունենալով տեսանելի կողմերը՝ մենք, հնարաւոր է, այդպէս էլ չհասկանանք դրանց ընկերային-պատմական հիմքերը եւ, վերջապէս, ազգի՝ ի վերուստ տրուած կենսագենետիկան, ինչը փոխանցւում է սերընդից սերունդ: Ինչո՞ւ են եւրոպացիներն այդպէս կազմակերպուած, իսկ ռուսները՝ ոչ, կամ ինչո՞ւ է հայկական արժէքային համակարգն այդքան աղճատուած եւ այլն: Մենք չենք գտնի այս հարցերի պատասխանները, ինչպէս նաեւ սովորական մարդկանց վարքագծի բուն իմաստները, քանի դեռ չենք պեղել ազգի անցեալն ու պատմական փորձը, չենք յստակեցրել քաղաքական իդէալները եւ արժէքային ընկալումները, վերաբերմունքը իշխանութիւնների եւ իր նման քաղաքացիների հանդէպ:

Պատմական մեծ ցնցումները ուժգին ազդեցութիւն են ունենում ազգերի հոգեկերտուածքի վրայ՝ դրական եւ բացասական իմաստներով: Ի՞նչ ներգործութիւն ունեցան ֆրանսիական յեղափոխութիւնները ֆրանսիացու բնաւորութեան վրայ, ինչպիսի՞ն դարձաւ գերմանացին ֆաշիզմի վերելքից ու ջախջախումից յետոյ, իսկ ի՞նչ է Հիրոսիման ճապոնացու համար, ի՞նչ ուժգնութեամբ 1917 թ. յեղափոխութիւնը կոտրեց ռուսական բարոյական ողնաշարը, իսկ ի՞նչ կատարուեց հայութեան հետ 1915 թ., ի՞նչ տուեց մեզ խորհրդային համակարգը, ի՞նչ փոխուեց հայի մէջ, երբ ազատագրուեց Արցախը...

Շարունակելով մեր պատմական շրջագայութիւնը՝ ասենք նաեւ, որ ազգային բնաւորութեան ուսումնասիրման առաջին հիմնաւոր փորձերն արուել են գերմանացի էթնոհոգեբանների կողմից: Մ. Լազարուսը, Վունդտը, Հ. Շտեյնդելը եւ միւսներն ստեղծեցին մի գիտական ուղղութիւն, ըստ որի՝ պատմական գործընթացի շարժիչ ուժը ժողովրդի ազգային ոգին է, որն արտայայտւում է կրօնում, լեզուի մէջ, արուեստում, առասպելներում եւ սովորոյթներում: 20-րդ դարում էթնոհոգեբանական հետազօտութիւնների բնագաւառում նախաձեռնութիւնն իրենց ձեռքը վերցրին ամերիկացիները՝ Ռ. Բենեդիկտը, Ա. Կարդիները եւ Մ. Միդը, ովքեր ուշադրութեան առանցք դարձրին այս կամ այն ազգը ներկայացնող «միջին անհատին», նրա բնաւորութեան վառ արտայայտուած յատկութիւնները: Մեր օրերում այլեւս չկայ ամբողջական ու գերիշխող ուղղութիւն, եւ հետազօտութիւններն իրականացւում են տեսական ու գործնական տարբեր դիրքերից: Ոմանք ազգային բնաւորութեան մէջ կարեւորում են աշխարհագրական գործօնը, միւսները՝ ընկերայինը, ոմանք առաջին պլան են մղում ազգի բարոյական ըմբռնումների բնորդի խնդիրը, իսկ միւսներն էլ փորձում են վերլուծել ազգի ընկերային-մշակութային միջավայրը: Տեղին է նաեւ նկատել, որ ազգային բնաւորութեան վերլուծութիւնները բարդանում են նաեւ այն պատճառով, որ էթնոհոգեբանների տեսական ու գործնական անմեղ եւ ոչ այնքան անմեղ եզրակացութիւնները մեծ յաջողութեամբ օգտագործւում են ազգայնամոլական ու ռասիստական ուղղութիւնների ու կազմակերպութիւնների կողմից, քանի որ որեւէ ազգի առանձնայատուկ կամ բացառիկ լինելու գիտական բանաձեւումն արդէն իսկ բաւարար է ազգի յարձակողական (ագրեսիւ) էներգիան գործի դնելու, հակադիր խմբաւորումներ ստեղծելու համար:

Ընդհանուր գծերով ի մի բերելով բոլոր ուղղութիւններով

արուած էթնոհոգեբանական հետազօտութիւնները՝ կարելի է ասել, որ.

ա) պէտք է նկատի ունենալ, որ բոլոր ազգերի բնաւորութիւններն էլ պարտադիր հակասական են: Նրանում առկայ են ե՛ւ չարն ու բարին, ե՛ւ աշխատասիրութիւնն ու ծուլութիւնը, ե՛ւ ազատատենչութիւնն ու ստրկամտութիւնը: Բնաւորութեան որեւէ գծի առկայութիւնը չի բացառում միւսները:

բ) Իւրաքանչիւր ազգի բնաւորութեան հոգեբանական կառուցուածքը, անշուշտ, իւրայատուկ է, բայց ունի տարրեր, որոնք բնորոշ են նաեւ միւս ազգերին: Այլ հարց է, թէ ինչ ուժգընութեամբ են դրանք արտայայտւում եւ ինչ շրջագծով:

գ) Պէտք չէ բոլոր մեղքերը փնտրել ազգային բնաւորութեան եւ աւանդոյթների մէջ: Ազգն այնպիսին է, ինչպիսին նրան ստեղծել է պատմութիւնը, կենսագենետիկան, աշխարհագրութիւնը եւ ընկերային-քաղաքական համակարգը: Մի խօսքով՝ ազգը անցեալի արդիւնք է, իսկ այդ անցեալը նրա մէջ դեռ երկար կը խօսի:

դ) Ճիշտ չէ ազգային բնաւորութեանը տալ «լաւ կամ վատ», «զարգացած կամ յետամնաց» եւ նմանատիպ գնահատականներ, որովհետեւ, ինչպէս իսպանացի բարոյագէտ Բալթասար Գրասիան է ասել. «Նոյնիսկ ամենալուսաւորեալ ազգին բնորոշ են բնական արատները, որոնք հարեւան ազգերը նկատում են ու ծաղրում չարամտօրէն...»:

ե) Ազգային բնաւորութիւնը բացարձակ, յաւիտենական երեւոյթ չէ, այն փոխւում է ընկերային-պատմական գործընթացներին զուգընթաց: Օրինակ՝ 17-րդ դարի Եւրոպայում կարծում էին, թէ անգլիացիներն ուժեղ հակում ունեն յեղափոխութիւնների ու արմատական փոփոխութիւնների նկատմամբ, այնինչ ֆրանսիացիները, երբեմն, դրսեւորում էին պահպանողական ու անվճռական որակներ: Մէկ դար անց այս պատկերացումը կտրուկ փոխուեց. անգլիացիները դարձան աւանդապահներ, իսկ ֆրանսիացիները՝ յեղափոխականներ: Կամ՝ 19-րդ դարում գերմանացիներին համարում էին երաժշտութեամբ, պօէզիայով եւ փիլիսոփայութեամբ տարուած անգործունեայ ազգ: Բայց, ահա, 20-րդ դարի արդիւնաբերական յեղափոխութիւնը գերմանացու բնաւորութեան մէջ բացայայտեց նոր գծեր, եւ նախորդ պատկերացումները յօդս ցնդեցին: Իսկ առեւտրականի անուն ունեցող հայերը 21-րդ դար մտան տեղեկատուական տեխնոլոգիաներում մեծ հեռանկար խոստացող ազգի համբաւով:

* * *

Հայի ազգային բնաւորութեան հնարաւորինս ամբողջական պատկերն ունենալու համար ճիշտ է այդ պատկերը դիտարկել արեւմտեան եւ ռուսական բնաւորութեան, աշխարհընկալման բնորոշների յարաբերութեան ու համեմատութեան մէջ, քանի որ այս երկու ընկերային-մշակութային տիրոյթներում առկայ արժէքային համակարգերն առաւել մօտ են մեզ եւ հետաքրքրական բոլոր առումներով: Արեւելքի մշակութային ու կրօնական գիտակցութիւնը, աշխարհընկալման համակարգը եւ մեր էթնոտիպի համեմատութիւնը լուրջ դժուարութիւններ են յարուցում, բայց նուազ հետաքրքրական չեն եւ պահանջում են վերլուծական այլ մօտեցումներ: Ինչեւէ, փորձենք առայժմ կողք կողքի դնել արեւմտեան, ռուսական ու հայկական բնաւորութիւններն ու աշխարհընկալումները:

* * *

Ռուսական ազգային բնաւորութեան ամենախորունկ գիտակներից մէկը՝ Նիկոլայ Բերդեաեւը, ռուսի էութեան ամենաբնորոշ գիծը համարում է երկփեղկուածութիւնն ու բեւեռայնութիւնը: «Ռուսական հոգու ձեւաւորման մէջ,- գրում է նա,- առկայ են երկու խորքային որակներ՝ բնութեան տարերքը, հեթանոս ոգին եւ կրօնական ուղղափառ խոնարհութիւնը: Ռուսաստանը ամենապետական ու ամենաբիւրոկրատական պետութիւնն է աշխարհում... Ռուսները հնազանդ են, ընդունակ անշահախնդիր զոհաբերութեան: Բայց սա մի երկիր է, ուր պատահում են աներեւակայելի իրադարձութիւններ: Նրանք նիհիլիստներ են ու ապստամբներ, նրանք քաօսային են ու վայրենի: Ռուսն առանց մեծ գործերի չի կարող ապրել, նա պարտադիր պիտի քանդի ու վերստեղծի: Ռուսներն ապաքաղաքական են, ծանրաշարժ, իներտ, ծոյլ, հնազանդ, բայց արթնանալու դէպքում դառնում են տարերք ու աղէտ...»:

«Բեւեռացուած ռուսական ազգային տիպը,- նկատել է Ֆ. Դոստոեւսկին,- չունի որեւէ չափի զգացում, ուր մարդը հասնում է ամենավերջին սահմանին, ուր արդէն անդունդն է: Եւ... ինքնամոռաց նետւում ցած...»:

Ռուսական մտածողութիւնը բացարձակ զուրկ է ռացիոնալիզմից, որն արտայայտւում է սահմանափակումներին ու չափանիշներին չենթարկուելով: Ռուսը օրգանապէս տանել չի կարող օրէնքն ու օրինականութիւնը (եթէ, ի հարկէ, նրան չզսպեն), անտարբեր է բարիքների ու բարեկեցութեան նկատ-

մամբ: Գերմանացի փիլիսոփայ Վ. Շուբարտը, համեմատելով ռուսական եւ արեւմտեան ազգային տիպերը, գրում է. «Ռուսական հոգին չունի միջին վիճակներ, ռուսը չունի իր երկու բեւեռները միացնող ու կարգաւորող զսպանակ: Նա հակա-դրութիւնների կծիկ է, որի հետեւանքով մաշում ու քայքայում է իր հոգին: Կոպտութիւնն ու գթասրտութիւնը, դաժանութիւնն ու ծայրայեղ զգացմունքայնութիւնը, մեղքն ու սրբասիրութիւնը նրա էութեան մէջ ապրում են կողք կողքի...»: Ոչ պակաս ուշագրաւ դիտարկումներ է արել ռուսական գենոտիպի մասին հայ ականաւոր տեսաբան Սիմոն Զաւարեանը. «Փոքր երկիրների համար ուտոպիստ խենթեր են գուցէ Դոստոեւսկիները, Տոլստոյները. անոնք գուցէ վրիպածներ են մի եւրոպացու աչքին, հակասութիւններ, վարպետօրէն շինուած: Բայց ճիշտ անոնք են Ռուսաստանի բուն արտայայտիչները, անսահմանութեան մէջ որոնող ոգիներ, որ ո՛չ չարի եւ ո՛չ բարու սահմանը կը ճանաչեն: Անոնք նման են ռուս ժողովրդական երգերին, որոնց ունկնդրելով կը զգանք ատելութիւնը, ողբը, ցաւը, բայց դրա կողքին՝ այդ ելեւէջների մէջ, անոնց անհուն ուժը, որոտացող փոթորիկը, բարձրացող բռունցքները եւ սպառնալիքները, կարծես թէ միաժամանակ կը երգեն վանդակի մէջ ինկած թռչնիկներ եւ սանձարձակ գազաններ՝ զիրար լրացնելով եւ մի ամբողջութիւն կազմելով: Ռուսիան ո՛չ ժամանակի, ո՛չ տարածութեան, ո՛չ նախապաշարումի եւ հաւատի չափ ունի: Անոր չափանիշը՝ իր մէջ ամբարած տարերքն է, որ ենթակայ չէ տեսութեան, ճառերի, ծրագիրների կամ ժողովների որոշմանց»:

Սիմոն Զաւարեան

Տրամագծօրէն հակառակ երեւոյթ է արեւմտեան մենթալիտետը եւ հասարակութիւնը, որն ամբողջութեամբ ռացիոնալ է ու կանոնակարգուած: Այստեղ մարդիկ հակուած են յստակ գծագրել ու կազմակերպել բոլոր կառուցուածքները: Լատինա-ռոմանական մշակոյթում մարդը ձգտում է ամէն ինչ կազմակերպել ու բիւրեղացնել, որպէսզի ե՛ւ տնտեսութիւնը, ե՛ւ մարդկային եղբայրութիւնն ու սէրը ունենան ամուր, յստակ գծագրութիւն ու ձեւեր: Արեւմտեան տիպի մարդու համար նոյնիսկ գրաւիչ է կոդաւորել եւ չափաւորել բարոյականութիւնը, որպէսզի բարոյական մոտիւները հոգեկանում գործեն ընդհանուր կանոններով, ճշգրիտ ու որոշակի ձեւերով: Սա մի քաղաքակրթութիւն է, որի գլխաւոր հոգսը պետական կառավարման ձեւերի շարունակական կատարելագործումն է, ուր խիղճը փոխարինւում է օրէնքով, ներքին մղումները դառնում են բացարձակ կառավարելի ու կարգաւորուած: Նոյնիսկ բարեգործութիւնը այստեղ վերածւում է մեխանիկական աշխատանքի: Մի խօսքով՝ Արեւմուտքի ամենամեծ խնդիրը պետական կառոյցներն են ու կառավարման ձեւերը:

* * *

Մենք միտումնաւոր եզրագծեցինք ռուսական եւ արեւմտեան աշխարհընկալումները, բնաւորութիւնները, որպէսզի համեմատութեան մէջ հնարաւորինս յստակ երեւայ մեր ազգային նկարագիրը, որն անասելի տարբեր է ու բարդ: Նախ՝ նկատենք, որ ազգային բնաւորութեան արեւմտեան եւ ռուսական բնորդները՝ իրենց աղաղակող տարբերութիւններով, նոյնական են մի կէտում. դա քաղաքական ու պետական միջավայրի առկայութիւնն է: Էթնոտիպն ապրում եւ իրեն իրացնում է պետական ու քաղաքական համակարգում, հետեւաբար ինքը լաւն ու վատն է ճիշտ այնքան, որքան իր ստեղծած համակարգը: Այն դէպքում, երբ հայի համար այդ բաղձալի պետական համակարգը մեծ հաշուով անյայտ բան էր, մեծ շռայլութիւն: Փոքր-ինչ ուշադիր կարդալով հայոց պատմութիւնը՝ տեսնում ենք մի բան. բոլոր դարերում (բացառութեամբ՝ մէկ-երկու դրուագի) հայը գտնւում է սահմանային գօտում, կործանման եզրին: Այլ կերպ ասած՝ պատմութեան թատերաբեմից հեռանալ-չհեռանալը հայութեան օրակարգից դուրս չի եկել երբեք: Շումերների, աքքադացիների, յոյների, հռոմէացիների, պարսիկների, արաբների, թուրքերի, ռուսների, սովետների եւ այլոց դաժան ու թաւշեայ լուծը հայութեան ֆիզիկական ու հոգեւոր գոյութիւնը չէր երաշխաւորում: Նոյնիսկ աւելին՝ ուղղակի եւ անուղղակի ձեւերով ամէն ինչ արւում էր հայի հոգին ու մարմինը ոչնչացնելու համար: Արդիւնքում՝ նուաճողներն ու բռնակալները դարձան սոսկ պատմական փաստեր դասագրքերում, իսկ մենք շարունակում ենք ապրել: Սա ի՞նչ հանելուկ է, էթնոհոգեբանական ի՞նչ ֆենոմեն: Պետական հզօր կազմաւորումները քայքայւում ու անհետանում են, իսկ նրանց «հպատակը»՝ ոչ: Սա թերեւս հենց այն անմեկնելի ու անվերծանելի «ազգային ոգին» է, էութեան հզօր միջուկը, որն անխորտակելի է եւ գոյութիւն ունի աստուածային ու տիեզե-

րական հրահանգով: Դժուար է ռացիոնալ ու զգայական բացատրութիւն տալ այս հարցին: Սակայն տուեալ դէպքում մեզ հետաքրքրում է ոչ թէ մեր «գոյութեան» հանելուկը, այլ թէ ինչպիսին ենք մենք այսօր, ինչպիսի որակական պատկեր ունի մեր բնաւորութիւնը: Սրանք, ինչ խօսք, փոխկապակցուած հարցեր են եւ ունեն նոյն ելակէտը, եւ դրանց պատասխանը պիտի փնտրել հայութեան հոգեբանութեան ինքնապաշտպանական բարդ մեխանիզմի մէջ, որն առանձին խօսակցութեան նիւթ է: Համարձակ ձեւակերպել այդ ինքնապաշտպանական մեխանիզմի ճիշտ էութիւնը՝ իրօք դժուար է: Սա ասում ենք առանց հայկական ինքնաքննադատ էութիւնը առասպելականացնելու եւ ոչ էլ գեղեցիկ ու բացառիկ երեւալու ցանկութիւնից դրդուած: Մի զարմանալի տրամաբանութեամբ պատմութեան մեծ հարթակից դուրս են մղում ե՛ւ այն ազգերը, որոնց մէջ թոյլ է ազգային ինքնութեան գիտակցութիւնը, ե՛ւ նրանք, որոնք տառապում են իրենց ինքնութեան գերգիտակցութեամբ: «Մենք՝ հայերս», հոգեբանական տերմինով ասած՝ «Մենք» հիմնադրոյթի եւ «Ես հայ եմ» հասկացութիւնները թէ՛ եւ ինքնագիտակցութեան հզօր կառոյցներ են, բայց պատմաքաղաքական անբարենպաստ հանգամանքների պատճառով եւ մինչեւ օրս էլ չեն դարձել կազմակերպուած պետական հանրութիւն, այո՛, նոյնիսկ հռչակուած պետականութեան պայմաններում: Այս իրողութեան մօտաւոր ենթակայական բացատրութիւններից մէկն այն է, որ անկախ պետական կառոյցը կամ համակարգը դեռեւս չի ներծծուել անհրաժեշտ բովանդակութեամբ: Ստեղծուել են պետական կառուցուածքներն ու ենթակառուցուածքները, սակայն հայ հանրութիւնը չի կարողանում ինչպէս հարկն է դրանք իւրացնել, սեփականացնել: Աւելին՝ հանրութեան մի զգալի մասի համար իներցիայի ուժով եւ ենթագիտակցօրէն պետութիւնը ընկալւում է իբրեւ իրեն օտար թշնամի ուժ: Դրան նպաստում է այն, որ իր գործառոյթների մէջ անասելի արատաւոր ու տկար է պետութիւնը: Այլ կերպ ասած՝ հայութիւնը պետական ու հասարակական սխեմաների մէջ ապրելու բնազդական ու գիտակցական փորձ չունի. իշխանութիւնը կառավարելու ձեւը չգիտի, հանրութիւնն էլ հպատակուելու եւ օրէնքներով ապրելու սովորութիւնը չունի:

Ռուսական ազգային բնաւորութեան մասին խօսելիս Ն. Բերդեաեւն ասում է. «Դժուար է կառավարել մի ազգի, որն ունի անարխիստական հակումներ»: Մի իւրօրինակ կարգաւորուած քաօս է նաեւ մեր հանրութիւնը: Սակայն,ի տարբերութիւն ռուսների, հայերի համար մաքսիմալիզմը, ծայրայեղականութիւնը եւ գաղափարական մոլեռանդութիւնը օտար են եւ անընդունելի: Հայը իր պատմական փորձով գիտի, որ ուժեղների կրնկի տակ չպէտք է լինել ծայրայեղ եւ ոչ մի հարցում: Նրա էթնոպաշտպանական բանաձեւի մէջ այս որակներն ու ըմբռնումները չկան: Պատահական չէ, որ նոյնիսկ ամենաճգնաժամային իրավիճակներում հայութիւնը չգնաց կտրուկ ու ծայրայեղ քայլերի: Ինչ խօսք, սա հարցի դրական կողմն է, բայց կայ նաեւ խոցելի, բացասական կողմը: Դա մեր ինքնակազմակերպուելու, ներքին պայմանաւորուածութեամբ ապրելու ընդունակութեան բացայայտ պակասն է: Համակերպուել անընդհատ ու ամէն ինչի հետ՝ լաւի, թէ վատի, նշանակութիւն չունի: Նոյնիսկ մի թունաւոր անեկդոտ կայ այս մասին. «Երբ հրեան է ընկնում ցեխի մէջ, մտածում է՝ ինչպէս դուրս գալ, երբ հայը՝ մտածում է՝ ինչպէս յարմարուել...»: Ընդվզումը սեփական արատների ու վատ պայմանների դէմ կարող է մաքրագործող նշանակութիւն ունենալ, սակայն, աւաղ, հայը ընդվզում է, երբ արդէն դանակը հասել է ոսկորին: Փորձը ցոյց է տալիս, որ առայժմ մեզ կարող է համախմբել միայն մեր թշնամին: Կոլեկտիւիզմի զգացումը ներքին կեանքում ընդհանրական նպատակներին հասնելու գործում թոյլ է եւ ոչ արդիւնաւէտ: Կոլեկտիւիստական ընկալումը, որը, ի դէպ, ուժեղ է ռուսների մէջ եւ թոյլ՝ Արեւմուտքում, ունի համախմբող բացառիկ յատկութիւն: Պատահական չէ, որ այդ յատկութեան շնորհիւ գերմանացիները ե՛ւ նացիզմ ծնեցին, ե՛ւ իրենց երկիրը 20 տարի անց վերածեցին Եւրոպայի տնտեսական հսկայի: Իսկ ռուսներն էլ արիւնալի յեղափոխութիւններ արեցին եւ նացիզմին ծնկի բերեցին: Այնպէս որ, կոլեկտիւիզմը մի որակ է, որը ի զօրու է ե՛ւ արարել, ե՛ւ աւերել: Հայութեանն այսօր պակասում է այդ ընդհանրական «մենք»-ի առողջ զգացումը եւ իրաւական կարգապահութիւնը: Առհասարակ, իրաւական կարգապահութիւնը կամ, ինչպէս յաճախ ասում են՝ իրաւագիտակցութիւնը, մեր հանրութեան աքիլլեսեան գարշապարն է:

Մարդիկ ոչ մի կերպ չեն կարողանում հաւատալ, որ մեր երկրում մի պայծառ օր կը սկսեն գերիշխել օրէնքները: Իրաւական նիհիլիզմով տառապում են բոլորը: Սա նշանակում է, որ հայի աշխարհընկալման ու վարքագծի մէջ իրաւական կատեգորիաներով մտածելն ու առաջնորդուելը թոյլ է ու չկազմաւորուած: Հայի հոգեբանութեան մէջ գերակայում են խղճի, բարոյականի եւ մարդկայինի՝ երբեմն էլ աղճատուած մոտիւները: Յատկապէս «մարդկայինի» հակասական գործօնը՝ նորօրեայ իրաւական ու աւանդական բարոյական պատկերա-

ցումների բարդ հանգոյցը, հային պահելու է իւրօրինակ երկփեղկուածութեան մէջ եւ թոյլ չի տալու, որ չափաւորութիւնն ու կարգաւորուածութիւնը դառնան տիրապետող կեանքում: Այս առումով մէկ այլ հարթութեան վրայ սուր, բայց կեղծ հակասութեան մէջ են սեփական շահի եւ հանրային շահի պատկերացումները: Ընկերային հիմքի կայունացումը, ի վերջոյ, հասարակ մարդուն եւ պաշտօնեային կը սովորեցնի, որ հանրային օրէնքի կիրառութիւնն ու գերակայութիւնը բոլորի կենսական շահն է: Սա ժամանակի հարց է: Իսկ մինչ այդ հայի ազգային բնաւորութեան մէջ ընկերային մոտիւը լինելու է ամենաուժեղ արտայայտուած գիծը: Պիտի արձանագրենք, որ հէնց ընկերային լարուածութիւնն է մեր կեանքի բազում մեծ ու փոքր աղէտների բուն պատճառը: Ընկերային դաշտում մըրցակցային վիճակներն ուժգնօրէն ներգործում են հայի հոգեկերտուածքի վրայ ամբողջութեամբ՝ վեր հանելով նրա նկարագրի ինչպէս դրական, այնպէս էլ բացասական որակներն ու գծերը: Այստեղ փոքր-ինչ մանրամասնենք խնդիրը. հային բնութագրելիս օտարներն առաջինը նշում են նրա աշխատասիրութիւնը եւ օժտուածութիւնը: Իրօք, մենք էլ գիտենք, որ ծուլութիւնը եւ անտարբերութիւնը հային բնորոշ չեն: Հիմա պատկերացնենք մի հանրութիւն, որտեղ մարդկանց ճնշող մեծամասնութիւնը աշխատասէր է ու նախաձեռնող, բայց չկայ այդ որակները կառուցուածքայնացնող, գործի դնող որակեալ քաղաքական, տնտեսական ու վարչական համակարգ: Համեմատութեան համար ասենք, որ աշխատասէր էթնոտիպի համբաւ ունեն նաեւ գերմանացիները: Նրանց աշխատասիրութիւնը ռացիոնալ է, լաւ կանոնակարգուած եւ գերխնայողական: Ճապոնացիների աշխատասիրութիւնը այլ երանգ ու իմաստ ունի: Նրանք էլ աշխատանքին տրւում են ինքնամոռաց, սիրով ու նուիրումով: Հայի համար աշխատանքը կարող է ոչ այնքան ապրուստի միջոց լինել, որքան կեանքի իմաստ ու նպատակ: Հայը չի կարող աշխատել հէնց այնպէս, իբրեւ պարտականութիւն: Գործի նկատմամբ ստեղծագործական մօտեցումը հայի բնական վիճակն է: Աշխատասէր գերմանացին ոչնչից գործ չի ստեղծում, հայը՝ կստեղծի: Եթէ համակարգ չլինի, գերմանացին անզօր է որեւէ բան անել, բայց խոհեմութիւնն անհատական որակներին ապաւինելը չէ, այլ մարդկանց կարողութիւնները պետութեանն ու հայրենիքին ծառայեցնող համակարգ ստեղծելը: Մրցակցային դաշտում լարուածութեան շարունակական գոյութիւնը վտանգաւոր է նաեւ մէկ այլ առումով, ինչի ականատեսը եղանք բոլորս վերջին 15 տարում: Նկատի ունենք արտագաղթը, ինչը հայի չիրացուող մտաւոր ու ֆիզիկական էներգիայի արտահոսքն է դէպի կայացած համակարգեր: Մեր անուանի կրօնական գործիչներից մէկը՝ Օրմանեանը, մեր ազգային երկփեղկուածութեան հիմքում տեսնում է հայի էութեան մասշտաբների անհամատեղելիութիւնը կենսատարածքի ու պայմանների համեմատութեամբ: Ըստ նրա՝ հայը մեծ ծովի լողորդ է: Նա իրեն չի կարողանում դրսեւորել փոքր տիրոյթներում եւ ոտք է մեկնում հզօրների հետ: Իրաւացի է Օրմանեանը: Մեր այս վերլուծական նիւթն ակամայից դրա հաստատումն է: Չէ՞ որ մենք էլ մեզ չենք համեմատում, ասենք, վրացիների, բուլղարների, լիտուացիների եւ այլոց հետ: Որպէս մրցակից, չգիտես ինչու, ընտրում ենք Արեւմուտքի հզօրներին... Արտագաղթի խորքային պատճառների մասին մենք դեռ կը խօսենք: Այսօր ամփոփենք մեր խօսքը եւ ասենք հետեւեալը: Համեմատական վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ ազգային ու էթնիկական գործօնը լուրջ ազդեցութիւն է ունենում նաեւ քաղաքական գործընթացների վրայ: Քաղաքական հոգեբանութեան մէջ ազգային առանձնայատկութիւնների բացայայտումը եւ մեխանիզմների իմացութիւնը մեզ կ՚օգնի առաւել արդիւնաւէտութեամբ ձեւաւորել շուկայական տնտեսութիւն եւ իրաւական պետութիւն եւ, ի հարկէ, կատարելագործել հասարակական ու պետական հաստատութիւնները (ինստիտուտները):

Օրմանեան

Կարէն ՎԵՐԱՆԵԱՆ

1948 թ. հրէական պետութեան ստեղծմամբ սիոնիստական աշխարհագաղափարական-աշխարհառազմավարական հիմնադրոյթները հայեցակարգային լուրջ փոփոխութիւնների ենթարկուեցին: Համաշխարհային սիոնիստական խոշորագոյն կենտրոններում Իսրայէլի պետութեան անվտանգութեան ապահովման ու յետագայ զարգացման հարցի կողքին, օրակարգ բարձրացուեց 21-րդ դարի նոր մարտահրաւէրների առջեւ համաշխարհային հրէականութեան պատմաքաղաքական անցած ուղու վերաիմաստաւորման, սիոնիստական առաքելութեան վերաձեւակերպման եւ յետագայ անելիքների սահմանման խնդիրը:

Հրէական պետութեան հիմնադրումից ի վեր սիոնիստական առաքելութեան աշխարհաքաղաքական տեսլականներն առաւել յստակեցուեցին յատկապէս վերջին երկու տասնամեակների կտրուածքով գլոբալ աշխարհաքաղաքականութիւնում տեղի ունեցող աշխարհակարգային վերափոխումների արդիւնքում, որոնք կարելի է դասակարգել հետեւեալ կերպ.

1. Խորհրդային Միութեան փլուզում եւ նոր աշխարհակարգի ձեւաւորում,

2. նախկին խորհրդային տարածքում նորանկախ հանրապետութիւնների ստեղծում,

3. համաշխարհային գործընթացների բազմակողմանի գլոբալիզացում,

4. էներգետիկ անվտանգութեան հիմնախնդիրների ակտուալացում,

5. 21-րդ դարի մարտահրաւէրներ (ահաբեկչութիւն, զանգուածային ոչնչացման զէնքի տարածում եւ այլն),

6. միաբեւեռ աշխարհակարգի բազմաբեւեռացում (Չինաստան, Հնդկաստան):

ՀՐԷԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

Ելնելով վերը յիշատակուած վեց կէտերից՝ սիոնիստական առաքելութիւնն իր առջեւ խնդիր էր տեսնում Իսրայէլի եւ նրա ազգաբնակչութեան անվտանգութեան պահպանման, ինչպէս նաեւ նոր աշխարհակարգում վերջինիս դերի մեծացման հիմնահարցերին զուգահեռ, օրակար-

գում բարձրացնել սփիւռք-պետութիւն յարաբերութիւնները, իսկ աւելի ստոյգ՝ Իսրայէլի սահմաններից դուրս հրէական համայնքային կենտրոնների դերակատարման սահմանման եւ դրանց յետագայ զարգացման հիմնախնդիրները:

Նախքան Իսրայէլի պետութեան հիմնադրումը սիոնիստական աշխարհագաղափարախօսութեան հիմքում դրուած էր հրէականութեան միակենտրոնացման սկզբունքը կամ ռազմավարութիւնը, ինչը հայեցակարգային էական փոփոխութիւնների ենթարկուեց յատկապէս Իսրայէլի պետութեան հիմնադրումից սկսած: Դժուար է չհամաձայնել, սակայն, որ մինչեւ վերջերս եւ յատկապէս Սառը պատերազմից յետոյ, հրէականութեան աշխարհագաղափարական հիմնադրոյթներում թէեւ Իսրայէլ-հրէական սփիւռք ձեւաչափային փոխյարաբերութիւնները մասամբ վերաիմաստաւորուեցին ու ստացան գործառութային նոր տրամաբանութիւն, այսուհանդերձ, դրանք դեռեւս շարունակում էին ընկալուել գերազանցապէս *սուբյեկտ-օբյեկտ* յարաբերութիւնների մակարդակով:

Սառը պատերազմի աւարտով եւ բազմաբեւեռ աշխարհակարգի ձեւաւորմամբ հրէական աշխարհագաղափարախօսութիւնում արմատապէս վերափոխակերպուեց պետութիւն-սփիւռք յարաբերութիւնների ընդհանուր տրամաբանութիւնը: Սիոնիստական խոշորագոյն «ուղեղային կենտրոններում» 21-րդ դարի հրէականութեան առաքելութիւնը ստացաւ իր նոր աշխարհագաղափարական վերաիմաստաւորումը, որը միանշանակօրէն ելնում

էր հրէականութեան առաքելութեան *ապակենտրոնացման ռազմավարութիւնից*:

Միւս կողմից, հրէականութեան զարգացման ապակենտրոնացման նոր մոդելն իր հերթին հրէականութեան աշխարհագաղափարական առաքելութեան իմաստային նոր տրանսֆորմացիաների իրականացման առիթ դարձաւ: Արդիւնքում՝ հրէականութեան աշխարհագաղափարական առաքելութեան հէնքում դրուեց ոչ թէ ազգային կամ նոյնիսկ համազգային ասպեկտը, ինչպէս դա ենթադրում էր հրէականութեան զարգացման միակենտրոնացման ռազմավարութիւնը, այլեւ գերակայութիւն էր տրւում հրէականութեան աշխարհաքաղաքակրթական զարգացման մոդելին, որին պայմանականօրէն կարելի է *«Հրէական աշխարհաքաղաքակրթական առաքելութիւն կամ ռազմավարութիւն»* անուանումը տալ:

Հրէականութեան աշխարհաքաղաքակրթական հայեցակարգային դրոյթներում վերաձեւակերպուած հրէականութեան զարգացման ապակենտրոնացման մոդելը էապէս ընդլայնեց հրէական համայնքների գործառութային դերակատարման բովանդակային սահմանները, ինչն իր հերթին պետութիւն-սփիւռք յարաբերութիւններում ընդունեց սուբյեկտ-սուբյեկտ յարաբերակցման ձեւաչափը: Արդիւնքում՝ հրէական համայնքները ձեռք բերեցին համեմատաբար ինքնիշխան քաղաքական ու գործառութային կարգավիճակ, ինչը դիւրին դարձրեց աշխարհասփիւռ հրէական համայնքային կենտրոնների միջեւ համացանցային համակարգի կառավարելիութիւնը: Միեւնոյն ժամանակ, հրէական համայնքային կենտրոնների ինքնիշխանութիւնը էապէս խթանեց վերջիններիս աշխարհաքաղաքական դերի ընդլայնմանը, ինչը պոտենցիալ նախադրեալ հանդիսացաւ գլոբալ աշխարհակարգում հրէական համայնքի՝ օբյեկտի կարգավիճակից *աշխարհաքաղաքական* սուբյեկտ ներկայանալու համար: Այս տեսանկիւնից, բաւական իրատեսական է այն կարծիքը, որ չունենալով պետական, պետաիրաւական համապատասխան կարգավիճակ ու լիազօրութիւններ, հրէական համայնքային կենտրոնները, Իսրայէլի պետութեան համեմատ, աստիճանաբար առաւել լայն իրաւաքաղաքական, ֆինանսական իրաւասութիւններ ու հնարաւորութիւններ են ձեռք բերում: Մի հանգամանք, ինչը նոր աշխարհակարգում պետական-մասնաւոր սուբյեկտ յարաբերակցման կարեւորագոյն առանձնայատկութիւններից մէկն է: Դառնալով աշխարհաքաղաքական գործօն՝ հրէական համայնքները, սակայն, հանդէս են գալիս ոչ թէ սպառնալիքներն ու մարտահրաւէրները զսպողի եւ ոչ այնքան դրանց հակազդողի, որքան մարտահրաւէրներ առաջադրողի դիրքերից:

ՀՐԷԱԿԱՆ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

Վերջին տարիներին հրէականութիւնը լրջագոյն ուշադրութիւն է սկսել դարձնել հրէաների ծագումնաբանական հիմնախնդիրների ուսումնասիրութեանը, ինչը եւ դարձել է 21-րդ դարի հրէականութեան աշխարհաքաղա-

քակրթական առաքելութեան առանցքային բաղադրիչներից մէկը: Հրէական խոշորագոյն «ուղեղային կենտրոններում» այսօր լուրջ հետազօտութիւններ են իրականացուում սեմական ժողովուրդների ծագումնաբանութեան հրէականացման ուղղութեամբ: Նկատենք, որ նոյն «հակասեմականութիւն» հասկացութիւնը ներկայացուում է որպէս անհանդուրժողականութեան դրսեւորում սոսկ հրէականութեան նկատմամբ, այն դէպքում, երբ «հրէականութիւնը» հանդիսանում է «սեմականութիւն» գիտական հասկացութեան ճիւղաւորումներից ընդամէնը մէկը:

Վերջին ժամանակներս մասնաւորապէս կրկին ակտիւութիւն է նկատուում այսպէս կոչուած «հրէական 10 ցեղերի» յայտնաբերման հետազօտութիւններում, որոնք իրենց փնտրտուքները կատարում են հրէական աւանդապատումներում, եւ դեգերում Կովկասեան-Կասպեան, ինչպէս նաեւ Կենտրոնական ու Հարաւ-Արեւելեան Ասիական տարածաշրջաններում:

Ըստ հրէական աւանդութեան, օրինակ, Իսրայէլի կորուսեալ ցեղերից մէկը դեգերել է հիւսիս-արեւմտեան Պարսկաստանում, աւելի ստոյգ՝ Քուրդիստանում՝ յետագայում բաժանուելով տարածուել հիւսիս ու արեւելք: Արդիւնքում՝ հրէական կորուսեալ ցեղի հիւսիսային ճիւղը հաստատուել է Կովկասեան լեռներում՝ Կասպից ու Սեւ ծովերի միջեւ ընկած տարածքներում (ներկայիս Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը եւ Դաղստանը): Աւելին, որոշ հրէա գիտնականների կողմից իրականացուած հետազօտութիւնների արդիւնքները ցոյց են տալիս, որ ներկայիս Քուրդիստանի տարածքում բնակուող քրդերի ու հրէաների միջեւ գոյութիւն ունի գենետիկ կապ, ինչն առաւել ուժեղ է, քան հրէաների ու արաբների միջեւ գենետիկ յարաբերակցութիւնը:

Ինչ վերաբերում է հրէական կորուսեալ ցեղախմբերի աշխարհագրական ծագումնաբանութեան արեւելեան ճիւղաւորմանը, ապա վերջինս, ըստ հրէական աւանդութեան, ներառում է Ուզբեկստանը, Բուխարան ու Թուրքմէնստանը: Պէտք է նշել նաեւ, որ կորուսեալ ցեղերի արեւելեան ճիւղաւորումը յետագայում իր հերթին տարածում է գտել Աֆղանստանում, Հնդկաստանում ու Պակիստանում՝ ձգուելով մինչեւ Չինաստան: Մասնաւորապէս նշուում է, որ Հին Չինաստանում բնակութիւն էր հաստատել այսպէս կոչուող Չիանգ ցեղախումբը, որը ըստ հրէական աւանդապատումների, սերում է հրէական կորուսեալ ցեղերից եւ ունի սեմական ծագում:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱ ՆԴԻՐԸ

Իսրայէլի սահմաններից դուրս գործող հրէական համայնքներին ընձեռուած ներկայիս կարգավիճակը անուղղակիօրէն կապակցուում է նաեւ դէպի Իսրայէլ հրէաների հայրենադարձութեան հարցի հետ: Խնդիրը մասնաւորապէս վերաբերում է նրան, որ Իսրայէլի պետութեան հիմնադրումից անմիջապէս յետոյ երկրի իշխանութիւնների առջեւ բարձրացաւ հրէական սփիւռքի ներկայացուցիչների հայրենադարձութեան կազմակերպման անհրաժեշտութեան հարցը, ինչն ըստ էու-թեան, ոչ միանշանակ դրական արձագանք գտաւ սփիւռքի հրէական համայնքների տարբեր շրջաններում: Առաւել խոշոր հրէական համայնքներում, նախորդ դարի 50-ականներից դէպի Իսրայէլ հայրենադարձութեան խնդրի բարձրացմամբ, լուրջ քննարկումներ ու բանավէճեր սկսուեցին «հրէական ազգային օջախ» հասկացութեան սահմանման, հայրենադարձութեան նպատակայարմարութեան հիմնահարցերի շուրջ: Մասնաւորապէս, 20-րդ դարի վերջերից սկսած, երբ դէպի Իսրայէլ հրէական սփիւռքի հայրենադարձութեան արտահոսքերը զգալիօրէն կրճատուեցին, Իսրայէլ-հրէական համայնքային կենտրոններ յարաբերութիւններում հայրենադարձութեան հիմնախնդիրը կարգաւորուեց գերազանցապէս հրէականութեան զարգացման ապակենտրոնացման մոդելի կիրառման շնորհիւ: Այդ համատեքստում, անշուշտ, նոր վերաիմաստաւորում ստացաւ նաեւ «հայրենիք» հասկացութիւնը, ինչի արդիւնքում Իսրայէլը մինչ օրս ներկայանում է որպէս *աւետեաց* երկիր (սրբազանութեան խորհրդանիշ), իսկ հրէական համայնքները՝ հրէական քաղաքակրթական օջախներ:



ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ

21-րդ դարում հրէականութեան առաքելութեան կարեւորագոյն հիմնադրոյթներից մէկն էլ վերաբերում էր 21-րդ դարի մարտահրաւէրների ու սպառնալիքների դիմաց հրէականութեան անվտանգութեան ապահովման հիմնախնդիրներին, ինչը մասամբ կարգաւորում էր հրէականութեան զարգացման ապակենտրոնացման ռազմավարութիւնը: Իսկ աւելի ստոյգ՝ հրէականութեան նոր աշխարհագաղափարախօսութիւնը թոյլ էր տալիս խուսափել մտաւոր, քաղաքական ու ֆինանսական կապիտալի միակենտրոն կուտակումներից, ինչը տեղի ունեցաւ Երկրորդ աշխարհամարտի տարիներին ֆաշիստական Գերմանիայում, երբ հրէականութեան քաղաքական-տնտեսական կապիտալի միակենտրոն կուտակումը յանգեցրեց հրէաների զանգուածային ջարդերին:

Միւս կողմից, հրէականութեան ապակենտրոնացուած մեխանիզմը կարեւորում էր նաեւ համապատասխան անվտանգութեան ինստիտուտների կայացման անհրաժեշտութիւնը: Արդիւնքում զգալի փոփոխութիւնների ենթարկուեցին Իսրայէլի յատուկ ծառայութիւններն ու նրանց ընձեռուած լիազօրութիւնները, որոնք գերազանցապէս մասնագիտացած էին Իսրայէլի սահմաններից դուրս հրէական համայնքային կենտրոնների անվտանգութեան ապահովման, ինչպէս նաեւ տուեալ տարածաշրջանում Իսրայէլի ազգային շահերի պաշտպանական հիմնախնդիրներով: Աւելին, ներկայում հարցը միանշանակօրէն դրուած է համայն հրէականութեան անվտանգութեան ապահովման համատեքստում համապատասխան հետախուզական ու հակահետախուզական ցանցային համակարգի ստեղծման շրջանակներում, ինչը, միեւնոյն ժամանակ, հնարաւորութիւն կը ստանայ սերտօրէն համագործակցել նաեւ Իսրայէլի յատուկ ծառայութիւնների հետ:

21-րդ դարում հրէականութեան անվտանգութեան ապահովման ապակենտրոնացուած համակարգի ու ինստիտուտների ձեւաւորման ու կայացման հարցի կարեւորութիւնը շեշտադրում է յատկապէս այն հանգամանքը, որ հրէական համայնքների դերակատարման մեծացման հետ միաժամանակ բաւական խնդրահարոյց էր դարձել մէկ կենտրոնից հրէական սփիւռքի անվտանգութեան ապահովման եւ ընդհանրապէս Իսրայէլի ազգային շահերի պաշտպանման արդիւնաւէտ կազմակերպումը:

ՀՐԷԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Հրէականութեան զարգացման ապակենտրոնացման ռազմավարութեան անկիւնաքարերից մէկն էլ վերաբերում է հրէական տարածաշրջանային կենտրոնների հիմնադրման ու կայացման հարցին, որը հետապնդում է երեք հիմնական նպատակ. յայտնի է, որ նախորդ դարի 50-ականներից սկսած հրէական մտաւոր, քաղաքական ու ֆինանսական կապիտալի գերակշիռ մասը հասցրել էր կուտակուել յատկապէս Միացեալ Նահանգներում, ինչը հրէականութեան աշխարհաքաղաքակրթական նոր գաղափարախօսութիւնում դիտւում է որպէս ռիսկային գործօն: Այս տեսանկիւնից, աշխարհի տարբեր հատուածներում հրէական տարածաշրջանային կենտրոնների ստեղծումը լուրջ նախադրեալներ կարող էր ստեղծել հրէականութեան ամերիկեան կապիտալի ապակենտրոնացման համար: Երկրորդ՝ հրէական տարածաշրջանային կենտրոնների ստեղծումը կարեւորւում էր 21-րդ դարում հրէականութեան ապակենտրոնացուած զարգացման ռազմավարութեան արդիւնաւէտութեան ապահովման նկատառումներով: Եւ երրորդ՝ հրէական տարածաշրջանային կենտրոնները, միւս կողմից, ստանձնել են 21-րդ դարի հրէականութեան բազմակենտրոն աշխարհաքաղաքակրթութեան զարգացման առաքելութիւն: Վերջին մէկուկէս տասնամեակի կտրուածքով հրէական տարածաշրջանային քաղաքակրթական կենտրոնները ձեւաւորուել են երեք հիմնական աշխարհագրական ուղղութիւններով՝ Հարաւային Ամերիկա եւ Կանադա, Արեւմտեան Եւրոպա ու ետխորհրդային տարածք եւ Արեւելեան ու Հարաւ-արեւելեան Ասիա: Պէտք է նշել նաեւ, որ վերջին տարիներին հրէականութիւնն առանձնայատուկ հետեւողական քաղաքականութիւն է տանում մասնաւորապէս Արեւելեան, Հարաւ-Արեւելեան Ասիական ուղղութեամբ, ինչը պայմանաւորուած է բազմաբեւեռ աշխարհակարգի ձեւաւորմամբ (Չինաստան, Հնդկաստան, Շանհայի Համագործակցութեան կազմակերպութիւն եւ այլն):

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ «ՀԱՅՐԵՆԻՔ»-Ի ԽՄԲԱԳԻՐ ՌՈՒԲԷՆ ԴԱՐԲԻՆԵԱՆԻՆ (1963-1968 ԹԹ.)

Արշալոյս Աստուածատրեանը հայ ազատագրական շարժման եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան նշանաւոր գործիչներից է: Նա ծնուել է 1883 թ. Քանաքեռ գիւղում, մանկավարժի ընտանիքում: Աւարտելով Երեւանի թեմական դպրոցը՝ նա անցել է մանկավարժական աշխատանքի, որպէս ուսուցիչ աշխատել Դարալագեազի, Աշտարակի գիւղական դպրոցներում: Որպէս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եռանդուն անդամներից մէկը, նա յիշեալ վայրերում կազմակերպչական մեծ աշխատանք է տարել ինքնապաշտպանական ջոկատներ ստեղծելու, հայ գիւղացիներին զինելու, զէնք ու զինամթերք կուտակելու ուղղութեամբ: Դաշնակցութեան ծաւալած աշխատանքի շնորհիւ 1905 թ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ հայկական զինուած ջոկատները, յատկապէս Դարալագեազում, զօրեղ հակահարուածներ հասցրեցին թուրք ջարդարարներին եւ փրկեցին բնակչութեանը կոտորածներից:

Ա. Աստուածատրեանը Թիֆլիսի պետական մանկավարժական ինստիտուտն աւարտելուց յետոյ (1910-1914 թթ.) զօրակոչւում եւ ծառայում է Երեւանի կայազօրում որպէս դատական բաժնի վարիչ, իսկ 1917 թ. փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ ընդգրկւում է Երեւանի նահանգի զինուորական խորհրդի գործադիր կոմիտէի մէջ: Յետագայում Դաշնակցութեան կողմից նշանակւում է Երեւանի Հայոց Ազգային խորհրդի անդամ: Երբ 1917 թ. վերջերին Արամ Մանուկեանը, որպէս Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի անդամ, գալիս է Երեւան, ստեղծւում է Յատուկ կոմիտէ, որի մէջ Ա. Մանուկեանից ու Մկրտիչ Մուսինեանից բացի ընդգրկւում է նաեւ Ա. Աստուածատրեանը: «Յատուկ կոմիտէն,- ըստ Սիմոն Վրացեանի,- երկրի փաստական իշխանութիւնն էր», իսկ երբ ստեղծւում է Վարիչների մարմինը, Ա. Աստուածատրեանը եւս ընդգրկւում է նրա մէջ, որտեղ ստանձնում է երկրի ինքնապաշտպանութիւնն ապահովող կարեւոր պաշտօն:

Յովհաննէս Քաջազնունու կառավարութեան մէջ Ա. Աստուածատրեանին տրւում է Լուսաւորութեան նախարարութիւնը՝ որպէս Արամ Մանուկեանի օգնական: Յետոյ նա ընտրւում է Երեւանի քաղաքապետի օգնական, իսկ Մ. Մուսինեանի հրաժարումից յետոյ դառնում Երեւանի քաղաքապետ:

Խորհրդային կարգերի հաստատումից յետոյ, ի թիւս այլ բարձրաստիճան պաշտօնեաների, Ա. Աստուածատրեանը բանտարկւում է, բայց 1921 թ. փետրուարեան ապստամբութեան շնորհիւ ազատւում է եւ Հայրենիքի փրկութեան կոմիտէի որոշմամբ կրկին դառնում Երեւանի քաղաքապետ: Ապստամբութեան պարտութիւնից յետոյ նա անցնում է Իրան, դառնում Հայաստանի վտարանդի կառավարութեան անդամ, յետոյ մեկնում է Չեխոսլովակիա, այնտեղից էլ՝ Հարաւսլաւիա:

Մինչեւ կեանքի վերջը նա ապրում է Բելգրադում, Ս. Վրացեանի խօսքերով՝ «Կենդանի կապ պահելով հայ իրականութեան հետ՝ ուշադրութեամբ հետեւելով Սփիւռքի ու Հայաստանի կեանքին ու աշխատակցելով արտասահմանի հայ մամուլին... Նրա բովանդակալից ու հետաքրքրական յօդուածները... սիրով կարդացւում են բոլոր ընթերցողների կողմից» (տես Ա. Աստուածատրեանի «Սարդարապատի պատմաշինութիւնը» գրքի համար Ս. Վրացեանի գրած առաջաբանը, Երեւան, 2007, էջ 19-20):

Ա. Աստուածատրեանը մահացել է Բելգրադում 1973 թ., 90 տարեկան հասակում: Վերջերս Երեւանում, տողերիս հեղինակի աշխատակցութեամբ, «Հայագիտակ» հրատարակչութեամբ լոյս ընծայուեց Ա. Աստուածատրեանի «Սարդարապատի պատմաշինութիւնը եւ այլ երկեր» վերնագրով (830 էջ) գիրքը, որի մէջ տեղ են գտել նրա երկու տասնեակից աւելի աշխատութիւններ:

Արշալոյսի աւագ դուստր Էմմայի (1918-2005 թթ.) որդի Սուրէն Յուսինեանը (մասնագիտութեամբ քիմիկոս) Բելգրադից բերեց եւ ինձ յանձնեց իր պապիկից մնացած թղթերը, որոնց մէջ էր նաեւ 1963-1977 թթ. նրա գրած նամակների սեւագրութիւնների մատեանը: Նա թղթակցել էր իր մտերիմների եւ շատ յայտնի գործիչների՝ Սիմոն Վրացեանի, Արշամ Խոնդկարեանի, «Հայրենիք» ամսագրի երկարամեայ խմբագիր Ռուբէն Դարբինեանի հետ: Ստորեւ հրապարակում ենք այդ մատեանի մէջ եղած Ա. Աստուածատրեանի նամակները՝ հասցէագրուած Ռ. Դարբինեանին:

Վարդան ԳՐԻԳՈՐԵԱՆ
Պատմական գիտութիւնների դոկտոր

1963 թ., Բելգրադ

Սիրելի ընկեր Ռ. Դարբինեան

Հիւանդութեան պատճառով մայիսի 9-ի Ձեր նամակին պատասխանում եմ ուշացումով: Նախ հիւանդացայ ես, պառկեցի 15 օր, ապա դեռ ոտքի չելած, պառկեց կինս՝ ծանր հիւանդութեամբ: Շատ էի մտահոգուած, բայց, բարեբախտաբար, տագնապն անցաւ եւ այժմ նա էլ է ոտքի վրայ: Վեցի քան մի ամիս ոչինչ չեմ կարողացել անել՝ ամբողջովին տարուած լինելով տան հոգսերով: Գոհ եմ, որ յօդուածներս տեղ են հասել: Յոյս ունեմ, որ մի քանի օրից յետոյ կ'ուղարկեմ նաեւ Վրամի կենսագրութիւնը՝ վերջացնելու վրայ եմ:

Երախտագէտ եմ Ձեր հետաքրքրութեան համար իմ առողջական ու նաեւ նիւթական վիճակով: Առողջութիւնս ընդհանրապէս վատ չէ ի նկատի ունենալով տարիքս (մօտերս մերոնք «տօնեցին» ութսունամեակս): Բայց վատ է աչքերիս վիճակը, որը տարօրինակ կերպով է արտայայտւում՝ կարդալ-գրելուց դուրս տեսողութիւնս գրեթէ նորմալ է: Միշտ ի նկատի առնելով տարիքս, սակայն, յաճախ բնաւ կամ գրեթէ բնաւ չեմ կարողանում կարդալ, ստիպուած եմ օրեր հանգիստ տալ աչքերիս, որից յետոյ մի երկու օր կարողանում եմ աշխատել: Դրանից յետոյ նոյն պատմութիւնը: Գրելն աւելի դիւրին է՝ համեմատած կարդալու հետ: Դժբախտութիւնը նրանումն է, որ այստեղ լաւ մասնագէտ ակնաբոյժներ չկան, եղածները միջակութիւններ են: Ընդհանուր կերպով խորհուրդ են տալիս նուաղագոյնի հասցնել զբաղմունքներս (կարդալ-գրելը), եթէ չեմ կարող իսպառ ձեռք քաշել:

Գալով նիւթական վիճակիս պիտի ասեմ, որ այն նախանձելի վիճակում չէ, որ զարմանալի եւ չէ՝ ի նկատի ունենալով մեր պայմանները: Քանի որ հնարաւոր էր մասնաւոր գործով զբաղուել, մեր նիւթական վիճակը վատ չէր. կինս բժշկուհի է (աւարտել է Կիեւի համալսարանը՝ մասնագիտութեամբ ատամնաբոյժ): Ես էլ գնացի Փարիզ եւ սովորեցի տեխնիկան եւ աշխատում էինք միասին: Մի քանի տարի առաջ օրէնքով արգելուեց (բժիշկների համար) մասնաւոր պրակտիկան, մենք ստիպուած հաշուեյարդարի ենթարկեցինք մեր գործը եւ այժմ անգործ ենք: Մենք այստեղ ունէինք տուն, որի եկամուտը բաւական էր մեր ծերութեան օրերն ապահովելու համար: Բայց այդ տունն էլ ազգայնացրին (ձեռքներիցս առան)՝ թողնելով մեզ մի բնակարան, այն էլ վարձով... Այժմ մեզ օգնում է կնոջս եղբայրը, նոյնպէս բժիշկ է, ժիր ծերունի եւ ստանում է կենսաթոշակ (երկար ժամանակ պետ. պաշտօնեայ է եղել):

Այս պատմութիւն-գլխացաւանքը Ձեզ տուեցի՝ գաղափար տալու մեր նիւթական վիճակի մասին:

Այսուհանդերձ, իրաւունք չեմ համարում Ձեզ դիմելու եւ դրամ խնդրելու: Դուք այդ իմաստով օգնած կը լինեք ինձ, եթէ բարի լինեք եւ Ձեր հնարաւորութեան, շուտ հրատարակութեան տաք իմ յօդուածները:

Ի վերջոյ, ներողամիտ եղէք այս գլխացաւանքի համար:

Ձերմ բարեւներով եւ բարի ցանկութիւններով՝

Ձերդ Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

12-17.08.63 թ.

Սիրելի ընկեր Ռ. Դարբինեան

Ուղարկում եմ Ձեզ Վրամի կենսագրութիւնը ամսագրում հրատարակելու համար խնդրանքով: Վրամի լրիւ, ամբողջական կենսագրութիւնը կազմողը անհրաժեշտ է, որ Ա.Յ.Դաշնակցութեան Բիւրոյի դիւանից օգտուելու հնարաւորութիւն ունենայ: Ես, դժբախտաբար, այդ հնարաւորութիւնը չեմ ունեցել, ուստի այս գործը չի կարելի Վրամի ամբողջական կենսագրութիւն համարել: Սա մի փորձ է միայն, չգիտեմ՝ որքան յաջող:

Վրամի կենսագրութեան մէջ կայ մի կէտ, որի առթիւ անհրաժեշտ եմ համարում մի քանի խօսք ասել. դա Վրամի եւ Դրոյի յարաբերութիւնների հարցն է: Իմ յուշերում Վրամի մասին, որ լոյս են տեսել «Հայրենիք» ամսագրում եւ «Վէմ»-ում, այդ հարցի մասին ես անցել եմ լռութեամբ, աննպատակայարմար համարելով խօսել այդ տխուր ու ցաւալի պատմութեան մասին: Ես այդ բանն անում եմ հարկադրական եւ ահա թէ ինչու:

Դրոյի մահից յետոյ շատերս գրել ենք նրա մասին այս կամ այն չափով եւ ձեւով՝ մատնանշելով հանգուցեալի ցոյց տուած իրական ծառայութիւնները մեր ժողովրդի համար, սակայն եղան ընկերներ, որոնք Դրոյին արեցին վերագրումներ, որոնք աղերս չունեն իրականութեան հետ, նրան վերագրեցին գործեր, որ նա չի արել, այլ արել են ուրիշները:

Կարծում եմ, որ պատմութեան առաջ հասարակական գործիչը հանդէս պիտի գայ իր կատարած գործերով եւ ոչ թէ ուրիշների:

Դրօն իբրեւ բնածին տաղանդաւոր զինուորական գործիչ, այդ գծով (զինուորական) խոշոր գործեր է արել եւ այդ իմաստով էլ նրա անունն անցել է պատմութեան մէջ: Սակայն նրան վերագրել այնպիսի ազգային-հասարակական գործեր, որպիսին են Հայաստանի Հանրապետութեան մաքրագործումը օտար-թշնամի տարրերից կամ համարել նրան Հայաստանի Հանրապետութեան հիմնադիրներից մէկը, Երեւանի Ազգային խորհրդի գործնական շրջանում (դնելով նրան Վրամի կողքին - ջնջուած է՝ Վ. Գ.) գրեթէ հաւասար Վրամին, այդ կը նշանակէ թիւրիմացութեան մէջ լինել, անտեղեակ իրականութեան: Անտեղեակ նաեւ Վրամի եւ Դրոյի փոխյարաբերութեան՝ Երեւանի Հայոց Ազգային խորհրդի գործունէութեան շրջանում: Երեւանի այդ շրջանի գործիչներից ոչ ոքի գլխով չէր անցնի նման միտք. ոչ ոք Դրոյին Վրամի կողքին չէր դնի՝ վերոյիշեալ իմաստով: Միայն մի օրինակ. երբ Վրամը հրաժարուեց զինուորական վարիչի պաշտօնից, առաջարկելով Կենտրոնական կոմիտէին այլ թեկնածու ընտրել, այդ կոմիտէի անդամներից եւ ոչ մէկը տուեց Դրոյի անունը իբր յարմար թեկնածու այդ պաշտօնի համար: Ինչո՞ւ, որովհետեւ բոլորի համար պարզ էր, որ այն օրերին այդ պաշտօնի համար միայն զինուորական լինելը բաւական չէր, այլ անհրաժեշտ էր ունենալ եւ այլ յատկութիւններ, որոնցից զուրկ էր Դրօն: Իսկ լոկ զինուորական վարիչի պաշտօնի համար կային աւելի հեղինակաւոր ու ձեռնհաս զինուորականներ, ինչպէս օրինակ զօրավար Սիլիկեանը, որի վրայ եւ կանգ առաւ Կենտրոնական կոմիտէն: Սակայն Սիլիկեանն էլ հրաժարուեց եւ չընդունեց այդ պաշտօնը նոյն պատճառաբանութեամբ: Եթէ Դրօն, իբր հանրային-ազգային դէմք ի վիճակի լինէր փոխարինել Վրամին եւ ոչ մի կասկած, որ Կենտրոնական կոմիտէն անվարան կանգ կ'առնէր նրա թեկնածուութեան վրայ: Իսկ Վրամը Վարիչների մարմնի մէջ խուսափեց մտցնել նաեւ Դրոյին, թէեւ շատ յարմար պաշտօն կար նրա համար - ինքնապաշտպանութեան վարիչի պաշտօնը:

Դրօն Երեւանի Ազգային խորհրդի օրօք ինչ էլ որ արել է, արել է ի պաշտօնէ, ինչպէս միւս աչքի ընկնող զինուորականները, բայց ոչ իբրեւ առաջնորդող, իբրեւ ղեկավար հասարակական դէմք, ինչպէս յետին թուով նրան ներկայացնում են:

Ահա այդ թիւրիմացութիւնը ցրելու եւ իրականութիւնը մատնանշելու հանգամանքն է ինձ ստիպել այս անգամ հանգամանօրէն խօսել Վրամի եւ Դրոյի յարաբերութեան մասին, զանց առնելով այդ պատմութեան աննպաստ տպաւորութիւնը Դրոյի համար: Գուցէ այս վերջին պարագան աչքի առաջ ունենալով, Դուք աննպատակայարմար համարեք այդ պատմութեան հրատարակելը եւ յապաւեք այդ: Այդ, ի հարկէ, Ձեր իրաւունքն է: Ունենալով հանդերձ այդ գիտակցութիւնը եւ առաջին անգամ լինելով, ես խնդրում եմ Ձեզ այդ բանը չանել՝ յանուն պատմական ճշմարտութեան: Այս յատկապէս այն դէպքում, եթէ կենսագրութիւնը յարմար համարէք ամսագրի համար:

Ձերմ բարեւներով՝ **Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ**

21.07.59 թ., Բելգրադ

Սիրելի ընկեր Ռ. Դարբինեան

Վյսօր «Յուսաբերից» իմացայ, որ ՀՅԴ Ամերիկայի Կենտրոնական կոմիտէի նախաձեռնութեամբ տօնուել է Ձեր գործունէութեան յիսնամեայ յոբելեանը: Կարդացի, լրագիրը մի կողմ դրի ու սկսեցի մտածել Ձեր մասին, Ձեր կատարած գործերի մասին: Դուք Ձեր երկարամեայ գործունեութեամբ մեր ազգի մշակութային ու յեղափոխական կեանքում բացառիկ մխիթարական երեւոյթների շարքին էք պատկանում: Ձեր գիտակցական կեանքի արշալոյսից մինչեւ մեր օրերը, յիսուն տարի շարունակ, Դուք՝ ուր որ էլ եղել էք՝ մեծ նուիրումով, հետեւողականութեամբ, տաղանդով ու յաջողութեամբ ծառայել էք մեծագոյն գաղափարներին – Ազգ, Հայրենիք, Մշակոյթ: Այդ պատճառով էլ իրաւամբ վայելում էք բոլորիս անվերապահ յարգանքը, համակրանքն ու սէրը: Ամբողջ սրտով ցանկանում եմ, որ երկար կեանք ունենաք եւ շարունակեք Ձեր ազգանուէր գործը:

Ընկերական ջերմ բարեւներով՝ **Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ**

12.12.63, Բելգրադ

Սիրելի ընկեր Ռ. Դարբինեան

Ներողամիտ եղէք, որ ժամանակին հնարաւորութիւն չեմ ունեցել շնորհակալութիւն յայտնել Ձեզ սեպտեմբերի 9ի նամակում արտայայտած գնահատականի համար Արամի կենսագրութեան մասին: Ձեր ջերմ վերաբերմունքը կրկնակի արժէք ունի, որովհետեւ խօսքը վերաբերում է Արամին: Իմ յիշողութեան մէջ Արամի ու Ռուբէնի անունները կապուած են անբակտելի կապերով: Երբ գրում էի Արամի մասին, գրեթէ շարունակ մտածում էի նաեւ Ռուբէնի մասին. իմ մտքում, կրկնում եմ, նրանք կանգնած են կողք-կողքի՝ անբաժանելի: Թէեւ բոլորովին տարբեր նկարագրի տէր մարդիկ էին, բայց զարմանալիօրէն կապուած էին իրար՝ իրենց վերաբերմունքով դէպի այն գործը, որին ծառայելու համար աշխարհ էին եկել:

Երբ վերջացրեցի Արամի կենսագրութիւնը եւ ուղարկեցի Ձեզ, մտքովս անցաւ՝ «եթէ յաջող համարուի, պէտք է մտածել նաեւ Ռուբէնի կենսագրութեան մասին»: Ձեր վերաբերմունքը դէպի Արամի կենսագրութիւնը խթանի դեր է կատարում եւ բարոյական պարտականութիւն է դնում վրաս՝ աշխատել իրականացնել այդ մտածումս, թէեւ զգում եմ, որ իմ պայմաններում դժուար է այդ գործը յաջողութեամբ գլուխ հանել, իսկ առանց դրսի օգնութեան՝ գրեթէ անհնարին: Ուստի, առաջին հերթին դիմում եմ Ձեզ: Ինձ լաւ ծանօթ է Ձեր գրութիւնը, որ տեղ է գտել Ռուբէնի «Յիշատակների» առաջին հատորում՝ «Առաջաբանի տեղ» վերնագրով ու կենսագրական արժէքաւոր տեղեկութիւններով: Եթէ դրանից դուրս որեւէ կերպ ի վիճակի էք օգնել ինձ, շատ շնորհակալ կը լինեմ:

Վերջին նամակում առողջութիւն եւ յաջողութիւն էիք ցանկանում: Շնորհակալութիւն Ձեր բարի ցանկութեան համար, բայց գիտէք՝ հասած ենք այնպիսի տարիքի (ութսունս անցել է), որ առողջութեան մասին մտածելը մի տեսակ շռայլութիւն է, հասած պտուղներ ենք, մի թեթեւ քամի եւ չկանք...

Ի վերջոյ՝ մի ցանկութիւն: Ձեզ մօտ ունեմ երեք գրութիւն (Արամի կենսագրականով), պիտի խնդրէի, որ նախ հրատարակութեան տայիք Արամի կենսագրութիւնը, եթէ հնարաւոր է չուշացնեք:

Շատ ջերմ բարեւներով եւ լաւագոյն ցանկութիւններով՝ Ձերդ

Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

18.12.63, Բելգրադ

Սիրելի ընկեր Ռ. Դարբինեան

Մի քանի օր առաջ մի նամակ ուղարկեցի Ձեզ, իսկ երէկ ստացուեց «Հայրենիք» ամսագրի նոյեմբեր թիւը, ուր տեղ է գտել նաեւ Վրամի կենսագրութեան առաջին մասը, ուստի անյարմարութեան զգացում ունեցայ «առաջ վազելուս» համար:

Աղբիւրների ցանկում ցոյց չի տրուած տարաբախտ Օննիկ Մխիթարեանի «Վանի ինքնապաշտպանութիւն» աշխատութիւնը, որից շատ եմ օգտուել: Չգիտեմ՝ ե՞ս եմ մոռացել յիշատակել, թէ գրաշարների անուշադրութեան հետեւանք է: Այսպէս թէ այնպէս, կարծում եմ, պէտք է յիշատակել նաեւ այդ աղբիւրի մասին եւ խնդրում եմ առաջիկայ համարներից մէկում այդ բանն անել:

Առիթից օգտուելով շնորհաւորում եմ Ձեր Նոր տարին եւ ցանկանում առողջութիւն եւ յաջողութիւն:

Սիրով Ձերդ.

Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

Սիրելի ընկեր Ռուբէն

Շնորհակալութեամբ ստացայ Ձեր ուղարկած 50 դոլարի չէկը յունուարի 3-ի նամակի հետ միասին: Միայն մի բան. այստեղի դրամատունը պահանջում է, որ չէկում անունս լրիւ գրուած լինի, այսինքն՝ Արշալոյս Աստուածատրեան եւ ոչ Ա. Աստուածատրեան: Անցեալներում ես այդ մասին գրել եմ «Հայրենիքի» վարչութեանը: Երեւում է, որ այդ մասին Ձեզ չեն յայտնել: Խնդրում եմ այդ հանգամանքը միւս անգամ ի նկատի ունենաք, որպէսզի դրամատանը գլխացաւանք չունենամ: Զգուշացրեցին, որ միւս անգամ չեն ընդունի, եթէ անունս լրիւ գրուած չլինի:

Դոլարները ճիշտ ժամանակին հասան: Կինս եւ փոքրիկ աղջիկս միտք ունեն Երեւան գնալու մեր աղգականներին տեսնելու համար (երեւանցի ենք): Բայց վալիւտա չունենք, այդ պատճառով մտահոգուած ենք (դինարներն այս երկրի սահմաններից դուրս արժէք չեն): Դինարով տոմսակ կարող եմ առնել մինչեւ Մոսկուա, բայց յետոյ՝ կամ դոլար, կամ ռուբլի պիտի ունենալ, որ «Աստուած տայ»...

Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

22.1, երկտողը՝ 3.2.64

Սիրելի ընկեր Ռուբէն

Շնորհակալութեամբ ստացայ Ձեր ուղարկած 38,5 դոլարի չէկը: Մի քանի օր առաջ գրաւոր խնդրել եմ, որ չէկի վրայ անունս լրիւ գրէք եւ ոչ միայն առաջին տառերը: Խնդրում եմ այսուհետեւ դրամ չուղարկել մինչեւ ինձ հասանելիք հոնորարը հասնի հարիւր դոլարի եւ այն ժամանակ ուղարկեցէք կնոջս անունով – Anait Astvacatrian-Muradian, Ruzveltowa 38, Belgrad, Yugoslavia:

Խնդիրը նրանումն է, որ կինս պատրաստւում է Երեւան գնալու, եթէ թոյլ տան (շատ հաւանական է համարում), վիզան հազիւ օգոստոս-սեպտեմբերին ստացուի: Իսկ դրամը խնդրում եմ նրա անունով ուղարկել, որովհետեւ այդպէս աւելի նպատակայարմար է, ամէն կարգի դժուարութիւններից ազատ ենք:

Մենք Երեւանում շատ ազգականներ ունենք, մանաւանդ կինս: Խնդրում եմ, որ գոնէ մի ամսով գնայ: Կինս էլ է ուզում, թէեւ առողջական վիճակը երեւելի չի: Երկար ժամանակով չէի համաձայնւում, վախենում էի միայնակ թողնել: Այժմ վստահելի մարդ կայ, որի հետ միասին են գնալու:

Գալով Ռուբէնի կենսագրութեանը, պիտի նորից ասեմ, որ Ձեր այնքան դրական վերաբերմունքը դէպի Արամը եւ ինձ շատ է խրախուսում, եւ ինչ որ կախուած է ինձանից, ես կ'անեմ՝ Ռուբենի կենսագրութիւնն էլ գլուխ հանելու համար: Մտածում եմ, եթէ անգամ դրսից տեղեկութիւններ չստանամ, բաւականանամ ձեռքի տակ ունեցած նիւթերով: Գրել եմ Փարիզ թէ Ռուբէնի կնոջը եւ թէ Ա. Խոնդկարեանին: Ցանկութիւն է՝ կապուել Ռուբէնի մեծ որդու հետ այն յոյսով, որ նա ինձ որոշ հարցերում կ'օգնի: Անհամբեր սպասում եմ պատասխանի:

Այսպէս թէ այնպէս, որոշումս վերջնական է՝ գրելու եմ: Ժամանակի խնդիր է: Թէ ընտանեկան պայմանները եւ թէ մանաւանդ աչքերիս վիճակը թոյլ չեն տալիս ուզածս չափով ու տեմպով աշխատել: Դուք չէք հաւատայ, եթէ ասեմ, որ Արամի կենսագրութեան վրայ աշխատել եմ տարուց աւել: Բայց շատ գոհ եմ, որ յաջող է ստացուել: Անկեղծօրէն ասեմ, չէի սպասում:

Ձեր առողջական վիճակը շատ է ուրախացնում ինձ: Յիշում եմ, անցեալներում հանգուցեալ Վահանը (Նաւասարդեան) իր նամակներից մէկում խօսելով Ձեր մասին, ի միջի այլոց, գրում էր. «Մեր մէջ միակ առողջ մարդն է»: «Մեր»՝ այսինքն ղեկավարների, խմբագիրների: Անչափ ուրախ եմ, որ նրա ասածը ճիշտ է դուրս գալիս:

Մի քանի օր առաջ նամակ ունէի Արշամից, որը նոյնպէս 81 տարեկան է, բայց բաղմաթիւ հիւանդութիւններ ունի եւ, բնականաբար, շարունակ տառապում է: Երեւակայեցէք, որ նա էլ է մտածում Հայաստան գնալու մասին – մօտ ազգականների կարօտը քաշում է:

Ջերմ բարեւներով եւ բարի ցանկութիւններով՝ Ձերդ **Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ**

16.4.64, Բելգրադ

Սիրելի ընկեր Ռ. Դարբինեան

Շնորհակալութեամբ ստացայ Ձեր ուղարկած 54 դոլարի չէկը՝ երկտող նամակի հետ: Մի քանի օր առաջ ստացել եմ Ձեր նախորդ նամակը, որը կարդալով մի տեսակ անյարմարութեան զգացում ունեցայ: Ձեր այդ նամակից երևում է, որ ես կանխավճար եմ խնդրել, իսկ «Հայրենիքի» վարչութիւնը աւանս չէր տալու: Բայց ես աւանս չեմ խնդրել, այլ խնդրել էի ինձ դրամ չուղարկել մինչեւ ինձ հասանելիք հոնորարը հասնի հարիւր դոլարի: Գուցէ Դուք Ձեր նախաձեռնութեամբ եք կամեցել կանխավճար ուղարկել ինձ (գրել էի, որ կինս դիմում է կատարել Երեւան գնալու, բայց դոլարի կարիք ունենք)...

Գալով Ռուբէնի կենսագրութեանը պիտի ասեմ, որ այդ ուղղութեամբ աշխատում եմ: Նորից կարդում եմ իր «Յիշատակները»,նիւթեր եմ հաւաքում: Փարիզից մինչեւ օրս պատասխան չունեմ: Բայց Խոնդկարեանի նամակից գիտեմ, որ Վահիկը (Ռուբէնի մեծ որդին) Հնդկաստանում է եղել, այդ պատճառով էլ նամակս անպատասխան է մնացել, որ նոր է եկել եւ խոստացել է պատասխանել նամակիս: Միաժամանակ զգուշացրել է, որ շատ բան չպասեմ իրենից: Գրելու է նաեւ մայրը: Տեսնենք: Ինչ էլ որ լինի խոստումս կատարելու եմ՝ գրելու եմ: Կարող է մի քիչ ուշանալ, որովհետեւ, ինչպէս գրել եմ, ընդհատումներով եմ աշխատում աչքերիս հիւանդութեան պատճառով:

Դեռ յունուարի վերջերին ես Ձեր անունով ուղարկել եմ երկու գրութիւն Փետրուարեան ապստամբութեան մասին: Վրդեօք ստացե՞լ էք: Կարծում էի, որ մէկը կը դնեք օրաթերթում, բայց չերեւաց: Չէ՞ք ստացել, թէ անյարմար էք համարել:

Ջերմ բարեւներով՝ **Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ**

Սիրելի ընկեր Ռուբէն

Ուղարկում եմ Ռուբէնի կենսագրութիւնը: Ունեի քան չորս ամիս սպասեցի Ռուբէնի որդու՝ Վահիկի խոստացած տեղեկութիւններին՝ Ռուբէնի կեանքի սկզբնական շրջանի, ինչպէս նաեւ արտասահմանում նրա կատարած գործերի մասին: Միայն յուլիսի 4-ին ստացայ նրանից երեք ընդարձակ գրութիւններ՝ գրած Ռուբէնի քրոջ աղջկայ (Ամիրբեկեանի), տիկին Անանայի եւ իր՝ Վահիկի կողմից: Առաջին երկուսի մէջ «հուր» չկար. քիչ օգտուել եմ Վահիկի գրածից: Մինչ այդ ես իմ ձեռքի տակ եղած նիւթերը մշակել ու մասամբ էլ սպիտակին էի քաշել:

Ինչպէս Արամի կենսագրութիւնը, սա էլ մի փորձ է, որ ես անում եմ, գլխաւորապէս Ձեր խորհրդով: Յաջող է թէ ոչ, որոշողը Դուք էք:

Խնդրում եմ երկտողով յայտնեք գրութիւնս ստանալու մասին, որպէսզի վստահ լինեմ, որ տեղ է հասել:

Ջերմ բարեւներով՝ **Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ**

15.10.64, Բելգրադ

Սիրելի ընկեր Ռուբէն

Շնորհակալութեամբ ստացայ Ձեր ուղարկած 50 դոլարի չէկը՝ սեպտ. 25 նամակի հետ, որով յայտնում էք Ռուբէնի կենսագրութեան ստանալու մասին: Խնդրում եմ, երբ ծանօթանաք կենսագրութեան հետ, մի քանի տողով յայտնեք նաեւ Ձեր կարծիքը, որը բնականաբար հետաքրքրում է ինձ:

Վ. Մինախորեանի մահից յետոյ ես այստեղ կատարելապէս միայնակ եմ, որ շատ է նեղում ինձ: Այս ամառ մեր ընկերներից երկու հոգի այցելեցին Փարիզից: Յուլիսին եկաւ Ա. Փափազեանը, որից շատ տխուր տեղեկութիւններ իմացայ Սուրիայի մեր ընկերների քաշածների մասին եւ ապա մեր կուսակցութեան մէջ տեղի ունեցած, մեղմ արտայայտուած, տարաձայնութիւնների մասին: Շատ ցաւալի է, որ Ռոստոմների եւ Վրամների կուսակցութիւնը մտահոգիչ վիճակ է ապրում...

Եկաւ նաեւ Ռուբէնի մեծ որդին՝ Վահիկը, դժբախտաբար, շատ կարճ ժամանակով: Շատ լաւ տպաւորութիւն ստացայ: Ծանօթ էի միայն նամակագրութեամբ: Մօտը Ռուբէնից մնացած գրութիւններ կան. խորհուրդ տուի յանձնել կուսակցութեան դիւանին:

Վերջացնելով երկտողս՝ նորից խնդրում եմ Ռուբէնի կենսագրութիւնը աչքի անցկացնելուց յետոյ, գրեք Ձեր կարծիքը:

Ձերմ բարեւներով՝ **Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ**

25.11.64, Բելգրադ

Սիրելի ընկեր Ռուբէն

Շնորհակալութեամբ ստացայ նոյեմբեր 12-ի Ձեր նամակը 50 դոլ. չէկի հետ միասին:

Ես կասկած չունէի, որ Ռուբէնի կենսագրութիւնը թերութիւններ ունենալու է: Գոհ եմ, որ այդ թերութիւնները Դուք «պստիկ» էք համարում:

Դուք թերահաւատութեամբ էք վերաբերւում դէպի Ռուբէնի Տոմսկում լինելու հանգամանքը: Բայց այդ մասին թէեւ անցողակի, սակայն կասկած չվերցնող յիշատակութիւն կայ իր «Յիշատակներում»: Այդ մասին Ռուբէնը պատմել է նաեւ թէ կնոջը եւ թէ որդուն (Վահիկին), ինչպէս նաեւ Վրշամին: Այդ ես գիտեմ Վահիկի եւ Վրշամի ինձ գրած նամակներից: Միայն որոշ չէ Տոմսկ գնալու ժամանակը եւ այն թողնելու պատճառը: Ընդհանրապէս պիտի ասել, որ մինչեւ կուսակցութեան մէջ մտնելը, Ռուբէնի կեանքում տեղի ունեցած դէպքերի ճիշտ ժամանակը, տարիները անորոշ են:

Հոկտեմբերի սկզբներին հիւրի հանգամանքով շատ կարճ ժամանակով այստեղ ինձ մօտ եղաւ Վահիկը: Սրտաճմլիկ բաներ պատմեց իր հօր վերջին տարիների քաշած տառապանքների մասին: Ինչ-որ անիծած լեղու լուր է տարածել, թէ Գէորգ Չաւուշին Ռուբէնն է սպանել... Կարո՞ղ էք երեւակայել այդ սուտ լուրի բացասական տպաւորութիւնը մեր ընկերոջ վրայ: Որքան գիտեմ, Վրամից յետոյ Գ. Չաւուշն այն մարդն էր, որին շատ բարձր էր գնահատում Ռուբէնը: Իր գծի վրայ կանգնած ընկերների մէջ Վրամին էր բացառիկ համարում, իսկ զինուորների-ֆիդայիների մէջ՝ Չաւուշին: Լաւ յիշում եմ՝ իր յուշերում մի տեղ խօսելով Չաւուշի մասին՝ «մեծ մարդ» է համարում նրան: Կրկնում եմ, որքան ես գիտեմ, Վրամից բացի ոչ մէկի մասին Ռուբէնը նման կարծիքի չի եղել: Վահիկը չգիտէր, թէ որտեղի՞ց է ծագել այդ հրէշային լուրը: Հայրը չի ասել, շատ չի կամեցել այդ մասին խօսել (հաղիւ թէ կասկածելի է, որ այն մեր շարքային ընկերների, եւս առաւել զինուորների մտքի արգասիքն է: - Բնագրում այս նախադասութիւնը ջնջուած է՝ Վ. Գ.):

Հետաքրքրական բաներ է գրում նաեւ Խոնդկարեանը Ռուբէնի դաւադրական փորձի մասին՝ սպանել Չխենկելիին, գրաւել «дворец»ը, բանտարկել Կարծիկեանին, Գեգեչկորիին ու միւսներին:

Ռուբէնի այդ միտքը անհաւանական չեմ համարում, բայց կենսագրութեան մէջ անյարմար համարեցի այդ մասին յիշատակել:

Յոյս ունեմ, որ Ձեր առողջական վիճակը լաւ է: Մեծ հետաքրքրութեամբ ըստ սովորականի, կարդում եմ Ձեր յօդուածները:

Ձերմ բարեւներով ու բարի ցանկութիւններով՝ **Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ**

12.02.65 թ., Բելգրադ

Սիրելի ընկեր Ռուբէն

Եփրեմի նամակից իմացայ Ձեզ հետ պատահած արկածի-դժբախտութեան մասին եւ սիրտս կծկուեց ցաւից ու երկար ժամանակ չէի կարողանում հանգստանալ... Ինչպէ՞ս կարող էք այդքան անզգոյշ լինել: Ճակատագիրը խնայել է Ձեզ եւ բոլորիս եւ... թեթեւ էք պրծել: Եթէ հաւատացող լինէի, այդ առթիւ անպայման կը գնայի եկեղեցի, մոմ կը վառէի եւ աղօթք կանէի ամենակարողին առ այն, որ շուտ ապաքինուեք եւ դառնաք Ձեր աշխատանքներին:

Ձերմ բարեւներով ու սիրով՝ **Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ**

Հ. Գ. Մի երկու օր առաջ մի յօդուած ուղարկեցի Մ. Թոլչեանին Վ. Մինախորեանի մասին մահուան 20-ամեակի առթիւ՝ օրաթերթի համար: Այդ գրութիւնը աւելի յարմար կը լինէր ամսագրի համար, բայց այն անհնշան փոփոխութեամբ անցեալները լոյս է տեսել ամսագրում:

Նոյն

25.08.65 թ., Բելգրադ

Սիրելի ընկեր Ռուբէն

Եփրեմի վերջին նամակից իմացայ, որ Ձեր առողջական վիճակը լաւանում է եւ Դուք շուտով հնարաւորութիւն կ'ունենաք վերադառնալու տուն՝ Բոստոն: Այդ առթիւ յայտնում եմ իմ անկեղծ ուրախութիւնը, որ կասկած չունեմ ուրախութիւնն է հայերէն բոլոր մտածողների:

Ձերմ բարեւներով ու բարի ցանկութիւններով՝ **Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ**

4.05.66, Բելգրադ

Սիրելի ընկեր Ռուբէն

Լոս-Անջելեսից Եփրեմի գրած նամակից գիտէի, որ Ձեր առողջական վիճակը այնքան լաւացել է, որ գնացել էք Ձեր տուն՝ Բոստոն: Այնուհետեւ սպասում էի Ձեր գրութիւնների երեւան գալուն օրաթերթում: Սպասումս երկար տեւելով՝ անհանգստացայ եւ մի երկտողով գրեցի ընկեր Վոլոդեային՝ տեղեկութիւններ խնդրելով Ձեր մասին: Մի երկու օր առաջ եկաւ նրա պատասխանը, որով յայտնում էր, որ բոլորովին կաղդուրուել էք եւ անցել Ձեր սովորական աշխատանքներին: Գրեթէ միաժամանակ եկան եւ թերթերը, որոնցից մէկում կար եւ Ձեր յօդուածը:

Ինչ խօսք, որ շատ ուրախացայ եւ այս տողերը գրում եմ հանգիստ սրտով:

Ամսագրի վերջին համարներում չկայ Ռուբէնի կենսագրութեան շարունակութիւնը: Չլինի թէ Ձեր բացակայութեան ժամանակ «դժբախտութիւն» է պատահել գրածիս հետ:

Ամսագրի համար մի յօդուած էլ եմ ուղարկել («Սովետական Հայաստանը բոլոր աշխատաւոր հայերի հայրենիքն է»): Արդեօք ստացե՞լ էք, թէ ոչ եւ եթէ այո, յարմա՞ր էք համարում տպագրելու համար:

Վերջացնելով երկտողս՝ ցանկանում եմ, որ եկող 1966 տարին ըստ ամենայնի լինի յաջողութեան տարի:

Ձերմ բարեւներով՝ Ձերդ Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

14.06.66, Բելգրադ

Սիրելի ընկեր Ռուբէն

Քիչ ուշացումով ստացել եմ Ձեր 7.04-ի վերջին նամակը՝ չէկի հետ միասին: Շնորհակալութիւն:

Բէյրութի ընկերները ուղարկել էին ինձ Յ. Թուրշեանի «Սարդարապատի հերոսամարտը» գիրքը՝ խնդրելով գրախօսել այն:

Չգիտեմ, ծանօթ էք այդ գրքին, թէ ոչ: Թէեւ գրքի բովանդակութիւնը այնքան էլ չի համապատասխանում վերնագրին: Գրքի բովանդակութիւնը վերաբերում է քաղաքական այն անցուդարձին, որ ստեղծուել էր Մնդրկովկասում ռուսական յեղափոխութիւնից յետոյ եւ որը սերտ կապ ունէր հայ կեանքի հետ: Միաժամանակ հեղինակի նպատակն է վարկաբեկել Դաշնակցութեանը եւ դաշնակցականներին՝ վարէն վեր՝ պղտոր ջրով լուանալով նրանց գործունէութիւնը այդ շրջանում: Տեղ-տեղ գիրքը պարսաւագրի տպաւորութիւն է ձգում: Հեղինակը ձեռքի տակ ունեցել է նիւթին վերաբերող բազմաթիւ աղբիւրներ, որոնք օգտագործում է «նպատակայարմար» ձեւով, միշտ դաշնակցականներին մրոտելու նպատակով:

Այդ գրքի առթիւ ես մի ընդարձակ գրութիւն կազմեցի եւ ուղարկեցի Բէյրութի ընկերներին: Հաւանել են եւ մտադիր են առանձին գրքոյկով հրատարակել, ենթադրելով, որ այդ ձեւով աւելի շատ ընթերցողներ կ'ունենան երկրում: Եթէ յարմար համարեք, այդ գրութիւնը կ'ուղարկեմ Ձեզ, բայց ամսագրի համար մի քիչ ընդարձակ է՝ մօտ հարիւր տասը էջ: Կարող եմ կրճատել, եթէ այդ ցանկալի համարեք: Վչքերիս վիճակն ի նկատի ունենալով է, որ առանց Ձեր կարծիքն իմանալու չեմ վստահանում ուղարկել:

Այժմ մի այլ խնդիր:

Արդեօք Կենտրոնական կոմիտէն հնարաւորութիւն ունի՞ Արամի ու Ռուբէնի կենսագրութիւնները միասին առանձին գրքով հրատարակելու: Այս դիմումը որեւէ նիւթական ակնկալութիւն չունի. այդ տեսակէտից բոլոր իրաւունքները վերապահում եմ հրատարակողին:

Այս դիմումը ես Ձեր միջոցով եմ անում Ամերիկեան Կենտրոնական կոմիտէին այն վստահութեամբ, որ համաձայնութեան դէպքում որեւէ կրճատում չի արուի: Կենսագրականները կը հրատարակուեն նոյն վիճակում, ինչ վիճակում լոյս են տեսել Ձեր խմբագրութեան ամսագրում: Այս նպատակով է, որ ուրիշ դուռ կայ, բայց չեմ ուզում թակել: Մեծ յոյս ունեմ նաեւ Ձեր բարոյական աջակցութեան (խօսքի) վրայ:

Ձերմ բարեւներով Ձեր **Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ**

5.03.67, Բելգրադ

Սիրելի ընկեր Ռուբէն

Հիւանդ պառկած էի, երբ ստացուեց յունուարի 16-ի թուակիրը, որով իմացնում էք, թէ հնարաւոր չէք համարում դնել ամսագրում «Սարդարապատի» մասին ուղարկածս գրութիւնը եւ որ «Հայրենիքի» տպարանն էլ հնարաւորութիւն չունի առանձին գրքով լոյս ընծայելու Արամի եւ Ռուբէնի կենսագրականները: Միաժամանակ ցանկութիւն էք յայտնում - եթէ նոր գրութիւն ունեմ ամսագրի համար, ուղարկեմ Ձեզ:

Ներփակ ուղարկում եմ «Հայ ժողովրդի ողբերգութիւնը» գրքի գրախօսականը, որը անցեալ տարի լոյս տեսաւ «Յուսաբերում»: Այդ գրութիւնը վերամշակելով ուղարկում եմ ամսագրի համար:

Այժմ առողջական վիճակս համեմատաբար լաւ է:

Ձերմ բարեւներով ու սիրով՝ **Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ**

14.12.67 թ., Բելգրադ

Սիրելի ընկեր Ռուբէն

Ստացայ 2 դեկտեմբերի թուակիր Ձեր նամակը:

Ուրեմն ամսագիրը մօտ քառասուն եւ հինգ տարի պատուով ծառայելով իր կոչմանը - հայ մշակոյթին ու Հայ Դատին - հանգստի է կոչւում: Ամսագրի ընտանիքի անդամները սիրով պէտք է բաժանուեն նրանից՝ լաւագոյն յուշեր պահելով իրենց սրտերում: Նոյն վերաբերմունքը պէտք է ունենան դէպի ամսագրի խմբագրապետը:

Մի երկու օրից կ'ուղարկեմ Ձեզ մի գրութիւն Փետրուարեան ապստամբութեան մասին:

Խորին ցաւով կարդացի Ձեր աչքերի մասին... Այնուամենայնիւ, զարմանալի տոկունութեամբ շարունակում էք Ձեր պատասխանատու աշխատանքները: Մի ցանկութիւն ունեմ - երկար ու երկար տեւի այդ տոկունութիւնը:

Բարեւներով ու սիրով՝ **Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ**

1.01.68 թ., Բելգրադ

Սիրելի ընկեր Ռուբէն

Ստացայ «Հայրենիք» ամսագրի անցեալ տարուայ վերջին (դեկտեմբեր)-ի համարը: Իմ գրութեան մէջ մի անախորժ սխալ կայ: 69 էջում վերից վար 8-րդ տողում գրուած է «Ճանապարհին հանդիպում են 67 հայ զինուորներ»: Սխալ է ցոյց տուած թիւը: Պիտի լինի 6-7 (վեց-յոթ):

Կարծում եմ ամսագրի առաջիկայ համարում այդ սխալը պէտք է շտկել:

Ձերմ բարեւներով՝ **Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ**

8.08.68 թ., Բելգրադ

Սիրելի ընկերներ

Խորին ցաւով կարդացի մեր սիրելի ընկ. Ռուբէն Դարբինեանի մահուան մասին: Կորուստն այնքան մեծ է, որ խօսք չեմ գտնում մխիթարելու ձեզ եւ բոլորիս...

Թող իր կեանքը օրինակ լինի մեզ, իսկ յիշատակը յաւէտ անմոռանալի:

Ա. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ ԵՒ ԿԱՆԽՈՐՈՇՈՒՄ

Կանխատեսումն իրականութեան իմացութեան վրայ հիմնուած ապագայի, գալիքի, հնարաւոր զարգացումների ու արդիւնքի գուշակութիւնն է: Որքան մեծ է իրականութեան՝ բնութեան ու հասարակութեան օրինաչափութիւնների իմացութիւնը, այնքան ճշգրիտ է կանխատեսումը: Իրականութեան իմացութեամբ կանխատեսւում են յաղթանակներ եւ պարտութիւններ, վերելք եւ անկում, պատերազմ եւ խաղաղութիւն, փոթորիկ եւ անամպ երկինք, յեղափոխութիւն, յեղաշրջում, հասարակարգի փոփոխութիւն... Իրականութեան մեծ իմացութեամբ կանխատեսումները դառնում են մարգարէութիւններ, կանխատեսողները՝ մարգարէներ: Մարգարէութիւններով ու մարգարէներով համեմուած մարդկային կեանքը դառնում է հետաքրքիր, բազմաբովանդակ, հարուստ, մարդկային կեանքն, ուղղակի, թրթռում է պօէզիայով, գեղեցիկի ընկալումով, բարոյականութեամբ, նպատակի որոշակիութեամբ: Կանխատեսումը թէ գիտութիւն է եւ թէ արուեստ: Նա չի հրամայում, չի թելադրում, չի վճռում, չի պարտադրում: Միայն ցուցանում է: Քոնն է ընտրութիւնը՝ յաղթել կամ պարտուել, վերելքին նպաստել կամ անկմանը, յեղափոխական շարքերն անցնել կամ վարագոյրի ետեւից ծիկրակել յեղաշրջման ընթացքին, պատերազմական կամ խաղաղասիրական կոչեր արտասանել, ծանրութեթեւ անել քանդուող եւ կառուցուող հասարակարգերի առաւելութիւններն ու թերութիւնները: Կանխատեսումը քեզ մասնակցի կարգավիճակ է պարգեւում: Եւ դու քեզ լիարժէք մարդ ես զգում: Թերեւս, քո մէջ կանխատեսման քնած շնորհք էլ է արթնանում:

Կանխորոշումը գործողութիւն է՝ հրամայող, թելադրող, վճռող, պարտադրող: Լաւագոյն դէպքում կանխորոշումը կանխատեսումն է ջանում կեանքի կոչել: Եթէ թերի է կանխատեսումը, թերի է եւ կանխորոշումը: Սխալ է կանխատեսումը, սխալ է եւ կանխորոշումը: Չկայ կանխատեսում, կանխորոշումն ինքն է դառնում դրութեան տէր՝ թէ գուշակում է եւ թէ վճռում:

Մեր երկրում, ցաւօք, դրութեան տէր է ահա այս տակի կանխորոշումը: Որովհետեւ՝ իսպառ բացակայում է կանխատեսումը: Եթէ նոյնիսկ մարգարէներ են շրջում Հայոց լեռներում եւ բանաստեղծներ (իսկ նրանք, իրօք, շրջում են, չեն կարող չշրջել), ապա նրանց ձայնը, խօսքը, շունչը զարկուելով հին ու նոր համակարգերի հին ու նոր պատերին, չեն հասնում կանխորոշողին: Եւ կանխորոշումն աստիճանաբար վերածւում է չարիքի:

Ամենայն բան կանխորոշուած է մեր երկրում. կանխաւ գիտենք, թէ ով է յաղթելու այս կամ այն ընտրութեանը, ով է շահելու այս կամ այն մրցոյթում, այս կամ այն աճուրդում: Եթէ, երբեմն, շեղումներ են լինում, ապա շատ շուտով պարզւում է, որ դրանք էլ են եղել կանխորոշուած: Կանխորոշւում են նոր կուսակցութիւնների ստեղծումը եւ որոշ հների թուլացումը: Կանխորոշւում են օրէնքների նախագծերը եւ դրանց քուէարկութիւնը, կանխորոշւում են ծառահատումները եւ անտառահատուածների զաւթումները: Կանխորոշւում են առանց այն էլ խճողուած մայրաքաղաքում միաժամանակեայ շինարարութեան աննախադէպ այս շփոթը, Երեւանի նոր տեսքը, մեր երկրի տնտեսական զարգացման ուղղութիւնը, Սեւանայ լճի մակարդակի բարձրացումն ու իջեցումը, քամիների ուժգնութիւնը, տեղումների քանակը, գիտութեանն ու մշակոյթին յատկացուող գումարները, տարբեր ոլորտներում բարեփոխումների տեսակն ու ծաւալը, եւ այլն, եւ այլն...

Խորհրդային տարիներից մի անեկդոտ է հասել մեր օրերը. պատմութիւն առարկայից քննուող երկու դիմորդներից մէկը պիտի ընդունուի համալսարան (կանխորոշուած է), իսկ միւսը՝ ոչ, որովհետեւ երկու տեղ չկայ: Նրան, ով պիտի ընդունուի, դասախօսը հարցնում է.

- Երիտասարդ, գիտես, չէ՞, որ Հայրենական պատերազմը սկսուել է 1941 թուականի յունիսի 21-ի լոյս 22-ի գիշերը:
- Այո,- պատասխանում է դիմորդը:
- Ապրես,- ասում է դասախօսը,- իսկ գիտես, չէ՞, որ այդ պատերազմի ընթացքում Խորհրդային Միութիւնը կորցրեց 20 միլիոն մարդ:
- Այո,- պատասխանում է դիմորդը:
- Ապրես,- ասում է դասախօսը:- Գերազանց:

Միւսին, որը պիտի չընդունուի (կանխորոշուած է), դասախօսը հարցնում է.

- Ասացէք, խնդրեմ, ե՞րբ է սկսուել Հայրենական մեծ պատերազմը:
- 1941 թուականի յունիսի 21-ի լոյս 22-ի գիշերը,- պատասխանում է դիմորդը:
- Իսկ գիտե՞ս, թէ քանի զոհ է տուել այդ պատերազմում Խորհրդային Միութիւնը:
- Քսան միլիոն,- պատասխանում է դիմորդը:
- Իսկ հիմա, սիրելիս,- ասում է դասախօսը,- այբբենական հերթականութեամբ թուարկիր բոլոր զոհերի անուն-ազգանունները:

Զաւե՞շտ է: Լսողներիս համար, թերեւս, բայց ոչ երբեք՝ դիմորդի: Իսկ երբ բոլորս ենք դառնում դիմորդ, զաւեշտը չի ցնդում որպէս վաղորդեան ցող, այլ վերածւում է անզօր ատամկրճտոցի:

Եւ այս դէպքում, առանց Հայոց լեռներում շրջող մարգարէների ու բանաստեղծների կանխատեսութեան էլ պարզ է, որ մենք դեռ երկար ժամանակ յանգերգելու ենք Քերթողահօր տխուր ողբը:

Ռուբէն ՅՈՎՍԷՓԵԱՆ

Հ. Յ. Դաշնակցութեան քննական պատմութիւն

Գէորգ Խուդինեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն. ակունքներից մինչեւ 1895 թուականի վերջերը, Հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, Երեւան, 2006, 440 էջ:



Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անցած պատմական ուղին եւ յատկապէս նրա ակունքների, ձեւաւորման գործընթացի, գործունէութեան վաղ շրջանի ու գաղափարախօսութեան հանդէպ միշտ էլ ուշադիր, բայց խիստ շահախնդիր վերաբերմունք են դրսեւորել հայ պատմագիտութիւնը եւ հայ հասարակական-քաղաքական միտքն ընդհանրապէս: Իր ուսումնասիրութիւնների արդիւնքում այս եզրահանգման է եկել պատմագիտութեան դոկտոր Գէորգ Խուդինեանը: Նրա՝ «Հ. Յ. Դաշնակցութեան քննական պատմութիւն. ակունքներից մինչեւ 1895 թուականի վերջերը» գիրքը, որ տպագրուել է ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի գիտական խորհրդի երաշխաւորութեամբ, առաջին հայեացքից, թւում է, շատ կարճ մի ժամանակահատուած է ներառում իր մէջ: Բայց հէնց այդ կարճ ժամանակահատուածի քննական իմացութիւնն է, որ թոյլ է տալիս ճիշտ հասկանալու ինչպէս հայ ազգային-ազատագրական շարժման երկու՝ մինչկուսակցական ու կուսակցական շրջափուլերի միջեւ յստակ ժառանգորդականութիւնը, այնպէս էլ Հայոց պետականութեան ձեւաւորման գաղափարա-քաղաքական նախադրեալների ու պայմանների հասունացումը 20-րդ դարասկզբին:

Հեղինակը գրքի ծաւալուն առաջաբանում նաեւ անդրադառնում է ՀՅԴ պատմութիւնը ահաբեկչութեան ու ծայրայեղականութեան արդի դրսեւորումների հետ կապելու որոշ հայ հեղինակների ու հայատառ պարբերականների անպտուղ ջանքերին, որոնք Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացի ծաւալմանը զուգընթաց կորցնում են իրենց քաղաքական ենթահողը:

Մենագրութեան մի առանձնայատկութիւնն էլ այն է, որ ՀՅԴ համահայկական կառոյցի կազմաւորման վաղ շրջանի մանրակրկիտ ուսումնասիրութեան արդիւնքում ի յայտ են գալիս մեծ թուով անյայտ գործիչներ ու դէմքեր, որոնց գործունէութեան հետ կապուած մի շարք մանրամասներ դեռ հետազօտութեան ու գնահատման կարիք ունեն:

Դրօ

Համլէտ Գէորգեան, Դրօ, Դրաստամատ Կանայեանի կեանքն ու գործունէութիւնը, «Լուսակն» հրատարակչութիւն, Երեւան, 2007, 670 էջ:



Հեղինակը՝ Համլէտ Գէորգեանը, փաստում է, որ մինչեւ անցեալ դարի 90-ական թուականները, չնայած իրենց բացառիկ ծառայութիւններին, հայութեան գոյապայքարում եւ ազատագրուած հայրենիքի պետական շինարարութեան մէջ ունեցած վճռորոշ եւ անգնահատելի դերին, մեր Ազատամարտի անպարտելի ռազմիկներից շատերի, այդ թւում եւ Դրոյի կեանքն ու գործունէութիւնը ըստ արժանւոյն ուսումնասիրուած չէր:

1991-ից սկսած այդ բացը լրացնելու փորձեր, ճիշտ է, արուել են, բայց դեռ անհրաժեշտ է, որ հայրենական պատմագիտութիւնն իր անկողմնակալ ու գիտական խօսքն ասի անցեալ դարասկզբի եւ, մասնաւորապէս, Հայաստանի Հանրապետութեան կերտման եւ այդ գործում հայ քաղաքական կուսակցութիւնների ու առանձին գործիչների դերի ու ծառայութիւնների գնահատման վերաբերեալ:

«Դրօ» ծաւալուն աշխատութեամբ, որ ըստ էութեան դեռեւս 1991-ին լոյս տեսած «Դրոն» եւ 1999 եւ 2000 թուականներին «Դրօ» վերնագրով վերահրատարակուած աշխատութեան առաւել ճշգրտուած եւ ամբողջականացուած վերահրատարակութիւնն է, հեղինակը արխիւային նորայայտ փաստաթղթերի, յուշագրութիւնների, վկայութիւնների ու արդէն հրապարակի վրայ գտնուող մի շարք աշխատութիւնների ուսումնասիրութեամբ փորձել է անաչառօրէն ներկայացնել եւ արժեւորել հայ ժողովրդի ազատագրութեան պայքարին նուիրուած ամենանշանաւոր հայորդիներից մէկի՝ Դրոյի (Դրաստամատ Կանայեան) կեանքն ու գործունէութիւնը, մի գործունէութիւն, որ մեծապէս պայմանաւորուած է մենագրութեան հերոսի հետեւեալ դատողութեամբ. «Ես ոչ մէկ ժողովրդի հանդէպ ատելութիւն չունեմ, բայց վայ այն ազգին, որ կը համարձակուի վատութիւն անել հայ ժողովրդին, նա լինի թուրք, ռուս կամ այլ ազգի, ես զէնք պիտի վերցնեմ նրա դէմ... »:

Ռուդոլֆ Խաչատրեան



Հիմա, երբ աւարտուել է Ռուդոլֆ Խաչատրեանի երկրային կեանքը եւ սկսուել նրա ժառանգութեան «գոյքագրումը», վերահմաստաւորումն ու վերարժեւորումը, անհրաժեշտ է յիշել նկարչի կայացման վկաների գնահատականները, որ մի-մի քար են, մի-մի դոյլ շաղախ՝ ապագայ պատուանդանի համար: Բազմաթիւ ու բազմազան են այդ գնահատականները եւ դրանց բոլորի նմանութիւնը մէկն է՝ գիտակցումը, որ առնչւում են մեծ, ինքնատիպ երեւոյթի հետ:

Ահա այդ գնահատականներից մէկը.

Իւրաքանչիւր իսկական արուեստագէտ գիտէ իր մասին ամենայն բան: Եւ այս իմացութիւնը սկսւում է շատ վաղ: Արուեստագէտն ինքն է հաստատում իր ճակատագիրը, մշտապէս զգում իր շարժումը:

Մեծ դերասաններին խաղալ, մեծ գրողներին գրել չեն սովորեցնում: Սովորեցնել բացայայտել՝ անհնար է: Իսկ Խաչատրեանը շարժւում է դէպի բացայայտում. ահա սա է նրա ճանապարհը:

Ի՜նչ երջանկութիւն է լինել ինքն իր հետ, ստեղծել սեփական վարպետութիւնը, պարզել, պարզել կեանքի գաղտնիքները, բայց եւ հասկանալ, որ ինչ-ինչ բանի չես հասնի երբեք:

Նրանք, ովքեր հաւատարիմ են իրենց, ով չի յոգնում բացայայտել այն, ինչ բնութիւնից դրուած է իր մէջ, նա յաջողում է:

Նայիր եւ կը տեսնես. ամէն ինչ ընթանում է այնպէս, ինչպէս դու էիր ծրագրել: Դու այդ ամէնը գիտէիր, երբ դեռեւս մանչուկ էիր:

Եւ յետագայում էլ կը լինի այնպէս, ինչպէս պէտք է: Դա ճանապարհ է: Պարզապէս հիմա դու ելել ես բարձունք եւ տեսնում ես հեռուն: Ընդամէնը սա է:

Միխայիլ Ռոշչին,
ռուս գրող





«ԴՐՕՇԱԿ»-ի պատկերասրահ